1879
200
387-ЧК

[illegible]

203
Կ-30
7 1465-Ակ

# ԳԻՐՔ ԱՂՕԹԻՑ

Ընտրեալ երանելւոյն Վարդանայ
սրբազան վարդապետի Բաղիշեց-
ւոյ, 'ի պէտս աղօթասիրաց

ՎԵՐՍՏԻՆ ՏՊԱԳՐԵԱԼ

'Ի կրկին Պատրիարքութեան Տ՟ն
Ստեփաննոսի ամենապատիւ և
վեհափառ Արքեպիսկոպոսի
Պրուսացւոյ։

1841 — ՌՄՂ

'Ի ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼԻՍ

ՅՕՐԹԱԳԻՒՂ

'Ի Տպարանի երից որդւոց Պօղոսի Արա-
պեան ապուչեխցւոյ։

7/XI-1922
ԹԵՍԱԿԱՆ-ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
19336
134

243

* Արթո՛ւն կացէք , և աղօ՛թս արարէք , զի մի՛ անկանիցիք ՚ի փորձութիւն ։

Մատթէոս՝ Գլուխ , ԻԶ , 41 ։

2004 200 387-44

# ՅԱՌԱՋԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Հոգւոյն առաւե՛լ գոլ քան զմարմին, ինքն Փրկիչն մեր անսուտ բանիւ իւրով վկայեաց. քանզի մարմինն ապականի, և հոգին մնայ անապական. մարմինն եղծանի, և հոգին կայ անեղծ՝ զի անեղծին այ է պատկեր և նմանութիւն. մարմինն մեռանի, և հոգին կենդանի մնայ. քանզի շո՛ւնչ է ածային, ըստ այնմ՝ * Փչեաց 'ի նա շունչ կենդանի, և եղև մարդն հոգի կենդանի||: Մարմինն է զգալական, և հոգին իմանալի. մարմինն մարմնոց անասնոց է կցորդ և հաւասար նոցա, իսկ հոգին իմանալի հոգեացն է հաղորդ, և նման նոցա. մարմինն դառնայ 'ի հող՝ ուստի առաւ, և հոգին երթայ առ ած՝ որ ետ զնա. ապա՝ հոգին ածատիպ նմանութի ունի յինքեան, և մտօք և կամօք և անմահութեամբ է պերճացեալ, և ենթակայ շնորհաց հոգւոյն սրբոյ. ուրեմն առաւե՛լ է հոգի քան զմարմին.

Ապա որոյ առաւե՛լ պարտիմք հոգալ

եւ փոյթեռանդն կանխել ՚ի գրչութեան
հոգւոյ մերոյ աշալուրջ արթնութբ̅ ․
զի մ՛ անձանձրացեալք ՚ի գործութբ̅ թշնամ-
ւոյն, որ իբրեւ զառիւծ գոչէ, շրջի
եւ խնդրէ թէ՝ զո՛ կլանիցէ ։

Ապաքէն բազմադէմ զգուշութեան
պէտս ունիմք զհոգւոյ մերոյ, եւ խնամս
տանել նմա՝ առաւել քան զմարմնոյ, զի
յանեզրական փառաց մ՛ զրկեսցիմք՝ եւ
յերանութենէն աստուծոյ ։

Յայս իսկ հայեցեալ, եւ ջերմեռանդն
սրտիւ փափաքեալ, ցանկացաք արդարեւ
հոգւով շատ զաղօթից ինչ գրքոյկ մի ՚ի
ձեռս բերել, եւ աղօթասիրաց ազգիս
մերայնեաց մատուցանել պարգեւութբ̅ ․
որպէս զի յաղօթից նոցա եւ մեզ մասն հան
ցէ բարերարին՝ յօգուտ հոգւոյ մերոյ ։

Իսկ մինչ ՚ի ձեռս բերաք զաղօթիցս
գրքոյկ (զարարեալն երանելւոյն Վար-
դանայ վարդապետի բազմերջանկոյ, որբա
կրօն վարժապետի Գրիգորի եւ Յօհաննու
Երզնկոյ որբազան պատրիարգայն որբոյ
Երուսաղէմ, եւ Կոստանդնուպօլսոյ, որոյ
եւ հրամանաւ տպեալ իսկ էր ՚ի թուին

հայոց՝ ուռնից , ) 'ի չորսին գաւառա-
նայս խնդրեցի տալ տպել. որպէս զի յա-
ջողել նոցա՝ վերստին և ուղղային մտօք ,
և յանխնեալն հոգւով 'ի տնօրինական
տեղիս յի̅ ք̅ի̅ փրկչին մերոյ՝ որ 'ի մէջ
Երուսաղէմ . և որպէս թէ 'ի ներքնայու-
թեան անդ ա̅յ մասունցեն զաղթից իւր-
եանց զքրիստոնէականն նուէրսն , և ըն-
կալցին յա̅յ զհայցուածս որպէս . որ ըստ
է աղօթից և կատարեալ խնդրուածոյ՝ որք
մանկամբ ուրբ որպէս՝ խոնարհ հոգւով
և յաւալ խորհրդով մատչեն առ ինքն:
Նա ջանայ արժանայն աղօթք՝ որ 'ի
այն , են մատոյ վերստամբ և թեւօք հոգ-
ւոյն 'ի տնօրինական տեղեաց կատարելի-
զի ասէ մարգարէն , * Հաստեալ կային
ոտք մեր 'ի դրունս քո Երուսաղէմ . և
քեզ վայելէ օրհնութիւն Ա̅ծ 'ի Սիօն ,
և քեզ մատուսցին աղօթք յԵրուսաղէմ||:
Ուստի եթէ յամենայն ուրեք քրիստ-
ոնէական աղօթքեն հաճելի յայս ա̅յ.
ապա՝ յԵրուսաղէմ , որ քաղաք է ամենա-
մեծ արքային՝ և տեղի տնօրինական մարմ-
նաւորին փրկագործութե̅ն նորա , առաւել

հաճելի լինի ամենասուրբ կամաց նորա։

Արդեամբ՝ որք ընթեռնուն զսա՝ և զաշխօլն աստ֊ծ վերստացեն, կանխեսցեն հասցեն մտօք յերկնաւորն ՚ի քաղաքն, և շրջեսցին անքայլ ոտիւք, և նկատեսցեն հոգւոյ աչօք զամենայն տնօրինական տեղին, և ընկալցին աներկբայութեամբ զհայցուածոց իւրեանց և զխնդրուածոյն սրտից զկատարումն։

Նաև մեք՝ որք կարգեալ եմք հոգեկան բժշկել, և լսեմք զխոստովանութիւն, փոյթ յանցէին կալցուք զսա մերոյս հոգւոր պաշտաման հարկաւորութե՝ ընծայել աշգեաց զսա յըզգուշութիւն. արթուն կալ, հսկել, և աղօթս առնել յամենայն ժամ, շահկանել ՚ի վաճառ ինչ փորձութեանց զսա հոգւոյ և զսա մարմնոյ։

Նա աղաչեմք յՏր՟ Քս՟, որպէս մեծաընկալչաց զսա, և ընթեռնուլ ոտէք, և ուղղութեամբ ՚ի մեզ առնուլ, և զախործանական քաղցրութիւն սորա վայելել ՚ի հոգեղէն քեմս կենանալիս։

Նա անշուշտ յուսով վստահեմ յաճն Բուռբերդ, զի յընտրունել չէր զսա՝ գրա-

նել ըզթողութեանն մեղաց և քաւու-
թեանն յանցանաց ՚ի մարդասիրէն այ ըզ
շնորհս, և զառատ ողորմութեան նորա
զձրիաբաշխ պարգեւսն՝ յանվախճան կե-
նացն երանականաց ՚ի ժառանգութիւն:

Արդէօ զի և ձերդ աղօթից օժան-
դակութէ մասնաւորակից գոյք և իմ
անարժանութեան ընդ ձեզ. որ բանի-
ւ արդեամբ և սիրոյն հաստատութեամբ
քանոյցայ արձան յաւիտենական կանգնել
զոսա՝ յօգուտ հոգւոյ մերայնեաց բո-
րից, և իմ նուաստութեան. ողջ լե-
րուք ՚ի տէր:

Յի Քի ծառայ մահտեսի
տէր Առաքել քահանայ
մայր եկեղեցւոյ:

Յառաջաբանութիւն նախկին տպագրութեան՝ որ առ աղօթասէր ընթերցողս.

Ըստ սրբազան առաքելոյն՝ անօթոյն ընտրութեան՝ և հօրն հեթանոսաց՝ երանելւոյն պօղոսի, որպէս յաղօթս կամքն՝ ոչ գիտեմք. բայց հոգին ինքն բարեխօս լինի ՚ի հեծութիւնս անմռունչս, ուսուցանելով զկերպ և զեղանակ աղօթելոյն։

Իսկ աղօթքն՝ է դարձումն մտաց առ աստուած՝ ինքն և խոնարհ յօժարութեամբ. և կամ թէ՝ պատկանաւոր իրաց հայցումն յաստուծոյ։

Եւ ըստ սրբոյն դիոնէսիոսի, աղօթքն՝ է որպէս բազմալոյս լար յերկնից ծայրութենէն կախեալ մինչ ցվայր, որ զաստուած ընդ մեզ՝ և զմեզ ընդ աստուծոյ միաւորէ։

Իսկ թէ որպէս միտք մեր դառնալ պարտի առ աստուած. հոգին ինքն ուսուցանէ զդարձումն. խոտելի՛ զաշխարհս ցուցանելով, և վերջին վախ-

ձան՝ և ա՟մ բարեաց շտեմարան զա՟ծ մեզ յայտնելով:

Քանզի ա՟ծ է ծով՝ և աղբիւր ա՟մ բարեաց, առանց որոյ ո՛չ ոք կարէ լինել բարի. ո՛չ արդար՝ և ո՛չ առաքինի:

Իսկ թէ՝ զի՞նչ պարտիցեմք խնդրել յա՟յ, երկրորդ սահմանն աղօթից յայտ առնէ. այսինքն՝ զպատկանաւորս, որք ա՟յ տալ պատշաճին՝ և մեզ են օգտակարք:

Իսկ թէ զպատկանաւորս յաստուծոյ խնդրելով զի՞նչ լինելոց իցեմք՝ յայտ առնէ ս՟բն դիոնէսիոս, թէ ՚ի ձեռն ընկալեալ բարեաց՝ զա՟ծ ընդ մեզ, և զմեզ ընդ ա՟յ միաւորեմք. որ է լրումն ա՟մ բաղձանաց:

Բայց թէ ո՛ւրանօր լիցի աղօթելի. ծանուցանեն մեզ սրբազան մարգարէքն. ահա դաւիթ տեղի աղօթից՝ ցուցանէ զս՟բն երուսաղէմ. ըստ այնմ՝ քե՛զ վայելէ ա՟ծ օրհնութիւն ՚ի սիոն, և քեզ մատուսցին աղօթք յերուսաղէմ:

Սամարացիքն տեղի աղօթից կարծէին զլեառն սօմօրօն · որպ̃ ասէր կինն սամարացի առ Քս̃ , թէ հարքն մեր 'ի լերինս երկիրպագին ։

Իսկ փրկիչն մեր զա̃մ տեղիս ասէ՝ տեղի աղօթից · միայն թէ՝ հոգւով և ճշմարտութե̃ լինիցի , զի ուրանօր յիշի՝ անդ է աստուած ։

Սակայն առաւելապէս ընդունելի լինի ջերմեռանդական աղօթքն՝ որ կատարի 'ի սուրբ տնօրինական տեղիսն ։

Քանզի մոգքն պատարագ ընդունելի զաղօթս իւրեանց մատուցանելով՝ եղեն արժանի զՔս̃ տեսանելոյ · զի մինչ հեռաւորքն էին՝ զաստղն տեսանէին , և մինչ մերձեցան՝ զՔս̃ տեսին ։

Զաքարիաս քահանայապետն 'ի տաճարին աղօթելով՝ ընկալաւ զաւետիս յղութեն յեղիսաբեթէ սքանչելոյն յօհաննու ։

Յովակիմ 'ի լեառն ձիթենեաց աղօթելով՝ պտղաբերեաց զօրհնեալն

յա՛մ աղգաց զա՛ծածինն մարիամ։

Մարգարէն դանիէլ ՚ի բաբիլօն աղօթէր՝ ասելով , արդ՝ լցէ՛ թէ յաւելից հայիլ ՚ի տաճար ո՛ր քո ։

Այսպէս և երանելի Թագաւորն եզեկիա՝ մինչ զգուժ մահուան իւրոյ ընկալաւ յեսայեայ մարգարէէն , դարձոյց զերեսս իւր յորմն տաճարին . և այնպէս աղօթելով յաւել ՚ի կեանս իւր զժե՟ տարի ։

Այսպէս գրեթէ ա՛մ որք և սիրելիք այ՝ ցանկային զաղօթս իւրեանց յերուսաղէմ նուիրել այ ։

Պատարագն աբրահամու ՚ի վր̃ ո՛ր գողգոթային՝ հաճելի եղև այ ։

Յակոբ նահապետն ընտանեօքն հանդերձ ել ՚ի բեթէլ . այսինքն՝ ՚ի տունն այ , որ է սուրբ երուսաղէմ ։

Իսկ թէ այնոքիկ՝ որք ՚ի ներքոյ ըստուերի օրինաց գոլով զաղօթս իւրեանց ցանկային յերուսաղէմ նուիրել այ , մի թէ ՚ի գալ ճշմարտի օրինադրին մերոյ յի քի , խափանեցաւ արդեօք աղօթելն յերուսաղէմ .

քաւ լիցի։

Ինքն փրկիչն մեր զկնի մկրտուե՟՝ զլեառն փորձութե՟ ուրար տեղի աղօթից, այսպէս և զլեառն ձիթենեաց. զի մինչ աւետարանիչն գրէ՝ թէ ելանէր 'ի լեառն կալ յաղօթս, և ընդ առաւօտն գայր 'ի տաճարն քարոզել. լերամբն ծանուցանէ ըզլեառն ձիթենեաց, յորմէ և զկնի կատարման ամենից անօրէնութե՟ց՝ համբարձաւ. որովք ծանոյց մեզ թէ՝ նախ պա՛րտ է ելանել 'ի կատարն ա՟մ առաքինութե՟ց, և ապա ելանել յերկինս։

Այսպէս և ա՟մ առաքեալքն զաղօթս իւրեանց ցանկային յերուսաղէմ նուիրել աստուծոյ։

Պօղոս յա՟մ ամի՝ զաւուրսն պէնկոստէից ցանկայր կատարել յերուսաղէմ։

Առաքեալքն ա՟մ 'ի ս՟բն սիօն աղօթելով՝ ընկալան զհոգին սուրբ։

Փրկիչն մեր ը՟ աղօթելն 'ի լեառն Թափօրական՝ պայծառակերպեցաւ,

ցուցանելով զփառս երանելեաց՝ զոր ժառանգելոցն են յերկինս ։

Ի վերայ սուրբ գողգոթային, քն̃ բեւեռեալ ՚ի խաչին, անդանօր աղօթելով՝ զհոգին աւանդեաց ՚ի ձեռն հօր ա̃յ ։ և միջնորդութ̃բ հոգւոյն իւրոյ աւանդման՝ յանձնեաց զա̃մ հոգիս ո̃րք ՚ի ձեռն հօր ամենակալի ։ և կատարեցաւ մարգարէութի̃ն սողոմոնի՝ թէ հոգիք արդարոց ՚ի ձեռին ա̃յ են, և ոչ մերձեսցի առ նոսա մահ ։

Ներքինին կանդակայ տիկնոջն եթեովպացւոյ՝ յերուսաղէմ եկն աղօթել ։ և ՚ի ձեռն աղօթից արժանի եղև վերստին ծննդե̃ն ՚ի փիլիպպոսէ առաքելոյ, և առնլոյ զհոգին սբ̃ ։

Ոչ ինչ ասելի է և վն̃ տիրամայր սբ̃ ա̃ծածնին, որ մինչ փոխելոցն էր յաշխարհէ՝ յա̃մ անօրինական տեղիս որդւոյն իւրոյ միածնի գնայր՝ կատարել զուխտ իւր, և զաղօթս նուիրել աստուծոյ ։

Յորմէ ա̃մ ազգք քրիստոնէից աւեալ զօրինակ՝ ՚ի գնալն ՚ի սբ̃ ե-

րուսաղէմ , ցանկան աղօթել յամ
սուրբ տնօրինական տեղիսն քրի աս-
տուծոյ մերոյ ։

Արդ՝ զայսքան և զայլ անթուելի
շնորհս սբ տեղեացն քրի տեսանելով
սբ և երջանիկ վարդապետն եկեղեց
ւոյ երանելին Վարդան բաղիշեցի ,
զկերպ և զեղանակ աղօթելոյն 'ի սբ
տեղիսն կամելով ուսուցանել ազգիս
Հայոց , ըստ տեառնապարգև իմաս-
տութե իւրոյ՝ արար զգիրքս աղօ-
թից · զի ջերմեռանդ ուխտաւորքն
գնալով 'ի սբ տնօրինական տեղիսն
քրի այ , գիտասցեն թէ՝ որպ աղօ-
թելոց իցեն ըստ յատկութե իւրա-
քանչիւր սբ տեղեաց , և միջնոր-
դութբ աղօթիցն ընդունիլ զհայց-
ուածս սրտից ։

Ուրեմն և մեր տեսեալ զօգտա-
կարութի ջերմեռանդական կերպի
աղօթիցս՝ կամեցաք հրաման տալ ,
զի տպիցի 'ի փառս այ , և 'ի պատիւ
սբց տեղեացն քրի այ մերոյ · զի թե-
րևս միջնորդութբ իւրաքանչիւր

աղօթօղացն 'ի ս՟բ տեղիսն՝ և մեղ լեցի մասն բարեացս, առ 'ի բուժել աղօթիւք ջերմեռանդեցն յախտից հոգեկանաց և մարմնականաց։

Աւրեմն պարտիք սիրով ընդունել զայս աղօթարան գրքոյկս 'ի փառս ա՟յ՝ և յօգուտ հոգւոց ձերոց՝ ով սիրելի հայկազնեայք մեր յաբեթական տոհմին շառաւիղք. և յիշել զբազմավէր հոգեկս մեր յա՟մ սուրբ տեղիսն՝ մինչ աղօթէքն ջերմեռանդօրէն, ոչ զանց առնելով զխնդիրն մեր. ողջ լերուք 'ի պարծանս նուաստ ծառայիցդ ա՟յ ծառայից, գրիգորի և յովհաննու այցելուացս ս՟բ տեղեացն ք՟ի, և անարժան պատրիարգացս ս՟բ երուսաղեմի և կոստանդնուպօլսոյ. որ հրաման տուաք՝ զի տպեսցի աղօթարան գրքոյկս. 'ի թուաբերութե՟ փրկչին մերոյ յի ք՟ի՝ հազար եօթն հարիւր երեսուն և չորս. և 'ի մերս հայոց՝ հազար հարիւր ութսուն երեքին, 'ի յօգոստոսի ամսոյ քսան և վեց։




Դու ախտացեալդ բազմա մեղ,
խնդրեա՛ հոգւոյդ փրկութեան դեղ.
թէ աստ լացցես արտասուս հեղ,
անդ ցնծասցես փառօք շքեղ։

Աղօթք · առ ՚ի խոստովանելիս աւետման և յղութեան սրբուհւոյ աստուածածնին՝ որ ՚ի Նազարէթ · ՚ի խորոց սրտէ վարդանոյ և ամենայն մեղաւորաց ։

## ԳԼ · Ա.

Ծագումն անիմանալի և անհետազօտելի՝ անհասանելի և անճառելի՝ յէութենէ հօր յս̃ քս̃, խոր̃հուրդ և միտք և բան ա̃յ կենդանւոյ, անմիջոց և անախտ ծնունդ ՚ի սրտէ նր̃ · աչաւոր սերովբէից՝ որ վ̃ն մեր նուաստացար քո կամաւ, և զմեր աղքատութե̃ հնութ̃իս նորոգեալ փարթամացուցեր, և քոյով կենսաբեր վշտօք և նախատանաց մահուամբ հրաւիրեցեր ՚ի

գերակայ բարձրութիւն քո զազգս մարդկան ։

Բայց թշնամին կենաց մերոց և Ածութն քոյ՝ դարձուցանէ զմեզ ընդ կրունկն յետս կայս յօրինաց և՛ի խոստմանց քոց՝ տուեալ իմ յու ։

Յաղագս որոյ յիշեցի զօր ահագին ատենի քոյ, և սկսայ քննել և խոկալ զանեղծական կայտս ամբարշտութն իմոյ՝ որ է յարաբարդեալ և անկշռելի ծանրութբ լեառնացեալ 'ի վր պարանոցի և գլխոյ հոգւոյս իմոյ 'ի ժամանակս երիտասարդութն, որ է ժամ քաջապտղութն․ և ես տարտամ և հեղգ և վայրաքարշ մարմնով և յամ ժամ հակառակ զինեալ ընդ դէմ հոգւոյս ։

Ան որոյ և սրտաբեկեալ յուսահատեցայ, զի ոչ ժամանեցի մաքին ապաշխարութեն, որով բաղումք ապրեցան 'ի մշտնջենաւոր տանջանացն ։

Նաև ապա յետ այսքան ողնակոտոր լքմանս՝ որով լուծեալ խախտեցայ երկմտութբ․ դարձեալ ածի զմտաւ

զանոխակալութ̃ի քո՝ մարդասէր , որով յաղթեցար , և խոնարհեցար քո կամաւ և հօր առաքմամբ՝ առեր զծառայի կերպարանս , և աղքատացար վ̃ն մերոյ յանցանաց , և յաղագս այսորիկ սակաւ մի պնդեալ վերականգնեցայց յուսով քո , և ա՛յլ ինչ ո՛չ կարացի գտանել հնար՝ կամ շաւիղ փրկութեան իմոյ ․ բայց միայն զայս առեալ՝ բարձի անձամբ իմով զանթիւ զուտղակոյտ և զբեռնացեալ թարախածոր չար և անօրէն ամբարշտութ̃իս իմ ․ և եկեալ հասի յերուսաղէմ , ուր կշռեցաւ 'ի խաչին ն̃ր արեամբ քո՝ մեղք ամենայն աշխարհի ։

Ուր կապեցաւ սատանայ անլուծանելի , և ուր կոխեցան գարշապարաւ քով մ̃ծ դևքն և յանցաւորքն ազգի մարդկան՝ ա՛ստուած իմ յ̃ս ք̃ս , և ուր ջնջեցան մեղքն ադամայ՝ և արձակեցան կալանաւորքն ընդ նմա ։

Որ̃պ զի շրջեցայց 'ի տեղիս հրա-

չիցն քոց՝ զորս կատարեցեր մարդե-
գութե՛ քո՝ յա՛ ած իմ. և անդէն յի-
շեցի հեծեծանօք և հառաչանօք սըր-
տի իմոյ զչար գործս իմ, բարեխօս
ունելով առ քեզ զկամաւոր խոնար-
հութի՛ և զնեղութի՛ և զվիշտս քո՝
զորս կրեցեր վն իմ. որպէ զի շնորհ.ք
և ողորմութի՛ քո՝ առ սակաւ սակաւ
թեթևացուսցէ զանեզրական ամբա-
րըշտութիւնս իմ։

Ես զառաջինն ոչ գիտէի թէ՝
ո՞ւր խնդրեցից, կամ ո՞ւր գտից զան-
պարագրելիդ, մինչև հին մարգարէ-
ութի՛ ժամանեաց առ իս՝ և ետ ինձ
խրատ, ասելով. թէ յոյսն քո՝ որում
դու սպասես խանդաղակաթ սիրով՝
նազովրեցի կոչեսցի. և այսպ յորու-
ցեալ նաւոյ 'ի թիւս հոգւոց, և արա-
գութե՛ եկեալ հասի 'ի նազարէթ
հոգւով իմով յառաջին հայրենիսն
քո ըստ մարմնոյ. և անդէն գտի զքեզ
բնակեալ յղութե՛ 'ի լուսաթաղանթ
արգանդի մօրն քո և միշտ կուսին
մարիամու։

Իջեալ յերկնից աւետեօք հրեշտակապետին՝ զկենաց աւետիք մօրն քո միշտ կուսի մատուցեալ, որ էր ադամայ և ծննդոց նորա. որով ազատեցան ազգք մարդկան յանիծից նորա։

Վս̃ որոյ և ես եղկելի անձամբ իմով ստացուած իմ յս̃, 'ի նազարէթ անկեալ առաջի քո երկրպագութե̃՝ հող լիզեմ, և հառաչանօք գոչեմ առ քեզ 'ի խորոց սրտէ իմմէ, և հեծեծանօք աղաչեմ զքեզ՝ ստացուած իմ յս̃. փրկեա զանձն իմ 'ի յղութե̃ չար և անօրէն խորհրդոց մեղաց, 'ի սերմանէ որոմանց չար դիւացն՝ զոր անդադար սերմանեն 'ի հոգիս իմ 'ի տուէ և 'ի գիշերի, և յղացո՛ զմիտս և զհոգիս իմ սիրով քո և երկիւղիւ. որպ̃ զի դողացայց 'ի սպառնալեաց դժոխոց, և կատարեցից զկամս քո բարի գործովք, և շնորհօք քո ծնայց զզաւակն օրհնութե̃ 'ի փրկութիւն հոգւոյս իմոյ։

Վս̃ այսորիկ պաղատիմ առ քեզ՝

հին աւուրց ա՟ծ , որ ժողովեցար 'ի մ՟ր արգանդին մարիամու , զոր ո՛չ բաւեն տանել երկինք . ջնջեա՛ զչար ծնունդս և զզաւակսն՝ զորս անօրէնութե՟ յղացայ 'ի չար դիւացն , և ծնայ զմեղս՝ որ է զաւակ կորստեան , և շնորհօք քո տո՛ւր ինձ զկենաց և զաւետեաց ողջոյնն՝ որով յղացայց և ծնայց զգործս բարեաց , որ է զաւակ արու և որդի մխիթարութե՟ . և արա՛ յիս նշան բարուե՟ , և ողորմութե՟ քով՝ ա՛ստուած իմ յ՟ս ք՟ս , զա՟մ չար սերմն պիղծ դիւացն վիժեա՛՝ և ծորեալ հա՛ն յարգանդէ հոգւոյս իմոյ , և մի՛ տար թոյլ կենդանանալ և գալ 'ի ծնունդ զաւակացն դիւասերմանց 'ի կորուստ անձին իմոյ :

Մ.ՅՆ՝ զբարի սերմն օրհնաց և հրամանաց քոց սաղմնաւորեա՛ և կենդանացո՛ յարգանդ հոգւոյս իմոյ , և ա՛ծ 'ի կատարումն ծննդեան՝ բարեգործութե՟ 'ի կամս քո՝ ա՛ստուած իմ յ՟ս . որ վասն իմ ժողովեցար 'ի նեղ

և 'ի լուսաթաղանթ յարգանդին մարիամու , և խոնարհութբ քով ջնջեա՛ զամ՟ չար և զանօրէն գործս իմ, որ նեխեցան և փտեցան 'ի հոգւս իմ. և յուսով քո հաստատեա՛ զիս 'ի սէր քո , և 'ի սիրոյ կենցաղոյս և 'ի ցանկութէ մարմնոյս և'ի կամաց մտացս խաղաղութբ զերծո՛ զիս` ա՛ստուած իմ յո՟ քո՟ . և լցո՛ զսիրտ իմ երկիւղիւ քով` որ է սերմն բարի . ոպ՟ զի հոգւոյս իմոյ ակամբ տեսից զքեզ առաջի իմ յամ՟ժամ. և քեզ փառք և օրհնութի յաւիտեանս . ամէն .

---

'Ի մտանելն 'ի տուն զաքարիայի , և 'ի տալն ողջոյն եղիսաբեթի .

## ԳԼ. Բ.

Տէ՛ր ա՟ծ իմ յս՟քս՟` որ բանիւ քով բարձեալ ունիս և խնամես զարարածս ամ՟. և մէջօք կուսին մա-

րիամու բարձեալ եկիր յողջոյն եղի-
սաբեթի 'ի քաղաքն յուդայ 'ի տու-
նըն զաքարիայի ։

Յօրինակ՝ զի երթալոց էիր 'ի
գժոխս, և աւետիս նորոգման տա-
լոց էիր ադամայ և որոց ընդ նմա ․
և ընդ ձայնի ողջունի մօրն քոյ՝ ե-
մուտ շնորհք քո 'ի նեղ և 'ի գէձ
բանտին առ կարապետն քո յովհան-
նէս ․ և նա ետես զորէն ա՟ծդ յար-
գանդի բանտեալ՝ և զարհուրեցաւ ․
ներեցաւ տագնապեցաւ և ոչ կարէր
զերծիլ 'ի կապանացն ․ այլ՝ խաղալով
վազեաց և երկրպագեաց քեզ յորո-
վայնէ յորովայն, և անցաւ զեղաւ
շնորհք քո և եհաս յեղիսաբեթ ադ-
գական մօրն քո, և նա ետես և իմա-
ցաւ հոգւով քո զքեզ ծածկեալ 'ի
կոյս արգանդին մարիամու ․ զար-
մացաւ ընդ խոնարհութի քո, և օրհ-
նեաց զմայրն քո՝ որ բարձեալ ու-
նէր զոր ոչ կարեն բառնալ արա-
րածք զորէն ա՟ծդ ։

Վասն որոյ հաստատեցաւ կոյսն

’ի մեծութ͞ի քո՝ և յաւետիսն դար-
ձելի · զի վ͞ն այնորիկ եկն առ եղի-
սաբէթ, և ցնծացեալ ’ի ժամն յայն՝
ետես հոգւովն քով՝ մայրն քո զան-
ճառ պատիւն իւր · և գոչեաց թէ՝
օրհնեցեալ անձն իմ զտէր · զի ահա
յայսմհետէ երանիցեն ինձ ամենայն
ազգք, որ յերկրի և որ յերկինս · ո՞վ
և եղև իսկ և կատարեցաւ ։

Ճառագայթ բոլորից յ͞ն քո՝ որ
եկիր առ կարապետն քո յովհաննէս,
և զարթուցեր զնա երկիրպագել
քեզ ’ի նեղ բանտէն · առաքեա առ
եղկելիս զշնորհս քո՝ որ կամ նըստ-
եալ ’ի խաւարի որովայնի վիշապին,
որ է ախտ աշխարհիս և մարմնոյ · և
զարթո զհոգիս իմ՝ իմանալ և ճա-
նաչել զմեծութ͞ի քո և երկրպագել
քեզ անարատ սրտիւ · և որ զարթու-
ցեր զեղիսաբէթ և զմայր քո՝ իմա-
նալ զանբաւ զօրութիւն քո, բաց
զաչս հոգւոյ իմոյ՝ իմանալ զքեզ տ͞ր
և ա͞ծ ա͞մի, և առնել զկամս քո ’ի
նեղ բանտի մեղաց կենցաղոյս · և որ

զօրացուցեր զյովհաննէս լինել քեզ կարապետ յորովայնի մօրն՝ և՛ի յորդանան՝ և 'ի դժոխս ։

Ա՛̃ծ իմ Յ̃ի Ք̃ի՝ արիացո՛ զեղկելի լուծեալս՝ 'ի կամս քո ․ և շնորհեա՛ ինձ հաւատ յոյս և բան քարոզուե̃ և գործ բարի՝ ընդ նմին յովհաննու դաւանել զքեզ Ա̃ծ ճշմարիտ՝ հաւասար հօր և հոգւոյ , և քարոզել անահ և անամօթ առաջի աշխարհի զփառս քո և զբան հրամանի քո , և ակն ունել յուսով առ քեզ այժմ և յօրն ահագին ։

Վասն որոյ անձայն և անմռունչ հեծութե̃ գոչեմ առ քեզ՝ Ա̃ծ հայցն իմոց և իմ փրկիչ Յ̃ի Ք̃ի՝ խնայեա՛ յեղկելի յանձն իմ ողորմութե̃ քո , և փրկեա՛ զիս յաշխարհի չարէ , և անվնաս պահեա՛ զանձն իմ 'ի կամս քո ․ թո՛ղ զանեղրական անբարշտութիս , և սրբեա՛ զծովացեալ աղխնախառն շարաւս հոգւոյ իմոյ , և շիջո՛ զա̃մ հուր ցանկութե̃ շնակերպ դիւացն 'ի բոլոր անձնէ իմմէ , զսեր-

մին և զծնունդ չարեաց նշ՟ մաքրեա՛ 'ի հոգւոյ իմմէ՝ բարեխօսութ՟բ և աղաչանօք մօր քո միշտ կուսի, և սրբոյն յօհաննու կարապետին քո, և եղիսաբէթի՝ և ա՟մ սրբոց. և քեզ ընդ հօր և ընդ հոգւոյդ սրբոյ վայելէ փառք և օրհնութիւն, այժմ և միշտ և յաւիտեանս. ամէն։

Ի բեթղեհէմ 'ի յայրին առ մսուրն առաջի յ՟ն ք՟ն. 'ի խորոց սրտէ աղերս մաղթանաց փորձանաց և ա՟մ մեղաւորաց։

## Գ. Լ. Գ.

Ճառագայթ և կերպարան էութ՟ե ո՟յ հօր տէր յ՟ս ք՟ս, հրաշափառ զարմանագործ՝ յորմէ դողան սանդարամետք անդնդոց, և դու կամաւ վասն մեր ունայնացար՝ և ծածկեցեր զանբովանդակելի փառս քո։

Եւ արդ՝ ահա ես մոլար յիմարութեամբ խորագոյն թաղեցայ 'ի վիհս

տղմուտ անզերծանելի՝ և յայլ որոգայթից բանսարկուին. կաշկանդեալ պաշարեալ՝ կալան և կապեցին զեղկելի անձն իմ, և արջնազգեստ արարեալ՝ անբուժելի ներկեցին զիս ձանձախարիթուլք մեղաց, և յա՟մ մեղս շաղախել թաւալեցուցին զիս. որ և ա՟մ թափիչք երկրի բազում օճառօք ոչ կարեն սպիտակացուցանել զիս:

Վ՟ որոյ և ես անգիտացայ թէ՝ ընդ ո՞ր կամ ընդ ո՞ւր եղև փախըստական ա՟ծ իմ յա՟ քո՟. զի դեռ ես ՚ի ներքս յարգանդին մարմնոյ թողի զքեզ անտեսանելիդ երկնից՝ էնդ ա՟ծ. ապա ՚ի ձեռն աներկբայ յուսոյ քո կանգնեալ զօրացայ:

Նու խանդաղակաթ սիրով ջերմացեալ՝ ելի խնդրել զանըմբռնելիդ, և ոչ կարացի հետազօտել, թէ ո՞ւր իցես. զի դեռ ես ծածկեալ կայիր յարգանդի՝ ա՟ծ բոլորից. և տագնապէի նեղասրտեալ, և ցանկայի գտանել զձրի բժիշկդ. քանզի ե-

հեղձ զհոգիս իմ սերմն քաղդէա-
կան և որոմն դիւական . որք յանձն
իմ կային սաղմնաւեալ յղութե զա-
ւակքն դիւածինք կորստականք ,
մինչև եկն և ետ ինձ խրատ Եսայի-
աս , և ասաց . Թէ ով այր դու՝ կայն
ծնանիցի զկայն քո՝ զոր խնդրես
դու . և թէ դատանիցես զնա սիրով և
հաւատով՝ նա տացէ քեզ խուղ և
մեղր , զի պարարտասցի հոգի քո .
և ապա մեքիս կալաւ զձեռանէ իմ-
մէ , և ասէ . փութա՛ և եկ՝ զի ցու-
ցից քեզ զցանկալին քո . զի ՚ի բեթ-
ղեհեմ ելցէ իշխանն խաղաղութե ,
և ելք նորա ՚ի սկզբանէ :

Ընդ որոյ և ցնծացայ հոգւովս ,
և վաղվաղակի եկեալ ժամանեցի առ
քեզ ՚ի բեթղեհեմ . և հոգւոյ ակամբ
տեսի զանտեսդ ՚ի սրօբէից՝ ծնեալ
յայրիս , և եդեալ ՚ի մսուր անբանից
հացդ անմահութե . քանզի աւետիք
քո ՚ի կայն՝ եղև աւետիք թողութե
յանցանաց ևայի . և ՚ի ծնանիլն քո
յայրիս՝ ազատեցեր զնա ՚ի դատա-

պարտութե՛ մեղաց . և 'ի պատիժն քո
'ի խանձարուրս՝ արձակեցեր զադամ
և զեւա 'ի դառն կապանաց անիծից և
դժոխոց . իսկ աւետիք հովուացն՝
էր աւետիք փրկութե՛ ազգի մարդ-
կան . օրհնութի՛ հրեշտակացն և հով-
ուացն՝ եցոյց զհանդէս և զօրհնա-
բանութի՛ որ եկեղեցւոյ՝ և զհաշ-
տութի՛ հօր ընդ ազգս մարդկան .
իսկ անարատ հաւատ մոգուցն և
խորհրդական ընծայք նոցա՝ յայտ-
նեցին զուղիղ հաւատս որ եկեղեց-
ւոյ՝ և զբարի գործս նոցա :

Ո՛վ ամենախնամ և բազմագութ
ա՛ծ իմ յո՛ քո՛՝ բազմաթարախ և մեղ-
սամակարդ կորացեալ անձամբ իմով
անկեալ կամ առաջի քո յայրս և 'ի
մսուրս, ուր ծնար և եդար անտա-
նելիդ . և պաղատիմ առ քեզ երես
'ի գետին երկրպագութեամբ՝ հե-
ծեծանօք և անմռունչ հառաչանօք
սրտի իմոյ . շնորհօք քո սպան և ցա-
մաքեցո 'ի բոլոր անձնէ իմմէ զյղա-
ցուածն և զծնունդս ա՛մ չար ախտից

և մեղաց՝ զոր առնես դու , և շնորհեա՛ զթողութիւն և զծնունդ բարեաց և յուսոյ և զզղջման յամուլ արգանդ հոգւոյ իմոյ , որ սառնացաւ ՚ի շնչոյ չար և անօրէն աշխարհական վիշապին բելիարայ ։

Ա՟Ծ իմ՝ որ վասն իմ պատեցար ՚ի խանձարուրս , խզեա՛ պատառեա՛ ՚ի բոլոր անձնէ իմմէ զկապ և զպատանս ա՟մ մեղաց՝ զոր ընդեալ պատեցին զանձամբ իմով ա՟մ չար դեւքն առնակորկատ անօրէնութեամբ իւրեանց . և որ վ՟ն իմ եղար ՚ի մսուր անբանից՝ հա՛ցդ անմահութեան անեղանելիդ ա՟Ծ՝ յաղթեալ ՚ի սիրոյ քումմէ , ՚ի մսրոյ դիւացն և յա՟մ մեղաց արձակեա՛ զանձն իմ , և ՚ի բարեաց մսուր քո կապեա՛ զիս անզերծանելի ։ և որ կապեցեր արդեամբք զխորհուրդ և զանուն քո անուամբ բեթղէհէմի , և ՚ի նմա եղար ՚ի մսուր անբանից՝ հա՛ցդ անմահութեան , որ իջեր յերկնից , և լցեր զերկիր լուսով և գիտութեան հացիւ քո՝ ա՟Ծ իմ յա՟մ ,

խնդրող գերելոց՝ և հայր որբոց ,
լցո՛ զսովեալ և զպապաքեալ հոգիս իմ
կենդանի հացով և ջրով և լուսով
քո ։ և ջնջեա՛ զդառնահամ շարաւ-
կամակոր հոգւոյս իմոյ՝ փրկելով
զանձն իմ ՚ի չարիմաց նենգաւոր և
թաքուն հնարից անօրէն վիշապին ։
սիրով քո խնայեա՛ յիս՝ և արա՛ զիս
արժանի սրբութե՟ ճաշակել զա՟ծա-
ցեալ մարմնին քո ՚ի հաճոյս քո՝ նախ-
քան զմահն և յօրն մահուն իմոյ՝ ա-
ռանց կեղակարծ երկմտի և խորին
քննութե՟ ։ անարատ պահեա՛ զհա-
ւատս իմ՝ որ ՚ի քեզ իբրև զմոգուցն ։

Ա՟Ծ իմ յ՟ս ք՟ս՝ ողորմութե՟ քո
շնորհեա՛ ինձ հաւատ յոյս՝ և մեռե-
լութի՟ ա՟մ ախտից , զի յոյս խոր-
հուրդս էին ընծայք նոցա ։ ոսկին
էր ՚ի խորհուրդ և յօրինակ հաւա-
տոյ , և խունկն՝ յուսոյ և սիրոյ և
վստահութեան , և զմուռսն՝ մեռե-
լութե՟ մարմնոյ՝ որով պատեցար դու
էնդ ա՟ծ , և բժշկութեան ։ զի եղեր
և յայտնեցար ձրի բժիշկ հոգւոց

և մարմնոյ։

Եւ դու է՛նդ ած̃ իմ յս̃ քս̃՝ ըն-
կալ զհաւատս իմ՝ որ է ՚ի քեզ, և ՚ի
հայր քո, և ՚ի հոգի ս̃բ, փոխանակ
ոսկւոյ նոցա․ և զսէր և զյոյս քո
զօրացո՛ յանձն իմ, և արա՛ անուշա-
հոտ իբրև զխունկ փոխանակ խըն-
կոյ․ և շնորհեա՛ ինձ մաքրութիւն
ախտից հոգւոյ և մարմնոյ՝ ողորմութ̃
քով, և ընկա՛լ փոխանակ զմռսոյ նց̃․
և մեռո՛ զբոլոր անձն իմ ՚ի սիրոյ և ՚ի
գործոյ մարմնոյ և աշխարհիս ախտից։

Եւ զա̃մ ախտս՝ որ ոչ են ՚ի կամս
քո, սպա՛ն և մեռո՛ առաջի իմ․ և
շնորհեա՛ ինձ հոգևոր բարեբանու-
թբ̃ և քաջայաղթ արիութբ̃ փառա-
ւորել և օրհնաբանել զքեզ և զհո-
գի քո և զհայր՝ ընդ բանակս անմարմ-
նոցն՝ և հոլովացն՝ ՚ի կամս քո։

Եւ որ ծնար ՚ի կուսէն, և կե-
րակրեցար կաթամբ նր̃, և գգուե-
ցար ՚ի նր̃ մատանց [illegible] ած̃ իմ յս̃
քս̃՝ բան և ծնունդ [illegible] նորա-
գոյնս ծնիր և սաէրդ [illegible]

զեղծեալ և զմեռեալ և զապականեալ անձն իմ։

Իսկ զյղութի՟ և զծնունդս ա՟մ դիւախառն ախտից սրբեա՛ և հա՛ն յանձնէ իմմէ․ և կերակրեա՛ զսովեալ անձն իմ ուղիղ հաւատով և բարի գործովք և գիտութե՟՝ յիմաստութե՟ սեղանոյ քումմէ․ և գգուեա՛ զիս 'ի վ՟ր շնորհաց մանանանց հոգւոյ և օրինաց քոց․ և բարեխօսութե՟ մօր քո՝ և հրեշտակացն՝ և հովուացըն, աղաչանօք և ա՟մ արդարոց՝ նորոգեա՛ և կենդանացո՛ զապականեալ անձն իմ յա՟մ մեղաց։

Հաշտեցո՛ ընդ եղկելիս զհայր քո երկնաւոր և զհոգին ս՟բ, և քո անձառ խոնարհութե՟դ և ծըննդեամբդ ջնջեա՛ զանջնջելի անօրէնութիւն իմ․ 'ի սոսկալի ամօթոյն փրկեա՛ զիս, և յահագին տանջանաց ազատեա՛ ա՟ծ իմ։

Որ ստեղծիչ ես՝ և գիտես, զի կամակոր հո՛ղ եմ, մի՛ պահեր ոխս 'ի սրտի քում վասն չարեաց իմոց․ և մի մատներ 'ի դատաստան ընդ ծառայիս

քո· այլ՝ ՚ի կամս քո խրատեա՛ զիս յառաջ քան զատեանն քո. և քեզ վերառաքեցից անլռելի գոհաբանութիւն հաւասարապատիւ ընդ Հօր քում և ընդ Հոգւոյդ սրբոյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից·

ամէն։

՚Ի տաճարն քառասնօրեայ առաջի յի քի՝ աղերս մաղթանաց ՚ի խորոց սրտէ վարդանոյ և ամ մեղաւորաց։

## Գ. Ղ. Դ.

Ո՛վ իմաստութիւն այ Հօր յս քս՝ բազուկ և զօրութիւն և լոյս երեսաց նր· յամի կարօղ՝ որ վասն իմ տկարացար, և զիս զօրացուցեր՝ և լցեր անպատմելի մեծութբ· բայց արդ՝ ահա դարձեալ ափշեալ յիմարեցայ անակնունելի երկմտութբ։

Ո՜ այսքանեաց անբաւից բազմակոյտ ածամարտ ամբարշտութեանց

և անօրէնութեանց իմոց՝ կամաւորաբար լինէին գործեալ՝ յորդորմամբ և յօժարամիտ դիւթեցմամբ 'ի կամս դիւացն, քեզ հակառակ արիաբար կանգնեալ 'ի մանկութենէ իմմէ, մինչև յայսքան ամեայ ժամանակս. և այնպէս հակառակ քեզ լինիլ մեղօք՝ ոչ բէեղզեբուղն անօրէն և չարիմաց հսկայն. և արդ ծանեայ 'ի ձեռն շնորհաց քոց՝ ա՛ծ իմ յն, զի ո՛չ գոյ այլ յուսոյ սահման բա՛ց 'ի քէն, որ ես ապաւէն շնչական և հոգեհան թալկացելոց:

Առ որոյ յարուցեալ կանգնեցայ ձեռնարկութեամբ յուսոյ քոյ՝ և խնդրեցի զարագ փախչօղդ և զանըմբռնելիդ. ապա զխամբդ կարես զերծանիլ 'ի ձեռաց հոգւոյ իմոյ. քանզի անբաժանելի միութեամբ խառնեալ միացար անշփոթ յիմ ընտանի և յազգակից մարմին. ապա կարի՛ նուրբ և անճառ է շաւիղ քո, և հետք քո ո՛չ ևս երևին մնաց:

Ասան որոյ և մոլորեցայ. քանզի

գրկով կուսին՝ բարձօղդ ամենից ե-
լեր 'ի բեթղեհեմէ յետ քառասուն
աւուր ծննդեան քոյ, և ոչ իմացայ
թէ՝ յոր կողմ աշխարհի եղեր փա-
խստական։

Ո՜ որդ թաղձեալ վիրաւորե-
ցայ հոգւով՝ մինչև ողորմեցաւ եղ-
կելոյս մարգարէն եղեկիէլ, և հաս
եալ կալաւ զձեռանէ իմմէ, և ասաց
թէ՝ մի յուսահատիր, զի յայն քո՝
որ էառ զմարմին քո, և զոր դու
փափաքանօք հայցես գտանել՝ ահա
'ի տաճարն է փոխուսա նր վն մեծի
խորհրդոյ կատարման։

Քանզի տէրն քո՝ զոր հայցես,
գնացեալ եբաց զնա ինքն զտաճարն
ըստ գրեցելոյն, որ ասէ թէ՝ տէր 'ի
տաճարն իւր։

Յաղագս այսորիկ և ես եղկելիս
յարեայ ցնծալով՝ ըղձիւ հոգւոյ և
անքայլ գնացիւք՝ արագութբ մտացս
հասի առ քեզ 'ի տաճարն անհասա-
բար, և տեսի զանտեսդ հրեղինաց.
զի ըստ օրինացն ընծայեցար 'ի տա-

ճարին, և ընծայեցեր զբնութիւս մեր հօր քում ՚ի բարձունս. և գովեալ գգուեցար ՚ի գիրկս ծերունւոյն սիմէօնի, և դաւանեցար ա͞ծ անթերի՝ և արձակող ծերունւոյն սիմէօնի՝ և ծերացեալ օրինացն մովսէսի։

Յօրինակ՝ զի արձակելոց էիր զադամ կալանաւորօքն ՚ի դժոխոց, և զծնունդս ՚ի կապէ օրինաց անիծից, և ՚ի թանձր խաւարէ կռապաշտութե͞. և անդէն լցեալ կատարեցեր զելեալ օրէնս ՚ի քէն՝ ա͞ծ իմ, և զայս ա͞մ վ͞ն իմ յանձն առեր՝ զի դու անկարօտ ես։

Իսկ աղաւնին և տատրակին՝ զոր ընծայ մատուցեր առուգայէս, անձրեալ ցուցանեն զօրինակ քո. քանզի դու էիր երկնային՝ և եղեր երկրային. և միամտութե͞ ըստ աղաւնեացն սրբութե͞ անմեղ ձագուցն և ըստ ողջախոհ տատրակացն կատարեցեր զմարդեղութիւն քո։

Ա͞որդ և ես եղկելիս անձամբիմով եկեալ ՚ի տաճարս քո, և երես

'ի դետին անկեալ կամ յերկիր առաջի քո Տ՛ր իմ Յս՛ անմռունչ հեծութբ՛ և անձայն հառաչանօք պաղատիմ առ քեզ 'ի խորոց սրտէ իմմէ ։

Տէ՛ր հին աւուրց Տ՛ծ իմ Յս՛ քս՛՝ որ վս՛ իմ տղայացար , հայցեմ 'ի քէն՝ աղաչանօք մօր քո և կուսի , և ծերունւոյն սիմէոնին՝ և աննայի , արձակեալ ազատեա՛ զանձն իմ 'ի չարաչար կապանաց դառնացեալ մեղաց , որ է միացեալ յանձն իմ չար՝ արիւնախառն և դարշահոտ . և ողորմութբ՛ քո լոյծ զյանցանս իմ՝ որպ՛ զեւային ։

Տ՛ծ անկարօտ՝ որ վս՛ իմ ընծայեցար 'ի տաճարին պատարագօք , դու՝ որ ընդ հօր քում ընդունիս զընծայս և զպատարագս 'ի մարդկանէ ։

Շնորհօք և սիրով քո Տ՛ծ իմ Յս՛ ընծայեա՛ զիս և զբանս աղօթից իմոց 'ի բարձունս հօր քում և հոգւոյն սրբոյ , և զերծո՛ զանձն իմ յորոգայթէ բանսարկուին , և զեղկելի անձն իմ արա՛ արժանի առնուլ և

բառնալ զքեզ 'ի գիրկս հոգւոյ իմոյ՝ ընդ մեծ վկային քո սիմէոնի , և 'ի գարշելի ախտից աշխարհիս և 'ի ցանկութէ ողջախոհացն զանձն իմ նմին ողջախոհ տաճարակիցն , և շնորհեա՛ ինձ աղաւնւոյ միամտութբ մնալ 'ի որբ հաւատս 'ի յօրէնս և 'ի կամս քո ։

Ա՛ծ իմ յս՛ քս՛՝ որբ և անարատ պահեա՛ զկուսութիւն իմ յաշխարհի՝ նմին ձագուց աղաւնեայ՝ զոր ընծայեցեր 'ի տաճարին հօր քում . և զամուսնութի աշխարհի պարկեշտութբ ողջախոհացն 'ի կամս քո զօրէն տաճարակի , և պարգևեա՛ շնորհս և ողորմութի և համբերութի 'ի ճանապարհի ամ՛ աղօթաւորաց արանց և կանանց . ընկա՛լ և կատարեա՛ զուխտըս նց , և մատո՛ առ հայր քո զքիրտըն երեսաց և զվաստակն նոցա ։

Քանզի և ես ողորմելիս 'ի գործս աղօթանուէր պաշտաման եկեալ հասի յերուսաղէմ . և հարկեալ 'ի խնդրողաց՝ յարմարեալ գրեցի զբանս երգոյս , երթալ և աղօթել առքօք յամ՛

տեղիս անօրինականաց ընդ մերոյ յի̃ քի̃, և 'ի տեղիս չարչարանաց և մահու ա̃մ սրբոց քոց, ուր և հանդիպին 'ի հեռաւորս և 'ի մերձաւորս ։

Ո՛ Տ̃ իմ յի̃ քի̃՝ ու՛ր և աղօթեն սովաւ մանկունք նորոյս սիոնի, թէպէտ և իցեն հեռագոյն յերուսաղէմէ, համարեա՛ և ընկա՛լ զաղաչանս նց̃, որպ̃ թէ մարմնով եկեալ հասին 'ի տեղիս անօրինականաց քոց՝ որ են յերուսաղէմ, և որ շուրջ են զսովաւ. զի նոքա մտօք այսպէս աղօթեն, և դու այսպէս ընկա՛լ՝ զի քեզ ա̃մ ինչ դիւրին է ։

Պարգևեա՛ մասն և բաժին և ինձ մեղաւորիս՝ յաղօթելն նց̃ սովաւ առ քեզ. և ջնջեա՛ զանբաւ չարաւ հոգւոյս իմոյ՝ զծնողաց, և զեղբարց իմոց. և շնորհեա՛ հոգի զղջման և սիրոյ և ջերմութեան ։

Եւ բանիւք գրոցս աղօթանուէր մաղթանաց՝ զոր ընթեռնուն և կամ լսեն ջերմեռանդութը̃, սնդեալ արիացո՛ զամենեսեան 'ի կամս քո՝ ա̃ծ

իմ յս՟ · և ամենեքեան միաբերան քեզ օրհնութի՟ և փառս վերառաքեսցուք ընդ հօր քում և ընդ հոգւոյն սրբոյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից · ամէն ։

Ողորմելւոյս վարդանայ և ա՟մ մեղաւորաց ՚ի խորոց սրտէ աղերս մաղթանաց առ մեծածին որդին ա՟յ յս՟ ք՟ս՝ յորժամ հալածեցաւ յեգիպտոս ՚ի հերովդէէ, և դարձաւ ՚ի Նազարէթ, և էկն երկոտասանամեայ ՚ի տաճարն՝ ըստ մարմնոյ ։

## ԳԼ. Ը.

Տէր ա՟ծ իմ յս՟ ք՟ս թագաւոր փառաց՝ և արքայ համայնից եղելոց, որ կոչեցեր առ քեզ զազգս մարդկան՝ քաղցրագոյն վարդապետութ՟ լուսաւորելով զամենեսեան, և երբեմն՝ որք սպառնալով ոչ դարձան առ քեզ ՚ի մոլար ճանապարհէն՝ հրով և տանջանօք ։

Վասն որոյ և ես լցեալ տրտմու-չարեօք՝ երկեայ յահէ սպառնալեաց քոց, և ելի խնդրել զքեզ՝ և ցուցանել զանօրէնութիւնս իմ. խնդրել 'ի քէն ներումն յանցանաց իմոց՝ և ազատումն 'ի դժոխոց.

Եւ ապա յետ այսքանեաց ահաբեկ երկչոտութեց և պշնօղ պակուցմանց 'ի բաղձնութ̃ե կորստական չարեաց իմոց, և յետ գտանելոյ անհաստաբար զանհասանելիդ, և յետ խնդրելոյ 'ի քէն՝ տ̃'Ծ իմ յ̃ս, զներումն յոգնազան և եղեռնական ամբարշտութեց իմոց, և յետ սակաւ մի շունչ առնլոյ 'ի յուսոյ քումմէ՝ նորոգօղ տէր տ̃Ծ իմ յ̃ս ք̃ս, ահա անհետ գնացիք գաղտաբար փախեալ 'ի տաճարէն, և ես յիմարեալ մոլորեցայ 'ի նուրբ շաւղաց քոց, և ոչ իմացայ թէ՝ յո՞ր կողմ իցէ փախուստն քո:

Վ̃ որոյ միւսանգամ թմբրեալ յիմարեցայ 'ի շնչոյ չարիմաց դիւացըն՝ եղկելի անձամբ իմով՝ և շաղ-

հայեցայ կրկին անգամ յա՛մ ախտս մահաբերս՝ միաւորելով բոլոր մարմնովս ըստ ախորժակացն բելիարայ՝ մոռանալով զքեզ և զօրէնս քո, ըզ խոստումն և զպատուիրանս քո. և խորագոյնս մխեցայ 'ի Թարախս արիւնախտունս և զազրահոտս :

Եւ այս 'ի շնորհաց քոց սակաւ մի հոգի առեալ՝ շունչ ընկալեալ՝ և 'ի միտս իմ եկեալ՝ իմացայ զկորուստ անձին իմոյ. և ելի զհետ քո՝ գտանել զքեզ, զի հովուեսցես ըզ առգնապեալ և զնեղեալ սիրտս իմ. և ոչ իմացայ զշաւիղս գնացից քոց՝ զի կարի նրբագոյն է :

Սորոյ և սկսայ կոծել զանձն իմ, զի ծանեայ՝ որ ոչ գոյ այլ ինչ հնար փրկութե՛ իմոյ բայց 'ի քէն՝ ա՛ծ իմ յո՛ քո՛ :

Եւ ողորմութե՛ քով եհաս առ իս մարգարէն եսայի, և եցոյց ինձ ըզ շաւիղս քո. և ասաց թէ՝ յոյսն քո՝ որում բաղձաս, և զոր խնդրես գտանել, էջ նա յեգիպտոս, փախստա-

կան ՚ի մանկասպան վիշապէն · որ՟զ զի լցցի բանն իմ՝ զոր կանխաւ գրե-ցի , թէ ահաւասիկ տէր նստեալ ՚ի վ՟ր լուսաւոր և թեթև ամպոյ գրկաց կուսին՝ եկեսցէ յեգիպտոս :

Դու տալայ նստայ հոգւոյս ՚ի թևս հողմոց , և անքայլ գնասցիւք արա-գութե՟ մտացս հասի առ քեզ յե-գիպտոս անհասաբար · քանզի միա-նալով բնութե՟ քո յազգակից և յիմ ընտանի մարմին , զիա՞րդ կարէիր փախչել դու ՚ի ձեռաց հոգւոյ իմոյ :

Բայց ոչ թէ ՚ի հալածիչ ման-կասպանէն եղեր փախստական՝ ա՟ծ իմ յ՟ս ք՟ս , այլ՝ վ՟ն մեծի խորհրդոյ՝ զի հալածեսցես անտի զդևսն և ըզ խաւարն , և լուսաւորեսցես զնո՟ · քանզի անդ անկաւ յերկնից վիշապն գլխովքն իւրովք · վ՟ն որոյ և եգիպ-տոսն խաւար թարգմանի :

Դու յայս խորհուրդ կանխեալ յառաջագոյն առաքեցեր անդ զմով-սէս զարմանագործ հրաշիւք , և շեր ջերով քո անդ՝ լուսով քո լցեր զնա՝

և զԹանձր խաւարն անգիտութեան և անհաւատութեան հալածեցեր 'ի նմանէ․ յօրինակ և'ի խորհուրդ ա՟մ աշխարհի՝ զոր լուսաւորեցեր ա՟ծ իմ՝ յ՟ս ք՟ս։

Յաղագս այսորիկ անկեալ կամ առաջի քո երես 'ի գետին երկրպագութ՟ե՝ ա՟ծ իմ յ՟ս ք՟ս, թէ՛ յեգիպտոս և թէ՛ ուր և իցեմ․ զի դու յա՟մի մերձաւո՛ր ես՝ և ո՛չ հեռաւոր։

Ես ահա նստեալ կամ 'ի թանձր խաւարս մեղաց՝ 'ի դառն եգիպտոս, և 'ի չար կապանս դիւացն, որք են հին և նոր փարաւօնք։

Ես'ի խոր սրտէ անձայն գոչմամբ և անմռունչ հեծութ՟ե հառաչանօք պաղատիմ առ քեզ՝ ա՟ծ իմ յ՟ս ք՟ս, նեի՛ր և խնայեա՛ յեղկելի անձն իմ, և լուսաւորեա՛ զխաւարեալս մեղօք՝ զնոր եգիպտոս և զնոր փարաւօնս․ և շնորհօք քո ջնջեա՛ զանպատմելի անօրէնութիս իմ, և հալածեա՛ զդևսըն՝ որ հալածեն և գերեն զիս չարաչար տառապանօք, հերքելով զն՟ս

քինէն՝ աստուած իմ։

Դու խափանեա՛ զաւաչօք և զնեն-գաւոր խարէութիւնս նշ՟ յանձնէ իմ-մէ, և յամօթ արա զնոցա կախարդա-կան չարեաց մեքենայսն, ո՟ր և արա-րեր յամօթ զյանէսին և զյամբրէսին 'ի ձեռն ծառային քո Մովսէսի։

Դու զա՟մ դիւաշունչ գործս չար-եաց՝ որ է 'ի բոլոր անձն իմ խաւար եգիպտական, անոխակալ տ՟ր ջնջեա՛ և մաքրեա՛ յանձնէ իմմէ, և լուա՛ զա-նեզրական խաւարս անձին իմոյ։

Դու փրկեա՛ զանձն իմ յա՟մ յո՛չ սիրելեացն և յո՛չ հաճոյիցն կամաց քոց. լե՛ր ինձ մարտակից և օգնական յա՟մ կռիւս եգիպտական դիւացն. և տուր զօրութի՟ և կարողութիւն տկարութե՟ս իմոյ՝ յաղթել չարեաց նշ՟, և առնել զկամս քո՝ ա՟ծ իմ։

Դու զայս հայցելով 'ի քէն՝ բարե-խօսութե՟բ մօրն քո մաքուր կուսին մարիամու, և մարկոսի աւետարան-չին, և ա՟մ սրբոց քոց՝ որք եղեն յե-գիպտոս շնորհօք քո՝ ա՟ծ իմ յա՟. և

քեզ փառք և օրհնութիւն։

Նուէր մահուան հալածիչ մահ կատարանին՝ տ̃ծ իմ յ̃ ք̃, դարձայ յեգիպտոսէ ՚ի նազարէթ յառաջին հայրենիսն քո՝ ըստ մարմնոյ, ուր իջեր ՚ի մաքուր և ՚ի լուսաթաղանթ յարգանդ մօրն քոյ՝ որ ցուցանէ յայտնապէս զվերադարձումն ադամայ ՚ի փառս իւր ծննդովքն իւրովք։

Հարցն խնդ տ̃ծ՝ և իմ փրկիչ յ̃ ք̃, մեղայ յերկինս և առաջի քո՝ ողորմած, լեր առ իս անոխակալ, և դարձո զանձն իմ ՚ի դառն գերուէ̃ս և ՚ի թանձր խաւարէս և յեգիպտական ծառայուէ̃ս, և հան յառաջին հայրենիսն իմ՝ զոր կորոյս ադամ։

Նուպարգևեա ինձ կրկին զշնորհըս ն̃ր աւազանին՝ զոր ես կամաւ կորուսի պատրանօք առաջին սպանողին և հալածողին մերոյ, որ զրկեաց զմեզ յանմահ կենացն, և սպանանէ անմիջոց զլարի գործս մեր՝ որ է անդրանիկ զաւակ հոգւոյ մերոյ։

Ո՛ծ իմ յ̃ ք̃՝ որ մնար ՚ի տա-

ձայրին 'ի Նազարէթ՝ զի գիրն լցցի , որ ասէ թէ՝ Նազովրեցի կոչեսցի · Ա՛ծ զիս 'ի կամս քո շնորհօք և սիրով քով՝ ջերմ ապաշխարութ̅բ և անպակաս բարեգործութ̅բ · և զա̅մ աղտաւոր բիծ մեղքեան յանձնէ իմմէ , որո̅վ և սրբեսցի ո̅ր աւազանն քո յառաջագոյն՝ զոր ոչ կարացի պահել ։

Եւ շնորհեա կրկին զո̅ր անուն քո 'ի վերայ իմ , որո̅վ զի եղէց ճշմարիտ քրիստոնեայ 'ի հաճոյս քո՝ ա̅ծ իմ յս̅ քս̅ , բարեխօսութ̅բ մօր քո միշտ կուսին մարիամու · յարմատոց խլեալ և սրբեալ յանձնէ իմմէ զանեզրական կոյտս չարաւածոր մեղաց իմոց՝ զոր դու միայն կարես թուել և ջնջել ըստ ողորմութե̅ քում ։

Տ̅ր ա̅ծ՝ որ էնդ 'ի սկզբանցն և հարցն իմոց և իմ և որ գալոցն են յապագային , որ ըստ մարմնոյ անօրէնութե̅ քո եկիր 'ի տաճարն երկոտասանամեայ , և զարմացուցեր զվարդապետս օրինացն մանկանս · քանզի դու ես մայր և աղբիւր ա̅մ բարեաց

և իմաստութե՟ · և այդ բարեխօսութբ՟ ամ՟ որց քոց առաքեա՛ զշնորհս ողորմութե՟ քո ՚ի բոլոր անձն իմ, որ է կազմեալ և հաստատեալ երկոտասան մեծամեծ անդամօք · և յամ՟ դառնաբոյս սերմանց և ՚ի չարահոտ որոմանց թշնամւոյն սրբեա՛ զիս ներքոյ և արտաքոյ ։

Նու գթով քո կազմեա՛ զիս առաջինի հօր քում և հոգւոյն սրբոյ, ոչ կանխաւն արարեր ստեղծմամբն, և յետոյ որ աւազանաւն · և պարգևեա՛ ինձ շնորհս՝ խօսիլ զհանճյս քո ՚ի շահ լսողաց, յամօթ և ՚ի զարմացումն ամ՟ դիւաց · և ամենակարող իշխանութբ՟ քով լուա՛ զթարախեալ մեղս հոգւոյ իմոյ · և ՚ի խաբեբայ հնարից դիւացն փրկեա՛ զիս ։

Ա՟ծ իմ յս՟ քս՟՝ յարգանդէ հարց իմոց և յորովայնէ ըստեանց մօր իմոյ ՚ի քեզ անկայ, յայտնի ես յամ՟ յաւիտեանց՝ և արարիչ ամի, զոր ոչ կարեն պարաբաւանալ երկինք և երկիր ։

Եւ դու 'ի մարմնի ծածկեալ՝ ոչ յայտնեցար մարդկան, մինչև 'ի կատարումն երեսնամեայ կատարեալ հասակի քո · որոյ զի մի՛ առաջօք համարեսցին տեսօղքն զսքանչելիս քո՝ զոր առնելոց էիր ապայ գալով մարմնոյ հասակաւ ։

Եւ արդ ո՛ւր և պատահիմ՝ անկեալ կամ առաջի քո հառաչանօք, խնդրեմ 'ի քէն ա՛ծ իմ, բարեխօսութ͞ե ծնողի քո և ա՛մ ս՛րց՝ խնայեա՛ յեղկելիս, և զօրութ͞ե քո ծածկեա՛ զաղոր անձն իմ 'ի դատանահայեաց և 'ի չարատես աչաց բանսարկուին և ա՛մ դիւաց նորա, մինչև 'ի կէտ լրման ժամանակի իմոյ՝ որ քաղեալ սպասէ շունչ իմ 'ի մեղսամակարդ մարմնոյս իմոյ ։

Զի նա չարիմաց է և անմարմին և բազմահնար նենգաւոր, և ես եմ դիւրակործան և փայլրաքարշ հող և մանր փոշի՝ որ 'ի սակաւ մի հողմոյ ցնդիմ · և յա՛մ կորստական վշտաց փրկեա՛ զիս հողեղէն և մարմինն՝ ա՛ծ

քիմ. և բազմածուլացեալ մեղս և զա-նօրէնութիւնս և զյանցանս իմ մաք-րեալ ջնջեա՛ ողորմութեամբ քո:

Զի քո է կարողութի և իշխա-նութիւն թողուլ և քաւել և ջնջել զամ անօրէնութիւնս. վասն որոյ քեզ և հօր քում և հոգւոյն սրբոյ վայելէ ամ փառաբանութի և օրհնութիւն յամ եղելոց անլուելի գոհաբանու-թբ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Ու հասանան յորդանան գետոյ՝ առաջի յե-քի անապատ գաւիթնոյ. 'ի խորոց սրտէ ա-ղերս մաղթանաց ողորմելւոյս վարդանոյ և ամ մեղաւորաց:

## ԳԼ. Զ.

Անսկզբնակից հօր և էակից որ-հոգւոյն՝ յն քն ամ, և արարիչ ամ բնաւից՝ որք 'ի գոյութի հասին լի-նելութեամբ:

Օրհնաբանեմ զխոնարհութ̃ն քո յանբաւ փառացն հայրենի՝ որով կեցուցեր զմեզ, և նորոգեալ ազատեցեր 'ի ծառայութ̃ե թշնամւոյն։

Ապա 'ի յորդորելոյ պիղծ դիւացն խմով կամակցութ̃ե զօրէն մանրամաղ փոշւոյ՝ որ հոսի հողմով 'ի ժամանակս ամարայնոյ, այնպէս անթիւ գան և ժողովեալ կուտին 'ի վերայ իմ որոմունք և սերմանք չարխմաց դիւացն, և իբրև զկոյտս անբաւ աւազոց լեռնացեալ դէզս դէզս վերելեալ և ծածկեալ խաւարեցուցին զանձն իմ, ժողովելով 'ի գոգս հոգւոյ և մտաց իմոց. և նման իժից և քարբից և թունաւոր օձից խոցեն խայթեն և վիրաւորեն զանձն իմ։

Եւ յորժամ իմացայ զայսքան կորստական զաղբալի թարախս յանձն իմ ժողովեալ, սկսայ սրտաբեկիլ 'ի դիւաշունչ յուսահատութ̃եց՝ եղեալ անդնդասոյզ 'ի ծովս չարեաց իմոց։

Եւ ապա դարձեալ վերականգնեցայ շնչտկոտոր հոգեդարձութ̃ե

և հեկեկանօք առ 'ի քէն զօրացեալ ա՛ծ իմ յո՛ քո՛, և յիշեցի ուրեմն զանեզրական գութ մարդասիրութե՛ քոյ. քանզի սաստկապէս և անպատումխոնարհեցար վ՛ն մեր՝ ա՛ծ իմ։

Նու ապա քոյոց շնորհացդ ձեռնարկութբ՛ յարուցեալ վերականգնեցայ 'ի խորոց անդնդոց, և 'ի վեմյեցեալ հաստատեցայ սակաւ մի, և սկսայ խնդրել զքեզ ընդ ա՛ծ. և ոչ գիտէի թէ՝ ուր կամ յորում սահմանի իցես՝ քանզի սաստիկ գիտես փախչիլ և թաքչիլ։

Բայց զիա՞րդ՝ կամ ո՞րպ՛ կարօղ եմ զերծանիլ 'ի ձեռաց հողւոյս իմոյ. քանզի քո կամաւ վ՛ն իմ անքակ միացար յիմ աղգակից մարմին՝ ա՛ծ իմ յիսուս քրիստոս։

Յաղագս որոյ և մարգարէն ակներև տեսութբ՛ մատնացոյց արար ողորմելւոյս զորէնն ա՛ծդ՝ որ ծածկեալ կայիր գաղտաբար 'ի մարմնի զերեսնամեայ ժամանակ, և տայց թէ՝ յոյսն քո՝ զոր խնդրես փափաքա-

նօք, 'ի հոսանսն յորդանանու գտցես զնա. զի յորդանան էջք հոգւոյ կոչի՝ և հանգիստ ա̃ծութեան։

Ես զայս իմացեալ՝ փութով սլացայ 'ի թևս հողմոց, և արագութե̃մաց զհետ ձայնի հօր քոյ, և երևման հոգւոյն ո̃րդ, եկեալ ժամանեցի քեզ ընդ ա̃ծ 'ի հոսանս մեծախորհուրդ գետոյն յորդանանու. և լուայ՝ զի ա̃ծ անթերի վկայեցար 'ի հօրէն քո և 'ի հոգւոյն ո̃րդ՝ և յամբողջ կարապետէն քո յովհաննէ. քանզի և ես եղկելիս անձամբ իմով բազմաբարդեալ մեղօք՝ ա̃ծ իմ յս̃ քս̃, դիմեցի զհետ քոյ նման շան սովեցելոյ։

Որպէս զի եղէց արժանի ողորմութե̃ քոյ՝ առնուլ սակաւ մի զոգէպահն 'ի փշրանաց անկելոց 'ի զօրութե̃ սեղանոյ ա̃նդ իմոյ. նաև կիսամեռ հիւանդս յանբաւ ախտից՝ հետևեցայ գալ զհետ ձրի և իմաստուն բժշկիյնու մեծ յուսով՝ զոր դու խոստացար մեզ անսուտ բերանով քով

Թէ՝ որ բաղխէ՝ բացցի նմա, և որ հայցէ՝ առնու շնորհիւ քո։

Նա տեսի՛ զի յայնժամ իջանելով քոյ ՚ի ջուրս յորդանանու, կոխելով ջախջախեցեր զգլուխ անօրէն և անձոռնի և յաղթանդամ վիշապին, և սաստ հերձեալ պատառեցեր զորովայն և զթագաւորութ̃ի նորա։

Լուացեր զմեղս ադամայ, և բացեր զամուլ արգանդ ս̃բ եկեղեցւոյ քո, և սաստ օրհնաբանեալ գովեցար ՚ի վերնական նահապետութ̃եցն՝ ՚ի խորհուրդ և յօրինակ, զի ջրով ս̃բ աւազանին և ս̃բ հոգւոյն՝ եղծեր զբազմութ̃ի դիւացն, և բարձեր ըզ զօրութ̃ի նց̃, որ էր անյուսութ̃ի և անհաւատութիւն։

Նա յայնժամ երևեցաւ ստուգապէս խորհուրդ ս̃բ երրորդութ̃եդ անբաժանելի՝ որ է Ճշմարիտ ա̃ծպաշտութ̃ի․ զի դու գառն ա̃յ վկայեցար ՚ի մեծ մարգարէէն, և հայր ձայնեաց թէ՝ դա́ է իմ սիրելի որդի, և ս̃բ հոգին աղաւնակերպ հանգեաւ

'ի վերայ գլխոյ քո։

Յաղագս այսորիկ և ես եղկելի անձամբ իմով ո՟Տ իմ յս՟ քս՟, անկեալ կամ առաջի քո յերկր հոսանացս յորդանանու, և երես 'ի գետին հող լիզեմ առաջի քո՝ ո՟Տ իմ յս՟ քս՟. և դու անոխակալ մի՛ բարկանար ինձ վս՟ չարեաց իմոց թէ՝ հարկեալ թախանձեմ զքեզ. քանզի դու հեզ ես և համբերող, և զայս կամիս դու և հայրն քո և հոգին սուրբ։

Ս՟որոյ և 'ի խորոց սրտէ գոչեմ առ քեզ հառաչանօք և ջերմ արտասւօք՝ անձայն և անմռունչ հեծութբ՟, և բարեխօս ունիմ առ քեզ զահագին և զսոսկալի ձայն հօր քո, զկնջումն հոգւոյն սրբոյ, և զամբորդի մկրտիչն քո յովհաննէս։

Տ՟Ձ իմ և հարցն իմոց քս՟՝ դերեալ 'ի դիւաց հոգւոյս իմոյ լեր դերեդարձ. և որ լուծեալ հիւանդացայ 'ի բազում ախտից հոգւով իմով 'ի ցաւս կորստականս՝ յս՟ քս՟ ձրի և իմաստուն ապաքինօղ բժիշկ հոգ-

ւոյ , հոգւով քո և հրով և ջրով յորդանանու սրբեալ ջնջեա՛ զդատն և զչարահոտ արխնախառն շարաւ հոգւոյս իմոյ և զմեղս բոլոր անձինս։

Եւ փրկեա՛ զիս ՚ի նենգութեց չարխմից դիւացն , և յամօթ արա՛ զն̃ս • զի դու վ̃ն այսորիկ խոնարհե-ցար , և հայր քո և հոգին ս̃բ սիրեն զայս և կամին ։

Ա̃ծ իմ յ̃ս ք̃ս՝ որ վ̃ն ադամայ և ծննդոց ն̃ր զգեցար մարմին՝ և եկիր ՚ի յորդանան վ̃ն անճառ խորհրդոց , և ա̃ծ անթերի վկայեցար ՚ի հօրէ և ՚ի հոգւոյն ս̃րյ և ՚ի յովհաննէս մկրտ-չէն քումմէ • ա̃մ սրբոյ աղաչանօք հայցեմ ՚ի քէն՝ ա̃ծ իմ յ̃ս ք̃ս , ան-սասանելի պահեա՛ զհաւատս իմ՝ որ ՚ի քեզ , և ՚ի հոգի սուրբ , և ՚ի հայր քո երկնաւոր ։

Եւ յօրն ահագին վկայեա՛ վասն իմ առաջի հօրն քոյ , զի դու քաջ գիտես սրտագէ՛տ ա̃ծ՝ որ բնաւ ոչ անկաւ ՚ի կարծիս մտաց իմոց , և ոչ իմացայ և ոչ խորհեցայ առ քեզ նուա

զուի՞ ինչ քան զհայրն քո և զհոգին ո՞ւր՝ հանդերձ մարմնով քով․ այլ՝ համազդոյ՝ և միափառ և միաթագ գրեցի և դաւանեցի և դաւանեմ զանբաժանելի ո՞ւր երրորդութիւդ, և ապաւինեցայ՝ զի թերևս ներումն արասցես ինձ՝ տ՛ծ իմ։

Քանզի օտարացայ յա՞մ բարեաց, և հաւատս միայն մնաց կենդանի առ իս՝ որ յանձնառու միութիդ․

Վ՞ն որոյ և հայցեմ ՚ի քէն մաղթանօք մօր քոյ և աղօթիւք յովհաննու մկրտչին քո, մաքրեալ քաւեա՛ զա՞մ կորստական գործս եղկելի անձին իմոյ՝ որ բազում են քան զշիթս անձրևաց․ և խնայեա՛ յեղկելիս մարդասիրութե՞ հօր քոյ և հոգւոյն ո՞ւյ․ զի քաջ գիտես տ՛ծ իմ, որ հայրն քո և հոգին ո՞ւր վասն իմ ոչ խնայեցին ՚ի քեզ։

Վասն այսորիկ աղաչեմ, փրկեա՛ զիս յարկածից դիւացն․ և շնորհեա՛ դալ ջերմ արտասուք ՚ի սրտէ իմմէ փոխանակ ո՞ւր աւազանին ջրոյ՝ որը

կամաւ կորուսի՝ և մերկացայ ըզ-
զփառսն իբրև զհայր իմ զադամ։

Ո՛վ իմ Յ̃ս Ք̃ս քաղցր և բարի
նման հօրն քո՝ և կամեցող փրկութե
մերոյ, պատուիրանօք ա̃մ արդարոց
քոց՝ ընկա՛լ և համարեա՛ ընդ սուրբ
աւազանին մկրտութե̃ն և զայս՝ որ
՚ի ջուրս յորդանանու մկրտիմք յու-
սով և հաւատով յանուն քո՝ ես
եղկելիս և ա̃մ հաւատացեալք ՚ի քեզ։

Ջնջեա՛ զա̃մ յանցանս մեր, և
անարատ պահեա՛ զհաւատս և զվաս-
տակս աշխատութե̃ ա̃մ աղօթական
ճանապարհորդաց՝ ո՛ւր և ընթանան
վ̃ս անուան քո և վ̃ս սրբոց քոց և
վ̃ս քաւութե̃ մեղաց, ընկա՛լ զուխտ
նոցա՝ և կատարեա՛ զխնդիրս նոցա՝
ողորմութե̃ք քով և բարեխօսութե̃ք
սրբոց քոց։

Ո՛հա մանկունք նորոյս սիօնի՝ որ
էք այժմ, և որ գալոց էք մինչև ՚ի
լրումն ժամանակաց, ողջո՛յն ընդ ձեզ
՚ի բերանոյ հօր, և անարատ անցուս-
ցէ զձեզ տ̃ր հոգւին ընդ սեաւ ծով

մեղաց կենցաղոյս , որոց և ցանկալի
գետն ալփեայ՝ որ անապատ անցանէ
ընդ մէջ դառնացեալ աղի և մեռեալ
ծովուն՝ բարեհամ ջրով իւրով • և
ցանկամ տեսանել զձեզ , բայց ոչ կա-
րեմ՝ զի հողացեալ եմ ՚ի տապանիս ։

Բայց հոգւովս կամ ՚ի միջի ձե-
րում՝ և գրովս այսուիկ խօսիմ ընդ
ձեզ , մինչև ՚ի վեց և յեօթն ազգս
ձեր • և աղաչեցէք զած վս իմ , զի
արժանի եղէց ուրախութե տեսա-
նել զձեզ առաջի ահագին դատա-
ւորին յի քի յատեանն ահաւոր • և
դարձեալ պաղատիմ աղերսելով առ
ճշմարիտ ծառայքդ այ հողացեալ
ոսկերօքս ՚ի գերեզմանէս իմմէ ։

Եւ աղաչեմ զձեզ՝ որ վս այ ոչ
առնէք անտես զխնդիրս իմ , զի ձեզ
դիւրին է՝ և ինձ սաստիկ շահ և
օգուտ • քահանայն՝ որ վս այ զողոր
մելիս յիշեսցէ անուամբ ՚ի սոսկալի
և ՚ի մեղաքաւիչ պատարագին , և
մարդ՝ որ յանուն այ տայ սակաւ մի
ողորմութի ՚ի խեղճ և յաղքատս վս

իմ, ոչ զի մի՛ կրեցից զամօթ յահա-
գին և յաշխարհաժողով հրապարա-
կին, և մի՛ եղէց բոցակեզ 'ի հուրն
անշէջ և 'ի տարտարոսն անվախճան
վասն չար և անօրէն գործոց իմոց՝
զոր կամաւ և գիտութբ մեղայ։

Ամենահայրն ած բարի չարչարանօք
և արեամբ միածնին իւրոյ յի. քի՝ ջըն-
ջեսցէ՛ զմեղս նր և զծնողաց նր, և
փրկեսցէ՛ զնա յաշխարհի չարէ. և ա-
ղաչեմ, մի՛ մեղադրել զիս, եթէ գըտ
ցին 'ի սմին գիր կամ բան պակաս. զի
այն ած՝ որ զէշն խօսուն արար, ետ
և ինձ բան՝ զոր 'ի բերան գրեցի։

Եւ դանդաչեալ ակարացայ ծե-
րութեամբ, վասն որոյ աղաչեմ, զի
որ գրեսցէ զսա՝ զանուն մեր մի՛
հանցէ 'ի սմանէ, այլ՝ գրեսցէ՛ ան-
յապաղ, և ած անջնջելի գրեսցէ
զանուն նորա 'ի գիրն կենաց. և այ
հօր՝ և միածնի նր յի. քի՝ և ազատիչ
սբ հոգւոյ նր՝ վայելէ փառք իշխա-
նութիւն և պատիւ, այժմ և միշտ և
յաւիտեանս յաւիտենից. ամէն։

՚ի ընտան փորձութեան առաջի յն քն բանին որ ՚ի խորոց սրտէ աղերս մաղթանաց վարդանայ և ամ մեղաւորաց ։

## ԳԼ․ Ի։

Ճառագայթ փառաց հօր՝ և պատկեր էութե նր ած իմ յս քս, որ կամաւ աղքատացար՝ և զիս փարթամացուցեր անճառելի մեծութբ յառաջին փառսն իմ հայրենի ։

Ապա վա՜յ եղկելի անձին իմոյ ով յոյս իմ տէր յս քս ․ քանզի արմատք և բարունակք դժոխոցն ամրացան յանձն իմ, և անսղալ բուսան սերմանք դիւացն ՚ի ներքին մարդս իմ ․ և ՚ի ներքուստ պատերազմեալ անտեսաբար խոցեն և քանցեն զոգիս իմ անմիջոց , զի ունին ըմբռնեալ զամրոցս իմ ։

Եւ ես երբեմն տագնապիմ և նեղիմ և ջանամ հրաժարիլ ՚ի չար սերմանց նոցա ․ և երբեմն հեշտանամ և

կամաւ ընթանամ անյաղթաբար ընդ հետ դիւասերմ որոմանց ։

Ս՟որոյ և երբեմն գայ յուսահատութե՟ դէն՝ և բեկանէ զխարիսխ յուսոյ իմոյ . և ջանայ ընկենուլ ընդ ոփւն հաստատութե՟ս իմոյ ։

Բայց ՚ի ձեռն յուսոյ քոյ ո՛չ կամիմ հեռանալ ՚ի քէն ա՟ծ իմ յո՟ քո՝ զի դու ես ապաւէն ա՟մ վշտացեալ և նեղեալ հոգւոց ։

Ս՟որոյ ելի ՚ի հասանացս յորդանանու , և կանխագոյն եկեալ համի առ քեզ ՚ի լեառն փորձութեան քո . ո՛ւր վ՟ս մեծ խորհրդոյ վարեալ զքեզ եհան գործակից հոգին քո , որ՟պ զի համբերութե՟ յաղթեսցես չարին՝ և մեզ ուսուսցես առնել համբերութե՟ ա՟մ փորձանաց՝ որք գան ՚ի վերայ մեր ՚ի դիւաց և ՚ի մարդկանէ ։

Նու ահա եկեալ եհաս փորձապեան առ քեզ ընդ ա՟ծ՝ որ՟պ և առ նախահայրն մեր ադամ . քանզի չարիմաց մտօք կարծէր թէ՝ և քեզ

յաղթեսցէ որո՛վ նախանձօրն ․ զի ոչ
էր տեղեակ և հաստատ անձամբ և
գաղտնիս մարդեղութեան քոյ ։

Յաղագս որոյ սկսաւ փորձել
զքեզ որովայնամոլութ̃բ՝ հպարտութ̃բ՝
և ագահութ̃բ ․ զի այս երեք ախ-
տիւքս կորոյս զադամ ․ սա՛ քարան-
ցըս՝ հաց լինել ․ և ՚ի վերոյ բազկաց
հրեշտակաց բարձցես ․ և թէ՝ ո՛ւմ
կամիմ տամ զսա ։

Իսկ դու ամենիմաստ արուեստա-
ւոր և խորագէտ ծածուկ ա̃ծութ̃բ
քով , և յայտնի մարդեղութ̃բ քով ,
հեզութ̃բ և համբերութ̃բ արար
նմա ․ և զորս վկայութ̃բ ափ ՚ի բերան
պապանձեալ ամաչեցուցեր զնա՝ և
ո՛չ երևեցուցեր նմա յայտնապէս զան
բաւ զօրութ̃ի ա̃ծութեան քո ։

Եւ զայս ՚ի մեր խրատ արարեր ,
զի և մեք համբերեսցուք նեղութեանս
մերոյ ․ նաև զի սաստիկ խոցեսցի
սիրտ վիշապին ՚ի մարմնոյ քումմէ՝ և
կործանեալ չքասցի , որում ընտա-
ակն ոչ ունէր անօրէն հսկայն ․ քանզի

թէ մերկ ա՟ծութ՟ե կործանեալ էիր զնա առանց մարմնոյ՝ չէ՛ր սատակ խոցեալ. զի ունէր ասել թէ՝ չէ զարմացումն՝ զի արարիչն յաղթեաց արարածոցս, և ո՛չ այլ ոք։

Հարցն սկզբանց և յաւիտենից և իմ ա՟ծ յ՟ս ք՟ս անժամանակ՝ որ վ՟ս իմ եղեր ընդ ժամանակաւ, անկեալ կամ առաջի քո ՚ի լեառն փորձութե քո, ցնծութ՟ե համբուրեմ զքարինս ն՟ր՝ և երկրպագութ՟ե հող լիզեմ առաջի քո, և անմռունչ հեծութ՟ե ՚ի խորոց սրտէ իմմէ հեծեծելով գոչեմ առ քեզ՝ ա՟ծ իմ յ՟ս ք՟ս։

Եւ զա՟մ կիրս քո բարեխօս ունիմ առ քեզ. գթա՛ յեղկելի անձն իմ՝ ո՛ղորմած. որ լցայ որ՟վ կապար ամենայնար, և դեղեալ հրախառն նետիւք բանսարկուին, և բոլոր մարդս նեխեալ փտեցայ ՚ի մահաբեր թիւնից ն՟ր. զի ն՟ր կերպարանօքս հոգւով և մարմնով դեղեալ մեռայ։

Եւ դու ողորմութ՟ե քով քաւեալ սրբեա՛ զա՟մ վէրս և զարկուածս

նր 'ի բոլոր անձնէ իմմէ . տո՛ւր ինձ ձեռն՝ և կանգնեա զգլորեալս 'ի յղլրծօղ ախտից կենցաղոյս, որ անդադար սուզեալ հեղձուցանէ զիս .

Այս զօրութբ քով և շնորհօք հոգւոյն սրբոյ փարատեսցի քոյ 'ի բաց հալածեա զփորձաղեան յանձնէ իմմէ, զի նա է մայր ամ չարեաց . և յամօթ արա զամ հնարաւոր մեքենայս նր, զի նենգաւոր արուեստիւք հանապազ փորձէ՝ և ընկենու զանձն իմ 'ի գուբս տղմուտս . քանզի տկար հող եմ։

Ո՛վ իմ յս քս՝ զօրութբ սրբ հոգւոյդ և բռնութեամբ հա՛ն և 'ի բա՛ց վարեա զիս 'ի սիրոյ և 'ի ցանկութէ աշխարհիս, որով բազումք կործանին . և շնորհեա ինձ կարողութիւն՝ սիրել զքեզ ըստ կամաց քոց, և ատել զցանկութի մտաց և մարմնոյ և աշխարհի . և ջնջեա զցաւս անձին իմոյ՝ որ է տեսակ ամ մեղաց, որով ներկեալ թխացայ արջնագունեալ։

Ո՛վ սկզբանցն և յաւիտեանց և

հարցն իմոց և իմ յ՟ս ք՟ս՝ որ մերովս յաղթեցեր փորձողին մարմնով, և ձոխութեամբ իջեր 'ի լեառնէն, և հոգին քո ոչ մեկնեցաւ 'ի քէն. պարգևեա ինձ կարողութ՟ի և յաղթութիւն 'ի ծածուկ մարտս բելիարայ և դիւաց նորա, և զօրացո՛ զտկարութ՟իս իմ յաղթել չարեաց նոցա՝ զի քեզ ա՟մ ինչ դիւրին է։

Ա՟ծ իմ յ՟ս ք՟ս՝ ձրի և զօրեղ բժիշկ, որ զօրութեամբ հոգւոյ քոյ՝ զոր մատն ա՟յ կոչեցեր, սկսար բժշկել՝ և ողջ առնել զա՟մ ախտաժէտս, զցաւոտս, և զհիւանդս, զլուծեալ անդամս, զկոյրս, և զխուլս. յօրինակ՝ զի բժշկելոց էիր զազգս մարդկան 'ի կուրութ՟եց և 'ի խլութ՟եց և 'ի պէս պէս հիւանդութ՟եց հոգւոց և մարմնոց. և զբազում մեռեալս յարուցեր։

Յօրինակ՝ զի զհաւատով և զհոգւով մեռեալս 'ի մեղս և 'ի յանօրէնութ՟իս, կենդանացուցանելոց էիր յետ յարութ՟ե քո. և որ զբազում

դեւս հալածեցեր 'ի մարդկանէ , եղև օրինակ՝ զի յետ յարութե՟ քո հալածելոց էիր զնո՟ 'ի մարդկան ազգէ ։

Մ՟ծ իմ հալածեալ զնո՟ յինէն , և յանդունդս բևեռեալ զնո՟ զօրութե՟ քով , և սրբեալ զանձն իմ 'ի չարխմաց մտաց նոցա ։

Նու արդ անկեալ կամ առաջի քոյ՝ տ՟ծ իմ՝ յաշխարհս դալկեացւոց , ուր շրջեցար մարմնով ․ և երկրպագութե՟ հող լիզեմ առաջի քո՝ յո՟ քո՟ , և աղաչանօք մօր քոյ հայցեմ 'ի քէն՝ տ՟ծ իմ , որ զառաջինն 'ի գինի զջուրն փոխեցեր 'ի հարսանիսն ։

Նու արդ՝ զմեղօք ջրեալ և զապականեալ անձն իմ դարձո՛ յառաջին անապական սրբութիւն իւր՝ որ է ցնծութի՟ և հարսանիք հոգւոյ և առ տ՟ծ կապակցութի՟ ․ և արեամբ քով նորաստեղծեալ կենդանացո՛ զմեղօք մեռեալ հոգիս իմ , և բժշկեալ ապաքինեա՛ զա՟մ ազգ ցաւս և զվէրս և զխոցս և զկսկիծս և զմորմոքումնս

դիւացն 'ի բոլոր անձնէ իմմէ, և անհետ արա զապլխն:

Տ՛Ծ իմ յ՜ս ք՜ս՝ քաղցր և հմուտ և իմաստուն բժիշկ՝ դեղ և կամոկ հոգւոց մերոց, արկ զմատն հօր քո՝ և բաց զականջս իմ, որ խցեալ է իբրև զխուլ և քարբի. և տուր ինձ հոգի երկիւղի՝ լսել զհրամանս քո, և առնել զնս. և գիր զարարչագործ մատն քո 'ի վերայ կափուցեալ աչաց հոգւոյ իմոյ՝ որ խաւարեցաւ 'ի դիւական ծխոյ և 'ի մեղաց ձնձերաց. զաչս հոգւոյս բաց՝ և լուսաւորեա յստակ լուսով քո Տ՛Ծ իմ յ՜ս ք՜ս:

Որ՜պ զի ուղիղ տեսից և իմացայց զ՜մ ինչ, և բարիոք որոշեցից զչարն 'ի բարւոյն, և զայն կեանքն յայս կենացս, և զսուտն 'ի ճշմարտէն, և զանիրաւս յիրաւէն, և զապականեալս յանապականէն:

Տ՛Ծ իմ, պնդեալ հաստատեա և ողջացո՛ 'ի կամս քո զթուլացեալ և զլուծեալ և զլքեալ անդամս հոգ-ւոյ և մարմնոյ իմոյ, որ եղծեալ ս-

ողկանեցան և՚ի շարաւ դարձան յան
բաւ չար գործոց իմոց ։

Ա՜ծ իմ յ՜ս ք՜ս՝ զա՜մ գարշելի բո-
րոտութի՜ անզգամութեան իմոյ՝ որ
եղև ՚ի հոգիս իմ ՚ի դիւացն սերմանց
և յիմ կամաց , ջնջեալ սրբեա՛ ՚ի
հոգւոյ իմմէ՝ ա՜ծ իմ, և ողջացո՛ ըզ-
թիւրեալ և զխեղեալ ձեռս և զոտս
հոգւոյ իմոյ՝ որ գօսացեալ ցամաքե-
ցան ՚ի բաղում ախտից ։ զի թէ կա-
միս կարո՛ղ ես առնել զսքանչելիս ,
և բժշկել զանձն իմ ՚ի շահ անձին
իմոյ և ՚ի փառս քո ։

Ա՜ծ իմ յ՜ս ք՜ս՝ որ վ՜ս բժշկութե՜
հոգւոց մարդկան՝ հայր քո առա-
քեաց զքեզ , և արդ մեղայ առաջի
քո քան զաւազ ծովու , բժշկեաւ
դադարեցո՛ և ցամաքեցո՛ ՚ի բոլոր անձ-
նէ իմմէ զհոսանս մեղաց արեան տե-
ւատեսութե՜ իմոյ , և զշարաւս ախ-
տից պոռնկութե՜ իմոյ ։

Եւ ՚ի սովեալ հոգիս իմ աճեցո՛
ողորմութե՜ քո զհաց շնորհաց քոց ,
և զկենդանութեան ջուր քո ։ լիցո՛

զսովեալս և զովացո՛ զպապաքեալս 'ի տապոյ կիզմանէ դժոխական հրոյն :

Ո՛ Տ իմ Յ͞ս Ք͞ս՝ որսո՛րդ բարի, որ իմաստութ͞բ ուսուցեր զգերեալ ազգս մարդկան 'ի կամակոր վիշապէն՝ որ կոչի բէեղզեբուղ · պատուիմ առ քեզ ողորմած, խնայեա՛ յեղկելիս, և ողորմութ͞բ քով որսա՛ և գողացի՛ր զանձն իմ յիշխանէն աշխարհի, 'ի պատրանաց դիւաց նորա, և 'ի սիրոյ կենցաղոյս · և գթութ͞բ քով և վ͞ս անուան քո՝ մաքրեա՛ զա͞մ թարախ բոլոր անձին իմոյ :

Որ͞պ զի ընդ յարուցելոցն և ընդ բժշկելոցն եղէց արժանի ուրախութ͞բ և ցնծութ͞բ խայտալ 'ի փառս քո · և գոհաբանութ͞բ օրհնեցից զանուն քո՝ ա͞ծ իմ յիսուս քրիստոս · քանզի ո՛չ ա՛յլ ինչ խնդրեմ 'ի քէն՝ յերկինս կամ յերկրի · բայց միայն բուժումն 'ի մեծ և 'ի սոսկալի ամօթոյն, և ազատումն յահագին տանջանացն · զի վ͞ս հանգստեան ո՛չ հարկեմ և ո՛չ թախանձեմ զքեզ՝

ա՟ծ իմ յ՟ս ք՟ս ։

Քանզի ոչ ունիմ բերան և կամ երես՝ զայս ածել զմտաւ. զի անչափ տրտմեցուցի զքեզ՝ և վիրաւորեցի չար և անօրէն գործովք իմովք. զի հանգստեան քում նոքա են արժանի՝ որ խաչիւ սպանին զմարմինս և զկամս մարմնոյ, և զաշխարհս ատեցին՝ և զքեզ միայն սիրեցին. Նա և ինձ այս բաւական արքայութի՟ է և հանգիստ և պսակ և լոյս անուշահոտ, զի ծանօթացայ գթութե՟ քո՝ և ո՟ր անուան, և հօր քո, և սուրբ հոգւոյն, և անուան համագոյ ո՟ր և անբաժանելի երրորդութե՟, բաւական խնդութի՟ է այն ինձ՝ և արքայութիւն ։

Որով ցնծամ և օրհնաբանեմ ըզմիաթագ ա՟ծութի՟դ հօր և որդւոյ և հոգւոյդ սրբոյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն ։

՚ի լերինն Թաբօրական, ՚ի ծովն տիբերիա-
կան, և ՚ի ջրհորն յակոբայ՝ որ ՚ի սամարիա-
տուաջի տեառն մերոյ յի՛ քի՛ ո՛չ բանին, ՚ի
խորոց սրտէ աղերս մաղթանաց ողորմելւոյս
վարդանայ և ամ՛ մեղաւորաց:

## ԳԼ. Ի.

Հրաշափառագոյն և զարմանա-
գործ արարիչ ա՛ծ իմ յս՛ քս՛՝ բա-
հանոյապես բարի և արժան կեն-
դանութե՛, որ ամենայնին քո անբաւ-
ուէր ձառագայթիւքն լուսաւորե-
ցեր զմեզ, բայց և թշնամին կենաց
մերոց անդադար ընկղմէ զմեզ:

Մ ո՛րոց և եկեալ երբեմն ՚ի մի-
տըս իմ՝ յիշեցի խոկալով զբազմա-
թարախ ամբարշտութիւս իմ. և ահա
մեյրն յուսահատութեանց բերեղզե-
րուղն կամէր քեցել և որոշել զանձն
իմ ՚ի բարի սաեղծողէդ իմմէ՝ ա՛ծ
իմ յս՛ քս՛. քանզի հնացայ ժամանա-
կաւ՝ և լցայ անպատուամ արխնա-
խառն շարաւով:

Դու ապա սննդակից եղէն ինձ 'ի մանկութե̃ իմմէ մինչև ցերիտասարդութիւն իմ եղեռնական չարիք և սովորական յանցանք, և սակաւ սակաւ աճեցին օր քան զօր, և ժամանեցին 'ի գործ կատարեալ ամբարշտութե̃. և ըստ մարգարէին դաւթի՝ ծանրացան 'ի վ̃ր իմ բեռինք մեղաց, և անօրէնութիւնք իմ բարձրացան քան զգլուխ իմ, և նեխեալ փտեցան վէրք հոգւոյս իմոյ, և խղխայթեալ եռան ոպ̃ մանր որդունք 'ի տղմի՝ ազգի ազգի և պէս պէս խածմունք և հարմունք առիւծադէմ և աղուեսաբարոյ շնակերպ նենգաւոր վիշապին:

Դու խոնարհութե̃ յոյս քո ժամանեալ կալաւ զձեռանէ իմմէ, և 'ի խոր խաւարէն վերաբերեաց զիս անակնունելի պատահմամբ:

Դու յորժամ ըմբռնեալ եղէ 'ի բարի որսողէդ՝ ելի խնդրել զքեզ, և ոչ գիտէի թէ՝ ուր իցես, մինչև հոգելից մարգարէն դաւիթ հասեալ կալաւ զիս, և ասաց. թէ յոյն քո՝

զոր հայցես, Թաբօր և Հերմոն յա-
նուն ն͞ր ցնծասցեն, և այսպէս մատ-
նացոյց առար ինձ զքեզ՝ անկարօտ
ա͞ծ իմ յ͞ս ք͞ս, որ վ͞ն իմ նուաստա-
ցար մարմնով։

Ա͞ն որոց նստայ մօք 'ի Թևս հող
մոց՝ և արագեցի փութով՝ և հասի
առ քեզ անհատաբար, և եկեալ ժա-
մանեցի առ քեզ՝ ա͞ծ իմ յ͞ս 'ի ն͞ր
լեառնս Թաբօր՝ առ հայրն քո 'ի մէջ
մովսէսի և եղիայի։

Օ՛ի Թէպէտ և դու ես նրբա-
գոյն և անօսր և արագապէս փախչող
'ի մտաց եղականաց, բայց ո՛չ կարես
փախչիլ 'ի ձեռաց հոգւոյ իմոյ՝ ըստ
կարողութե͞ իմոյ. քանզի նախ ես 'ի
քէն ուսուցեալ ըմբռնեցայ, զի ան-
շփոթ միացար բնութե͞ իմ ընտա-
նի և աղքատիկ մարմնոյ։

Եւ իմացայ՝ զի վ͞ն մեծ խորհրդոյ
եկեր 'ի լեառն Թաբօրական, և հա-
ներ ընդ աշակերտս քո. զի տես-
ցեն զմովսէս և զեղիա զանտեսան
հօր քոյ՝ և ուսցին 'ի նոցանէ ըզ-

համբերութ՟ի. նաև զի տեսցեն ըղ-փառս սրբոց՝ զոր շնորհես ն՟ջ յօրն մեծ. և զի տեսցեն զփառս ք՟ո՝ և քարոզեսցեն, և իմասցին թէ՝ ոչ ես դու մովսէս՝ և ոչ եղիա, որո՟վ կար-ծէին հրէայքն. և զի լուիցեն զհօր վկայութ՟ի 'ի վ՟ր ք՟ո՝ և պատմեսցեն մարդկան զփառս ք՟ո։

Առ որոյ և ես եղկելի անձամբ իմով 'ի հեռաստանէ վաստակեալ հասի աստ, և երես 'ի գետին անկեալ կամ առաջի ք՟ո 'ի լեառն թաբօր, և երկրպագութ՟ե հող լիզեմ՝ համ-բուրելով զքարինս սորա, ուր կո-խեցին ա՟ծային գարշապարք ք՟ո։

Լու ամենունչ հառաչանօք հե-ծեմ 'ի խորոց սրտէ իմմէ, և մաղթա-նօք հայցեմ 'ի քէն բեկեալ սրտիւ և ծածկեալ մեծ ամօթով՝ անոխակալ ա՟ծ իմ յ՟ս ք՟ս, հաշտեա՛ց ընդ եղկելի անձն իմ վ՟ս սոսկալի ձայնի հօր ք՟ո, կանգնեա՛ զիս 'ի չարաչար գլորմա-նէս, և սրբեա՛ զմահացու թոյնս խո-րամանկ իժ օձին աղբադօնի՝ զոր

եհեղ նենգութիւն յանձն իմ, բարեխօսութիւն սրբուհւոյ մօր քոյ՝ և սրբոց առաքելոց և մարգարէից, որք էին անդ՝ ա՟ծ իմ յ՟ս ք՟ս։

Ապաքինեա՛ զցաւս հոգւոյ իմոյ, և խնամութիւն սպեղանեաւ զվէրսն, և անհե՛տ արա զխայծուածն վիշապին, և 'ի պատրանաց նորա փրկեա՛ զիս՝ ա՟ծ իմ։

Ո՜վ դու ես ողորմած և խնամատու բժիշկ՝ որ ապրեցուցեր զանկեալն 'ի ձեռս չար աւազակացն, խնայեա՛ յիս՝ և ապրեցո՛ զանձն իմ 'ի ձեռաց չարիմաց դիւացն. զի կամ կորագլուխ և անօգնական մատնեալ 'ի ձեռս նոցա՝ որք չարաչար աւազակեալ գերեն զիս, և անդադար խոցեալ վիրաւորեն զանձն իմ։

Ա՟ծ իմ յ՟ս ք՟ս՝ որ սակաւ մի թեթաքամացուցեր զփառս քո այնքան՝ որչափ զաւուրս քո զարդարես յօրն մեծ, և 'ի նոյն մասս փառօք երևեցուցեր զմովսէս և զեղիա. և անթերի վկայեցար 'ի հօրէ և 'ի նորին ար-

ւեսլեան · որք 'ի մահ խաչին փութա-
ցուցանէին զքեզ հրամանաւ հօր՝
յաղագս ադամայ և ծննդոց նր ·

Ո՛Տ հարցն իմոց՝ երևեցո տո
եղելես զողորմութիւն շնորհս քո ,
լուսաւորեա զխաւարեալ անձն իմ,
և փրկեա 'ի հնարից նենգաւոր դի-
ւացն , և քաւեա զգաղտնի թարախ-
եալ և անտեսակ և անպատմելի անօ-
րէնութիւն իմ · և սիրով վկայեա և
հաստատեա զողորմելիս 'ի հաւատս
հօր քոյ և հոգւոյն սրբոյ և յաստուած-
մարդեղութիւն քո ։

Նու 'ի խաւարամած աշխարհէս
բարձրացո զխս՝ ա՛Ծ իմ, 'ի վեր քան
զլեառնս թաբօրական 'ի վր հաւա-
տոյ և յուսոյ քո , և 'ի վր լերինն սի-
օնի 'ի գաւառն երանելեաց , ուր են
անտեսք հօր քոյ մովսէս և եղիա · և
քեզ փառք յաւիտեանս յաւիտե-
նից · ամէն ։

Ո՛Տ իմ յս քս՝ որ անհետ գնա-
ցիւք շրջիս 'ի վր թևոց հողմոց , և
մարմնով գնայեր 'ի վր ծովուն տի-

բերայան՝ իբրև ՚ի մէջ վիմի , և ցուցեր զանբաւելի ա̃ծութ̃ի քո՝ զի ստեղծօղ ես , դադարեցուցեր զխռովեալ ալիս նր̃՝ և սաստեցեր հողմոցն , և վեր առեր զնաւեարս ՚ի հեղձմանէ . յօրինակ՝ զի սանձելոց էիր զալիս չարաչար խռովեալ մեղաց ծովու աշխարհիս , սաստելոց էիր դիւաց և հողմոց նց̃՝ որ է անյուսութ̃ի , որով ՚ի սուզմանէ ծովուս ՚ի վեր բերելոց էիր զազգս մարդկան :

Նաև ՚ի խորհուրդ և յօրինակ խոզիցն՝ զչարիմաց դևսն ՚ի ջուր սուրուազանին հեղձուցանելոց էիր . իսկ զմարդիկ յիմարեալ ՚ի դիւացն՝ զգօն և զգաստ առնելոց էիր , որպ̃ էս և զայսահար գերգեսացին արարեր :

Յաղագս այսորիկ՝ ա̃ծ իմ յ̃ս ք̃ս՝ յեզր տիբերականն ծովուն անկեալ կամ երես ՚ի գետին՝ հող լիզեմ առաջի քո , և ՚ի խորոց սրտէ պաղատիմ առ քեզ . կարկառեա առ իս զողորմութե̃ և զշնորհաց քոց ձեռն . կորզեալ հան զանձն իմ ՚ի հեղձմանէ

խռովեալ ծովուս մեղաց ալեաց․ ուր հեղձնում ՚ի բազում չարեաց իմոց, և յերկմիտ կեղակարծ թերահաւատութենէ․ և ջնջեա բովանդակ զանզգամութիւնս բոլոր անձին իմոյ՝ ա՛ծ իմ յ̅ս ք̅ս։

Եւ անթերի դաւանութ̅բ հաստատեա զիս ՚ի հաւատս համագոյ ս̅բ երրորդութեանդ անբաժանելի․ և սատակեա այսոց պղծոց՝ ա՛ծ իմ յ̅ս ք̅ս, զի մի՛ չար հողմով խուրեանց սուզանիցեն և ընկղմեսցեն զիս․ և զխռովարարն՝ որ է յիս, ընդ խոզիցն հեղձեա ՚ի ջուրս ջերմ արտասուաց իմոց և յառուս շնորհաց քոց․ զչար դևսն՝ որք անմիջոց կեղեքեն նեղեն և խոցոտեն զհոգիս իմ ա՛ծ իմ յ̅ս։

Ապահովեա և հանդարտեցո զբոլոր անձն իմ՝ խաղաղանալ ՚ի մրրկեալ հողմոց և ՚ի խռովութե̅ ալեաց դիւական բերմանց մեղաց ծովուկենցաղոյս այսորիկ։

Ա՛ծ իմ յ̅ս ք̅ս՝ որ ՚ի տգէտ ձկնորսաց ժողովեցեր զաշակերտսն քո, և

լցեր զնո՟ շնորհօք, և 'ի ձեռն նոցա
րատ նմանութեան ձկանց կարթեալ
հաներ զազգս մարդկան 'ի մեղաց և
յանհաւատութե՟ ծովէ. ա՟ծ իմ
յո՟՝ բարեխօսութե՟ նց՟՝ և աղօթիւք՝
կարթեալ հան զանձն իմ շնորհօք
քո 'ի սևացեալ ծովէս մեղաց աշ-
խարհի դառնաբեր հողմոց՝ և յալ-
եաց դիւացն։

Ա՟ծ իմ յո՟ քո՟՝ կառավար և զօ-
րապետ երկնից՝ դղյացուցիչ և հան-
դիստ ա՟մ եղելոց՝ էակից հօր և փա-
ռակից ս՟բ հոգւոյն. որ վ՟ իմ առեր
զծառայի կերպարանս, և 'ի ճանա-
պարհի մոլորմամբ վաստակեցար, և
եկեալ հանգեար յաղբեր մեծ նա-
հապետին յակոբայ 'ի սիկիմ, զոր ետ
բաժին յակոբ յովսէփայ, և 'ի խոր-
հուրդ ս՟բ եկեղեցւոյ քո սրբեցեր
զաղտեղի կինն սամարացի, տալով
նմա զջուրն կենդանի՝ որ բղխէ 'ի
շնորհաց սրբոյ հոգւոյն։

Յաղագս այսորիկ և ես եղկելի
անձամբ իմով եկեալ հասի առ ջբր-

հօրն՝ ուր բազմեցար դու քն · և եմ աշխատեալ ՚ի բազում մեղաց և՚ի չարեաց իմոց · և արտասուագոչ մաղթանօք հայցեմ ՚ի քէն՝ ա՟ծ իմ, աղաչանօք ա՟մ սրբոց՝ և սամարացի կնոջն՝ որ մնհաւանք վկայեաց ՚ի վ՟ր ն՟ր անուան քո, ջնջեա զբազմաբողով ծովացեալ մեղս և զյանցանս իմ սրբարար և կենդանարար ջրով հողւոյդ քո սրբոյ, և ջերմ արտասուօքս ՚ի քէն շնորհելոյ ՚ի սրտէ իմմէ ։

Եւ ը՟ն մարմնոյ փառաւորելոյն քո՝ քո ա՟ծ իմ յ՟ս, ջնջեա յանձնէ իմմէ զա՟մ փառասխս ոխըծ դիւացն՝ զոր անդադար սերմանեցին յանձն իմ զդրոշմն ապականութե՟ իւրեանց ։

Ա՟ծ իմ յ՟ս քո՝ կամեցող փրկութեան իմոյ, խնայեա և յափշտակեալ հան զանձն իմ ՚ի մեղաց՝ և յանխրաաշխարհէս՝ և՚ի փորձ անմարմնոյն կլտուսին · քանզի եկեալ հասի ՚ի հունձրս հնացեալ աւուրքս, և լցայ բազում անառակ գործովք դիւականօք, և գերանդեաւ զօրութե՟ քո

հնձեա՛մ և չորացո՛յց զանօրէն և զչար որոմունս դիւացն ։

Նու սրբեա՛մ զեղկելոյս իբրև զկինն տամարացի, և պատրաստեա՛մ զիս գործովք խմովք պայծառ համեղ կերակուր քեզ և հօր քոյ և հոգւոյդ սրբոյ ․ և յաւուրն մահու հնձմանն իմոյ դքարզցր և զբարի հրեշտակ առաքեա՛մ և հնձեա՛մ զիս, որ ընտա ոչ հեռացայց 'ի մանկական և յանմիտ և յանսանական մեղաց ։

Նայց յամ սրտէ և 'ի բերանոյ կարդամ, վայ եղկելի անձին իմոյ ․ զի լցայ չարեօք քան զամենեւեան՝ զոր սիրէ սատանայ՝ և զոր ատէ ած ․ յորմէ փրկեաց է և ազատեաց շնորհօք իւրովք մարդասէրն ած զմեզ՝ և ըղձեզ՝ և զամ մարմին՝ տա և յօրն ահագին 'ի սոսկալի ատօթոյն, և 'ի դառն տանջանացն, բարեխօսութե ամ սրբոց, մանաւանդ աղօթիւք երից աշակերտացն քոց՝ որք էին ընդ քեզ 'ի լեառն Թաբօր, և ո՛րք մարգարէիցն մովսէսի և եղիայի ․ և քեզ

փառք և օրհնութիւն , այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից · ամէն ։

---

Ի բեթանիա 'ի լեառն Ձիթենեաց , յաւանակն և 'ի տաճարին , 'ի խորոց սրտէ առաջի ջ՟ն ք՟ն՝ աղերս մաղթանաց ողորմելույս վարդանայ և մեր մեղաւորաց ։

## Գ․ Լ․ Ժ

Անեղակից Հօր և Համագոյ ս՟րհոգւոյն՝ զարդարիչ գեղեցկութե՟ ջրամած կամարին , և պսակիչ լերանց և դաշտաց ծաղկօք՝ ա՟ծ իմ յ՟ն ք՟ն , որ վ՟ն իմ ունայնացար կամաւ , և զիս ճոխացուցեր անբաւ փարթամութ՟բ · իսկ անմարմին աղբիւրն անյագ տիրեաց 'ի վ՟ն իմ, ծծեաց զկենդանութի՟ հոգւոյս՝ և ելից զանձն իմ անեզրական չարեօք 'ի կամս իւր ։

Ս՟որոյ և ես դարձեալ դողացայ և 'ի սուգ մտեալ վիրաւորեցայ ողնաբեկ անյուսութ՟բ յահէ լեու-

նայեցեալ ամբարշտութեան և անօրէ-
նութեան իմոյ. կամ նստեալ 'ի վերայ
գլխոյ իմոյ անկշռելի ծանրութբ՝ և
նեխեալ ժահահոտութբ. քանզի
կամաւ իմով ձևացայ՝ որ չէի, և նըս-
տուցի զանձն իմ թագուհի և թա-
գաւոր դժոխոցն:

Ընբաւ չարագործութբ և սոս-
կալի չարեօք հեռացայ 'ի քէն՝ ա̃ծ
իմ յ̃ս՝ առաւել քան զա̃մ ստեղծ-
ուածս քո. և անյուսութեան դևն
ջանայ հեղձուցանել զնշոյլ շնորհաց
քոց՝ որ կայր 'ի հոգիս իմ զխղճմը-
տելն և զերկիւղն՝ որ առ քեզ:

Վասն այսորիկ խորհեցայ վերա-
կանգնիլ, 'ի քէն զօրացեալ՝ ա̃ծ իմ
յ̃ս ք̃ս, 'ի խորխորատէ անյուսու-
թեան. և ելի զհետ ձայնի հանճարեղ
և իմաստուն կոչողիդ՝ ցնծալով. և
եկեալ ժամանեցի առ քեզ 'ի բեթա-
նիա արագութբ միայն իմոյ՝ է̃նդ
ա̃ծ, յորժամ վարդապետն յարուցեր
զչորեքօրեայ մեռեալն զղազար. յա-
րինակ՝ զի ղաղամ հանելոց էիր 'ի

գժոխոցն, և զորս ընդ նմին. և զազգըս մարդկան փրկելոց էիր 'ի մահահոտ մեղաց և յանհաւատութէ̃ և յանյուսութենէ։

Նա 'ի խորհուրդ վերջին յարութե̃ մերոյ՝ բերեր կենդանի զհատեալն զղազար. և զնոյն ձայնդ՝ որ կոչեաց զղազար, մահն ոչ կարաց ըմբռնել զնա. կոչելոց ես և զա̃մ որդիս մարդկան յօրն վերջին յարութե̃ մերոյ։

Յաղագս այսորիկ անկեալ կամ առաջի քո երկրպագութբ̃ 'ի բեթանիա 'ի գերեզմանն ղազարու, և հող լիզեմ՝ ա̃ծ իմ յս̃ քս̃, և կողկողելով հայցեմ 'ի քէն՝ ա̃ծ բոլորից՝ անմռունչ հեծութբ̃ 'ի խորոց սրտէ, բարեխօսութբ̃ մօր քո և կուսի և ա̃մ սրբոց՝ և ղազարու և քուերց նորա՝ անարատ սիրելեացն քոց՝ ա̃ծ իմ յս̃ քս̃, ձայնիւ և զօրութբ̃ քով զարթո՛ զեղկելի անձն իմ 'ի հեշտ քնոյ ծուլութե̃՝ և 'ի մեռելութէ̃ ախտից մեղաց հեշտութե̃ և մարմանջման՝ որպէս զհատեալն զա-

զար . և ղձոտ մեղացն մաքրեա՛ յինէն անուշահոտութբ̃ ա̃ծութե̃ քո։

Եւ շնորհօք քո լցո՛ զանձն իմ՝ և յարո՛ ՚ի նեղ տապանէ չարեաց և յանյուսութէ̃ . և խզեալ պատառեա՛ և քակեա՛ յանձնէ իմմէ զպատանս ա̃մ մեղաց՝ զոր կարեաց յանձն իմ չարաչար սարդնակարկատ մեղօք հրակայն յաղթանդամ, և քակեա՛ զամբարշտութիւս իմ՝ փրկելով զեղկելի տկար հողս յաւաջինկայ կործանօղ որոգայթէն բելիարայ . և զօրացո՛ զիս տանել զկամս քո բարի ա̃մ առաքինութբ̃՝ ա̃ծ իմ յս̃ քս̃։

Նա և զբովանդակն՝ զոր արարեր առ հոտեալ մարմինն ղազարու , որ էր օրինակ ադամայ և ծննդոց նր̃ , զա̃մ հրաշագործեա՛՝ ա̃ծ իմ առ մեղօք մեռեալ և հոտեալ անձն իմ, և լցո՛ և կատարեա՛ ողորմած և քաղցր յիսուս քրիստոս՝ կամք և խորհուրդ և բան հօր։

Այնպէս արա՛ և կատարեա՛ ա̃ծ իմ՝ առ ա̃մ հոգիս և յանձինս մե-

ղուորաց՝ բարեխօսութ՟բ մօր քոյ և միշտ կուսի . որք յուսով և հաւատով դիմեն և գան 'ի տեղիս հրաշալի մարդեղութե՟ քոյ վասն մեղաց իւրեանց . և հայցեն 'ի քէն թողութիւն՝ ա՟ծ իմ յո՟ քո՟ ։

Մ՟ո որոյ հայցեմ 'ի քէն՝ զի դու յայս խորհուրդ խոնարհեցար , և վ՟ս այս պատճառիս առաքեցար , զի ողորմիս՝ և հայցողին տաս , և բաղխողին բանաս , որ՟պ և հրամայեաց անսուտ բերան քո ։

Նաև որ տկար են մարմնով՝ և ոչ կարեն գալ 'ի տեղիս մարդեղութե՟ քոյ , ուր և իցեն և ընթեռնուն զերգս զայս հաւատով և յուսով և մտօք՝ եկեսցեն և հոգւով գաղտաբար և ծածկապէս 'ի տեղիս տնօրէնութեան քոյ , և ջերմ հաւատչանօք հայցեն 'ի քէն թողութիւն մեղաց իւրեանց , ծնողաց , և ազգաց՝ թշնամեաց և բարեկամաց՝ ա՟ծ իմ յո՟ քո՟ , տուր ինձ և նց՟ զխնդրուածս ը՟ս հաւատոց իմոց և նց՟ , բարեխօսութ՟բ ամ՟

սրբոց ․ զի դու ես բարի և ողորմած , և զայս կամիս դու և Հայր քո և Հոգին սուրբ ։

Տէր ա̃ծ իմ և ա̃մ եղելոց յո̃ քո̃՝ մտաք և բանո̃յ , որ ընդ Հօր քում բազմեալ Հանգչէիր յաՀեղակերպ յանպատուեաս աթոռ , և վ̃ն մեր խոնարՀեալ նստար 'ի Նոր յաւանակի 'ի լեռնէս ձիթենեաց ․ իջեր յերուսաղէմ զարմանաՀրաշ փառաւորութբ̃՝ և բարեբանութբ̃ , 'ի խորՀուրդ և յօրինակ գալստեան քո 'ի սոսկալի օրն վերջին ․ և պատուեցար 'ի ճանապարՀիս ոստովք ձիթենեաց և Հանդերձիւք ․ յօրինակ՝ զի ո̃րք պատրաստեցեն զանձինս իւրեանց քեզ ճանապարՀ և Հանգիստ , և Հօր քում և Հոգւոյդ ս̃րյ , և կանաչասաղարթ առաքինութբ̃ և լուսաւոր գործովք՝ եղեն քեզ դադար և բնակութիւն յայս կեանս , և յայն՝ որ գալոցն է ․ և ո՛չ կարաց բառնալ զանտանելիդ էջն բեռնակիր , այլ՝ աւանակն որ է յրմուղ և անկիրթ 'ի ծանրութենէ

բեռին. և այս եղև 'ի մեծ խորհրդոյ օրինակ, զի հրեայքն՝ որ էին սնեալ և վարժեալ օրինօք և մարգարէիւք, ոչ կարացին բառնալ զքեզ յանձինս իւրեանց. իսկ հեթանոսք՝ որ ոչ էին ընդել և սովոր օրինաց և բարեաց, իբրև լուան զհրամանս քո, հնազանդեցան լծոյ և բեռին օրինաց քոց:

Յաղագս այսորիկ և ես եղկելիս առեալ զանբաւ մեղս իմ ընդ իս, և մնաց արագութե̃ եկեալ ժամանեցի առ քեզ զառ 'ի վայր ճանապարհիս լերինն Ձիթենեաց. և անկեալ յերկիր հող լիզեմ երես 'ի գետին առաջի քո՝ ա̃ծ իմ յ̃ս ք̃ս. և աղաչեմ ըզքեզ՝ բարեխօսութե̃ ա̃մ արդարոց. և'ս առաւել սիրեցեալ աշակերտացն քոց, խնայեա՛ յիս ողորմած տ̃ր իմ և ա̃ծ, և քաւեա՛ զանչափ գործս անօրէնութե̃ իմոյ, և կազմեա՛ զհոգիս իմ ճանապարհ և հանգիստ քեզ և հօր քում և հոգւոյն սրբոյ, և շնորհեա՛ ինձ զօրութիւն՝ բառնալ

զքեզ և զխորհուրդ քո յուսս հոգ-
ւոյ իմոյ, և տուր զանձն իմ քեզ նոր
կառք և աւանակ, և փոխանակ ու-
տոցն ընկա՛լ զայս և զհաւատս իմ՝
որ է ՚ի քեզ, և ՚ի հայրն քո, և ՚ի
հոգին սուրբ. և զա՟մ գործս բարիս
շնորհեա՛ ինձ կատարել ՚ի կամս քո
ա՛ստուած իմ։

Ա՟Ծ իմ յս՟ քս՟՝ պարգևեա՛ ինձ
իմաստութի՟ օրհնաբանել զքեզ ա-
նարատ հոգւով՝ որպ՟ օրհնաբանե-
ցար յաննենգ ժողովրդենէն և ՚ի
սիրելեացն քոց։

Ա՟Ծ իմ յս՟ քս՟՝ զտուն սգոյն ըզ
բեթանիա արարեր տուն ուրախու-
թեան՝ յարութե՟ն ղազարու սիրել-
ւոյ քո. յօրինակ՝ զի զադամ և ըզ
ծնունդս նո՟ ուրա՛խ առնելոց էիր,
որ կայր ՚ի սուգ տրտմութե՟ վ՟ա ան-
բաւ չարեացն՝ որք պատահեցանն նմ՟։

Նաև արդ՝ վ՟ա անճառ խոնարհութե՟
քոյ ա՟Ծ իմ և տէր՝ զերծո՛ զիս ՚ի
սգոյ տրտմութե՟ մեղաց, և թո՛ղ զա-
նօրէնութիս իմ. և նորոգեալ զանձն

իմ՝ արա՛ տուն ուրախութե̄՝ սրբելով յա̄մ մեղաց։

Ո՛Տ իմ յ̄ս ք̄ս՝ որ բազմահանդէս ժողովրդովք յետոյ և յառաջոյ՝ և աշակ̄րդն աղաղակաւ մտեր 'ի տաճարն սողոմոնի՝ զոր կանգնեաց զօրաբաբէլ, և լուսաւորեցեր զեկեղեցին՝ յօրինակ լուսաւորութե̄ խաւարեալ որդւոց մարդկան, և բացեր զբերան անկատար տղայոցն յօրհնաբանութ̄ի քեզ՝ անկարօտ ա̄ծ, զի գիրն լցցի՝ որ ասէ թէ՝ 'ի բերանոց մանկանց տղայոց կատարեցեր զօրհնութ̄ի. և արարեր զայս յօրինակ արձակման եղուացն հեթանոսաց՝ որք օրհնաբանեն զհամագոյ ա̄ծութ̄ի հօր և որդւոյ և հոգւոյն ս̄րյ։

Ո՛Տ հարցն իմոց յ̄ս ք̄ս՝ առաջի քոյ անկեալ կամ 'ի տաճարին, և պաղատանօք հայցեմ 'ի քէն՝ բարեխօսութե̄ ա̄մ երկնաւոր քոց զօրացն. լուսաւորեա՛ զխաւարեալ աչս հոգւոյ իմոյ, և ծագեա՛ 'ի հոգիս իմ զմաքուր լոյս շնորհաց քոց՝ փրկելով

զիս 'ի դիւային հնարից, և թող զա-
նեզրական մեղս իմ. և որ բացեր ըզ
բերան տղայոցն 'ի փառս ա̃ծութե
քոյ՝ բաց և զմեղօք փակեալ բերան
իմ, յամ՛ժամ օրհնաբանել զքեզ և
փառաւորել արժանացես 'ի հանգիս
քո ընդ զօրսն անմարմնոց:

Ա՛Ծ իմ յ՛ս ք՛ս՝ որ արարեր խա-
ղաղն չուանեաց, և բարկութ̃բ 'ի
բաց վարեցեր 'ի տաճարէն զաղաւ-
նեվաճառսն, և զգնօղսն, և զայլսն.
'ի խորհուրդ և յօրինակ՝ զի յորն վեր-
ջին 'ի բաց վարեսցես 'ի վերին տա-
ճարէն, և յառաջատէն հօր քո
զայնոսիկ՝ որք սնացուցին մեղօք զա-
ղաւնացեալ հոգիս իւրեանց՝ վաճա-
ռելով ընդ մեղաց. և որք վաճառեն
և տան զշարիսն՝ և փոխարէն տանուն
զչարն, և որ փոխեն զդրամսն՝ որ է
սպառնկերին ո̃յ՝ բարի գործքն՝ 'ի հո-
գիս մեր, և առնուն զպատկեր վի-
շապին՝ որ է մեղքն, և զայլ չարա-
գործսն՝ որք անզեղջ մեռանին, խա-
ղաղանաւ բանի քոյ 'ի բաց վարեսցես

եւ բարկութե̃ յարքայութեն քում-
մէ յոր ահագին դատաստանին։
Տ̃Ծ իմ յս̃ ք̃ս՝ երեւ ՚ի գետին եր-
կրպագութե̃ հող լինել առաջի քո
՚ի տաճարին քում, եւ ա̃մ արդարովք
քո աղաչեմ զքեզ՝ եւ խնդրեմ ՚ի քէն
ա̃Ծ իմ, յահագին օր դատաստեան քո
մի բարկանար ինձ տէր խոստա ըստ
գործոց իմոց, այլ արա առ իս ողոր-
մութի̃. եւ մի ՚ի բաց վարեր ողոր-
մելիս ընդ յիմար կուսանացն ՚ի հար-
սանեան քո յառագաստէ վ̃ս չարեաց
իմոց, այլ՝ այսօր նախ քան զատեանն
քո՝ խրատեա զիս ՚ի կամս քո, եւ մի
թողուր զիս ՚ի կամս իմ՝ եւ ոչ ՚ի
կամս դիւացն. զի լաւագոյն է տա-
ռէն սակաւ մի տանջիլ ՚ի քէն հայ-
րաբար ըստ կարողութե̃ իմոյ, քան
թէ սակաւ մի հանդչիլ ՚ի մեղս՝ եւ ան-
դէն մշտնջենաւոր տանջիլ ՚ի հուրն։
Վ̃ս այսորիկ տուր ինձ ժամա-
նակ ապաշխարութե̃ ա̃Ծ իմ՝ ըստ
կամաց քոց, քանզի ըստ կամաց դի-
ւացն վաճառեցի զբոլոր անձն իմ,

զհոգիս՝ զմիտս՝ և զմարմինս իմ ընդ-
դէմ չարեաց յախտս մահաբերս, և
կամաւ թողի զբարի գործն՝ որ է
պատուէր քո, և արարի զչար գործս՝ որ
է պատուէր վիշապին. կորուսի զշը-
նորհս ս̃բ աւազանին՝ և զքահանայ-
ութիւն՝ դիւացն խորհրդակցութ̃բ.
և կեղծաւորեալ ձևացայ բարի և
արժանաւոր առ այս մարդկան՝ և
մորթով գառին ծածկեցի զգայլն
քանասար, և անարժան պատարա-
գեցի՝ և ճաշակեցի լրբութ̃բ զքեզ՝
անարատ գառն ա̃յ յ̃ս ք̃ս ։

Ա ո̃ այսորիկ գոչեմ առ քեզ՝ ա̃ծ-
իմ, խնայեա՛ յիս՝ և մի՛ կորուսաներ
զիս. այլ՝ ողորմութ̃բ քով քաւեա՛
զանսուտ եղեռնական անբարշտու-
թիւնս իմ՝ մարդասիրութ̃բ քով և
չարչարանօք և ս̃բ արեամբ քով, և
քեզ վայելէ փառք իշխանութի և
պատիւ, այժմ և միշտ և յաւիտեանս
յաւիտենից. ամէն ։

՚Ի մ՟ջ վերնատանն առաջի յի՟ քի՟ ծոցածին
բանին ա՟յ, ՚ի խորոց սրտէ աղերս մաղթանաց
եղկելւոյս վարդանայ և ա՟մ մեղաւորաց ։

## ԳԼ. Ժ

Յ՟ս ք՟ս թագաւոր փառաց և լոյս
անստուեր, որ փարթամացուցեր ըզ
մեզ անեզրական ձիրութ՟բ՝ որ ՚ի
վեր է քան զմիտս և զբանս. իսկ ես
եղկելի անձամբ իմով կամաւ ընկեցի
զփարթամութի՟, և առեալ պահեցի
զաղքատութի՟ հոգւոյ. և մեծ ջանիւ
ժողովեցի զանշահ մուր՝ և խառնեցի
զորխնախառն շարաւ, և ամենաւ
պահեցի ՚ի ծոց իմ. և յա՟մ աւուր
անդադար օծանեմ զերեսս իմ, և
դեղեմ զբոլոր անձն իմ, և լինիմ արջ-
նազգեստ սևադէմ հնդիկ զազրա-
տեսակ, և օձաձև դիւապատկեր կա-
մարար թշնամւոյն՝ ըստ տղմասէր խո-
զիցն թաւալեալ յա՟մ ախտս գարշե-
լիս՝ զոր դու ատես ա՟ծ իմ. և նման
քարակոյտ և քարակարկառ բըրա-

կերպ ժողովեալ աւազոց՝ որ ոչ թուին և՚ի համար գան, եկեալ ժողովեցան ՚ի վ՟ր իմ տեսակք ա՟մ չարեաց և անօրէնութեանց ժահահոտ մեղաց, շնակերպ դիւացն խորհրդածութ՟բ՝ և ձեռնարկութ՟բ՝ և խմով կամայորդոր յօժարութ՟բ:

Եւ զարհուրեցուցանէ զեղկելիս ահագին երկիւղ դատաստանի քո՝ ա՟ծ իմ յ՟ս ք՟ս. վ՟ն որոյ ոչ կամիմ և ոչ ախորժեմ հեռանալ ՚ի քէն, քանզի կոչումն քո և ողորմութ՟ի խանդաղակաթ առար զիս ՚ի խոնարհութ՟ի և ՚ի նուաստութ՟ի քո, առաւել քան ՚ի բարձրացեալ մեծութ՟ի քո. զի թէ դու ոչ էիր նուաստացեալ և ոչ խոնարհեալ՝ մեք ոչ էաք մեծացեալ՝ և ոչ քեզ ծանօթացեալ. և քան զմեծութ՟ի քո՝ շահաւէտ և ցանկալի է աղքատութ՟ի քո, զի մեզ զի՛նչ օգուտ էր մեծութ՟ի քո ծածկել և թաքուցել ՚ի մէնջ. ահա աղքատութ՟ի քո՝ լաւագո՛յն է մեզ քան զարքայութ՟ի և զփառս քո. և յայս ցնծալոյս՝ որ ծանօթացայ

տեղծողիդ իմոյ, ոչ այլ ինչ կայ 'ի սրտի իմում խնդրել 'ի քէն՝ և հարկել զքեզ, բայց միայն զերծումն 'ի սոսկալի և յանվախճան տանջանացն։

Յաղագս այսորիկ եկի զհետ քո՝ զի գտից զանհասանելիդ, և անքայլ գնացիւք մտացս ակնարկութե̄, և հոգւոյս զխմբեցմամբ արագեալ հասի առ անհասանելիդ. և գտի զքեզ բազմեալ 'ի վերնատունն անձառ խոնարհութե̄ և մեծ խորհրդով, քանզի այս է տեղի սաստիկ խոնարհութե̄ քոյ քան զա̄մկիրան քո՝ զոր կրեցեր վ̄ն մերոյ յանցանաց՝ տ̄ ծ̄ իմ յ̄ս ք̄ս. զի լուացեր զոտս աշակերտացն զորդւոցն աբրահամու, և հատուցեր ըղփոխն նորա. քանզի նա կանխեաց և լուաց զոտս քո յառաջ քան զմարդանալն քո՝ տ̄ ծ̄ իմ յ̄ս ք̄ս։

Օրհնաբանեմ զքեզ. զի այսու լուացմամբս բացեր զամուլ արգանդն̄ր եկեղեցւոյ քոյ, որ̄ 'ի հասանան յորդանանու մկրտութե̄ քո. զի սոքա էին օրինակ ն̄ր աւազանին։

Առ այսորիկ ա՟ծ իմ յ՟ս ք՟ս՝ լու-
սացեալ մեղօք խմովք 'ի ն՟ր վերնա-
տունն անկեալ կամ առաջի քո . և
երես 'ի գետին երկրպագութ՟ե հող
լեզեմ, և անձայն հառաչանօք 'ի խո-
րոց սրտէ գոչեմ առ քեզ՝ ողորմած ,
և բարեխօս ունիմ առ քեզ զանձառ
խոնարհութ՟ի քո՝ զոր աստ կատա-
րեցեր , և զընտրեալ աշակերտսն քո՝
ք՟ս յոյս իմ , խոնարհեա՛ց յաղաչանս
եղկելի անձին իմոյ , և ջրով շնորհաց
և ցօղով ողորմութեան քո մաքրեալ
ջնջեա՛ զչարաչար և զարինախառն
մեղս անձին իմոյ , լուա՛ և սրբեա՛ խո-
նարհութ՟ե զենջակաւ քո , և արա՛ ինձ
երկրորդ աւազան զշնորհս և զողոր-
մութ՟ի քո , և զջերմ արտասուքն՝ զոր
դու պարգևես գալ 'ի սրտէ իմմէ հե-
ծութ՟ե և հառաչանօք :

Քանզի կորուսի՝ զոր դու ձրի
և անաշխատ ետուր ինձ՝ որպէս և
նախախնամօղ աշխարհի ա՟ծ իմ յ՟ս
ք՟ս . որ եկիր 'ի վերնատունն՝ զի կա-
տարեսցես զհին օրէնսն , և հաստա-

տեսցես զնորս. և գրեցեր կտակ ար-
եամբ ուխտի քո, և 'ի խորհուրդ կե-
նարար մահուան քոյ՝ դու ձեռօք
քո թաղեցեր զքեզ 'ի սիրտ և յորո-
վայն աշակերտացն քոց։

Յ՟ս ք՟ս թագաւոր և ա՟ծ եղելոց՝
տուաւել մեղայ քեզ քան զա՟մ ըն-
տեղծուածս քո, և 'ի խոնարհ իջի
քան զա՟մ դևսն սանդարամետակա-
նըս. վ՟ս խոնարհութե՟ քոյ և վ՟ս ո՟ղ-
արեան քոյ՝ լուա՛ զմեղս անձին իմոյ,
և արա՛ զեղկելիս արժանի՝ սրբութե՟
ճաշակել զա՟ծախառն ո՟ղ մարմին քո
և զարիւն, 'ի կենդանութիւն և 'ի
փրկութի՟ անձին իմոյ. և արեամբ քո
գրեա՛ զանուն իմ անջնջելի 'ի կտակս
մահուան ելից քոց կատարման յաշ-
խարհէ սատի. և զա՟մ ազգ մեղս՝ զոր
դու տես ա՟ծ իմ, սրբեալ ջնջեա՛ 'ի
բոլոր անձնէ իմմէ. փրկեա՛ զիս յա՟մ
մեղաց՝ և՛ս տուաւել յախտէն յու-
դայի՝ 'ի սիրոյ արծաթոյ և յագահու-
թե՟, որով բազումք կորնչին։

Ա՟ծ իմ յ՟ս ք՟ս՝ գոհանամ զքէն 'ի

բոլոր սրտէ իմմէ, զի ծանուցեր ինձ զանուն հօր քոյ՝ և զքեզ՝ և զհոգիդ քո սուրբ. աղաչանօք սրբոց առաքելոցն քոց՝ պարգևեա ինձ հոգի խոնարհութեան և հեզութեան, զոր տուր ՚ի վերնատունս կատարեցեր. և ՚ի նախատելն զքեզ և ՚ի խաչ հանելն՝ զնոյն մեզ ուսուցեր և պատուիրեցեր առնել. հալածեա յինէն զհոգին հպարտութեան և զոխակալութեան, զմախանաց և զատելութեան, զսնափառութեան և զաշխարհասիրութեան, և զամենայն ախտս՝ զորս ասես դու. զոր ՚ի գիտացն լինի և զոր յինէն, զոր կամայ և զոր ակամայ, զոր աստուածային և զոր մարդկային, զոր ՚ի բնականս և զոր յանբնականս, զոր գիտութեամբ և զոր անգիտութեամբ. և քաւեա զամենայն զգործեցեալ չարիսն իմ։

Ո՛ Տէր իմ Յիսուս Քրիստոս՝ յաղթող և ջերմ սիրոյ քո բնութեամբ՝ և առանց իմոց կամաց խլեա և հան զիս յախտից և ՚ի ցանկութեան և ՚ի սիրոյ աշխարհի. և վերացո զեղկելի թանձրամիտս զհետ քո յանուշահոտ և ՚ի լուսեղէն գա-

ւտոն երանելեաց . որք և 'ի կատարումն խորհրդոյ 'ի ս͞բ վերնատունն հրամայեցեր ընտրելոցն քոց և ա͞մ սիրելեաց անուան քոյ , թէ մի յամէք՝ և մի սիրէք զանցաւորս . այլ՝ փութով օ՛ն արկք յաստեացս , փախստական գնասցուք 'ի մշտնջենաւոր և յանվախճան հանգիստն . և քեզ ընդ հօր և հոգւոյդ սրբոյ փառք և պատիւ յաւիտեանս յաւիտենից . ամէն :

'Ի ձորն կեդրոնի՝ և 'ի տեղիս ծնրադրութեյն ք͞ի առաջի հ͞ր . 'ի խորոց սրտէ աղերս մաղթանաց ողորմելւոյս վարդանայ և ա͞մ մեղաւորաց :

## Գ·Լ․ · Ժ·Մ.

Ո՛վ իմ յ͞ս ք͞ս՝ հանճարեղ առաջնորդ՝ մե՜ծ իմաստուն և հզօր արուեստաւոր , որ թաքուն խորհրդով կատարեցեր զմարդեղութի քո , որ է զարմացումն ա͞մ երգելոց . որով

նորոգեալ կեցուցեր զմեզ՝ և հրաւիրեցեր յանձառ երանութի՜ քո։

Այս յանցանքն ադամայ և անէծք նր՝ ժամանեցին կալան և կապեցին զիս չարաչար, և ես թմբրեալ յիմարեցայ, և բնաւ ոչ գիտացի թէ՝ ուր իցեմ։

Վասն որոյ և ժողովեալ կուտեցի նման լերին զաղբ ժահահոտ, և խառնեցի զաղբալի թարախով, և մեծ փութով ջանացի՝ և զբոլոր անձն իմ ՚ի նմա թաղեցի անելանելի, և ստուգապէս ողորմելի եղէ, և աղքատ եղեալ գիջացայ քան զորդին կայենի բազմապատիկ՝ հանդոյն սողոմայ՝ և չար քան զնինուէի. քանզի զոր ոչ կարաց սատանայ գործել տալ ադամայ և ա՜մ ծննդոց նր զչարիս իւր, զայն ա՜մ ժողովեաց և բերեալ կուտեաց ՚ի վր իմ դէզս դէզս նման լերանց. և բազում ջանիւք մոլորեցոյց զիս ՚ի լուսաշաւիղ ճանապարհէն քումմէ առաջին մարդասպանն. և այն ունէր գալ մահուն և գողանալ զանձն իմ

'ի քէն առ՛ր Ա՜ծ իմ Յ՜ս Ք՜ս։

Իսկ ողորմութ՜ի քո կորզեալ եհան զիս 'ի ժանտից նորա․․ և սակաւ մի սթափեցայ 'ի քնոյ մեղաց , և ելի խնդրել զքեզ ընդ Ա՜ծ , որ յա՜մու-րեք ես` և բնաւ ոչ երևիս․ իսկ դու ելեալ 'ի վերնատանէն` և փութով թաքեար զաղտալեար․ ո՞չ զի մի՛ չարն իմացի զմարդեղութի՜ քո։

Ապա զիա՞րդ կամ ո՞ւր կարես թաքչիլ դու 'ի ձեռաց հոգւոյ իմոյ , որ է արագագոյն քան զհողմ․ քանզի դու ստուամբք լուսոյ քո և մարմնով քով անխզելի 'ի քեզ կապեցեր զիս` Ա՜Ծ իմ Յ՜ս Ք՜ս բանն Ա՜յ․ վ՜ն որոյ ելի 'ի վեր նատանէս զհետ քո մեծաջան փու-թով , և եկեալ ժամանեցի առ քեզ հոգւով 'ի ձորս կեդրոնի , և ահա տեսի զքեզ հոգւոյ ակամբք զանտե-սանելի ընդ Ա՜Ծ , զի մարմնովդ ա-դամայ անկեալ կայիր յերկիր առաջի երկնաւոր հօրն քո առ 'ի հատուցա-նել զպարտսն ադամայ վերջին հօրն քում ըստ մարմնոյ , և հառաչանօք

հաշտեցուցանէիր զանսկիզբն հայր
քո ա՟ծ ը՟ վերջին հայրն քո ադամ.
և յայնժամ բարձեր քրտամբն քով
զքիրտն նր՟, և երկնչելովն քով զեր-
կիւղ նր՟. և քո կամաւ թոյլ տուեր
ա՟ծացեալ մարմնոյ քո կրել զկիրս
մարդկայինս, զերկնչիլն՝ և զքրտնիլն՝
և զայլն. որպ՟ զի մի՛ չարքն առ աչօք
կարծեսցեն զմարդեղութի՟ քո՝ ա՟ծ-
իմ յս՟ քս՟. նաև վս՟ այնորիկ՝ զի հա-
մարձակեսցի մահն գալ և կլանել
զկիրդ՝ որ է մարմինդ քո հանդերձ
թաքուցեալ կարթիւք՝ որ է ա՟ծունդ
քո. որով ՚ի բաց հաներ և ընկեցեր
զմահն և զսատանայ ՚ի կարծեալ թա-
գաւորութե՟ իւրեանց:

Ա՟Ծ իմ յս՟ քս՟՝ բոլոր անձամբ ի-
մով անկեալ կամ առաջի քո ՚ի տեղիս
ծնրադրութե՟ քո և աղօթից, և երկր-
պագութե՟ հող լինեմ ՚ի վր՟ երկրի. և
աղօթիւք ա՟մ ս՟ց բարեխօս ունիմ առ
քեզ զա՟մ կամաւոր կիրս քո, զանեղ
հայր քո, և զքո գործակից ս՟բ հոգին,
և զկոյս մայրն քո, մեղայ յերկինս և

առաջի քո՝ ա՟ծ իմ յ՟ս ք՟ս · պարգե-
եա եղկելւոյս մասն աղօթից քոց
յառաջնոյն՝ որ 'ի լերինն, և 'ի միջ-
նոյն՝ որ առ գերեզմանաւն ղազա-
րու, և 'ի վերջնոյս՝ որ 'ի ձորին կեդ-
րոնի, և 'ի գողգոթայ՝ որ 'ի վ՟ր խա-
չին · որ էր յաղագս ադամայ և ծնըն-
դոց ն՟ր · և ջնջեա՛ զա՟մ մեղս անձին
իմոյ իբրև զադամայն, և կորզեա՛ զիս
'ի ժանեաց և 'ի յորովայնէ չար վիշա-
պին, իբրև զհայրն իմ · և երկնչելոյս
քո փրկեա՛ զիս 'ի չար և 'ի ա՟ստակար
երկխուղէ և յանյուսութ՟է, և քըր-
տամբքն քո լուա՛ զա՟մ մեղաց քերան
և զխոնաւութ՟ի և զչարաւ յանձնէ
իմմէ · որ դալարաբար կարթեցեր զա-
նօրէն իշխանն մահու՝ և ընկձեցեր
զնա, ա՟ծ իմ մաքրեա՛ զչարաւ հոգ-
ւոյս իմոյ՝ որ եղև 'ի խայծմանէ խո-
րամանկ իժ օձին, և իմաստութ՟բ քո
գողացիր և փրկեա՛ զողորմելի հոգ՟ս
'ի ձեռաց և 'ի բանտէ ն՟ր · և զօրութ՟բ
քո կարթեալ հա՛ն զանձն իմ 'ի սեաւ
ծովէս յանցանաց և 'ի մեղաց աշխար-

հի՝ որ է ժանիք և ...ովայն սանայի։

Ո՛Տ իմ Յ՟ս Ք՟ս՝ որ Ա՟ծաբար նման հօրն քո համբերեցեր անօրէն դասուց երբայեցւոցն՝ և չար զինուորացն՝ և յուդայի դերելոյն 'ի չարէն բարեմոռաց աշակերտին քո, որ յետս յետս չոքան և զարկան զգետնի 'ի միոյ բանէն քո՝ Յ՟ս Ք՟ս Ա՟ծ իմ, շնորհեա ինձ տանել համբերութ՟ և ընտրողութ՟ 'ի կամս քո՝ Ա՟մ փորձանաց և վշտաց՝ որք գան 'ի վ՟ր իմ 'ի դիւաց և 'ի մարդկանէ. և շնորհեա ինձ զօրութի՝ բարւոք յաղթել ն՟ց ըստ կամաց քոց. ջնջեա զԱ՟մ մեղս բոլոր անձին իմոյ, նոյնպէս և տաելեաց և բարեկամաց իմոց և Ա՟մ մեղաւորաց, և նոցայն՝ որք ընթեռնուն զսա և որք լսեն։

Նու զտունն թորգոմայ պահեա ուղիղ հաւատովք և բարի գործովք մինչև 'ի լրումն ժամանակաց՝ առաջնորդօք և թագաւորօք, քահանայիւք և ժողովրդովք։

Նու արդ՝ բարեխօսութ՟ Ա՟մ ս՟րց որդի ո՟յ հալածեա 'ի մէնջ զդևսն.

և տո՛ւր մեզ կարողութի՟՝ յաղթել չարեաց աշխարհի , և առնել զա՟մ գործս բարիս 'ի կամս հօրն լուսոյ · Ը՟ որում քեզ և հոգւոյն ս՟րբ վայելէ փառք իշխանութի՟ և պատիւ , այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից ·

ամէն ։

---

'Ի տեղի՛ս՝ ուր ըմբռնեցին զՅ՟ս, և 'ի ձաղան-ալըն՝ առաջի Ն՟ր · 'ի խորոց սրտէ խօսք ընդ Ն՟յ՝ ողորմելւոյս վարդանայ և ա՟մ մեղաւորաց ։

## ԳԼ · ԺԲ

Տէ՛ր իմ յի՟ս ք՟ս՝ որ ես այբ և քէ , այսինքն՝ սկիզբն և կատարած ա՟մի · յոյս լքելոց՝ և ապաւէն ընկղմելոց , հաց քաղցելոց՝ և ջուր պապակելոց · և որք յուսան 'ի քեզ էնդ ա՟ծ , բացեալ կայ առաջի նոցա դուռն ողորմութե՟ քո ։

Նա մի վա՛յ եղկելի անձին իմոյ՝ յի՟ ք՟ս ա՟ծ իմ, զի կամաւոր յօժարութ՟

զանձն իմ եդի 'ի գերութի՟ դժոխա-
պետ և զանձնապահ բանսարկուին ,
երբ մոլորապատն խժի կորեանց նմին,
և զձու քարբին առեալ պահեցի՝ որ
է լցեալ հրով և խաւարաւ , զարդի
ստայնն առյանդեցի զդեստ անձին
իմոյ՝ որ մերկ պահեաց զիս ունայնութ՟ե
և ստութե՟ անցաւոր կենցաղոյս . և
կապեալ կամ 'ի մէջ կորստական հաղ
բից յաղթանդամ վիշապին՝ որ կոխ-
եալ ձմէ զանձն իմ առ ոտամբ 'ի
կամս իւր . նաև սպասաւորք նորա
գունդք չնակերպ դիւացն պաշարեն
զիս յա՟մ ժամ, և հանապազ խոցո-
եալ վիրաւորեն զանձն իմ հարուա-
ծովք հրախառն և դեղեալ նետից
իւրեանց . վա՟ որոյ և մեծ ամօթով
ծածկեալ պապանձեցայ, և յաչս զա
լատեան քո՝ ա՟ծ իմ յո՟ քո՟ , յիշեցի
զօր ահագին ատենի քո , և ոչ ախոր-
ժեմ հեռանալ 'ի քէն ա՟ծ իմ:

Ո՛վ յարուցեալ եկից զհետ քո,
և ցուցից քեզ զսակալի վէրս անձին
իմոյ . քանզի դու ա՟ծ իմ յս՟՝ հրա-

…այեցեր անսուտ բերանով քով՝ որ ես յոյս ծանրաբեռն աշխարհաց , Թէ մեղքն՝ զոր խոստովանութիւն ասէք , ջնջին . և զոր դուք անմոռաց յիշէք՝ և ապաշաւէք , զայն մոռանամ՝ և բնաւ ոչ յիշեմ , և մաքրեմ զձեզ և սրբեմ . և ես յոյս վստահացեալ ելի խնդրել զքեզ ընդ ա͞ծ ողորմած բժիշկ . ո՞չ զի գտեալ զանըմբռնելիդ , մեղայ գոչեցից առաջի քո ՚ի խորոց սրտէ իմմէ իբրև զպետրոս և զպոռնիկն ։

Ապ զի ողորմելով քո նորոգեսցես զեղծեալ և զապականեալ պատկերս իմ ՚ի մեղաց . և ա͞ծային մարգարէն եսայի ետ խրատ և ասաց Թէ՝ մի շատաշուրջ լինիր . այլ աստ մնացիր՝ ՚ի տեղիս ծնրադրութե֊ն նր , և փութով տեսանես զյոյսն քո՝ որում բաղձաս , և զանհագին հանդէս նր . քանզի ահա հայր նորա մատնեաց զնա վ͞ս մեղաց մերոց , և նա յաղագս մեր վիրաւորի , և առ զԹիկունս իւր ՚ի հարուածս՝ և զծնօտս յապտակս և՚ի Թուքս . և ահա

'ի նոյն ժամն հասին չար լեգէոնք զին
ուորացն , և կալեալ կապեցին զենդ-
ա՟ծ մարմնով՝ յորմէ սարսին սերով-
բէք , և նենգաւորն յուդա 'ի նշան
մատնութե՟ համբուրեաց զերեսս քո
սի՟՝ ուր ոչ իշխեն հայիլ բոցեղէն
քերովբէքն , ոչ պատկառելով 'ի բա-
քանչելեացն՝ զոր ետես . և զայս յան-
ձրն առեր ա՟ծ իմ , զի մատնութե՟
քով զադամ փրկեսցես՝ որ մատնեալ
կայր 'ի ձեռս դիւացն ծննդովք իւ-
րովք , և կապանօք քո զադամ արձա-
կեսցես 'ի դառն կապանաց չարեաց և
մեղաց և դժոխոց . և զմարդիկ 'ի կա-
պէ կռապաշտութե՟ և յօրինացն :

Ա՟ծ իմ յո՟ քո՟ ստեղծօղ ա՟մի՝ որ
վ՟ն իմ մատնեցար և կապեցար , ան-
կեալ կամ երկրպագութե՟ առաջի քո
'ի տեղի մատնութե՟ քո . և աղաչեմ
զքեզ ա՟ծ իմ , զիս՝ որ մատնեալ կամ
'ի ձեռս դիւաց չարաց , զերծո 'ի
ձեռաց նց , և զչար կապանս մեղաց՝
որով կապեցին զիս չարաչար՝ որք
փոխով երնջուց , կապանօքն քո ար-

ձակեա՛մ և ազատեա՛մ զիս , և ջնջեա՛ զթարախ բոլոր անձինս իմոյ , և հան զիս 'ի բանակէ ն՟ց . և ահա զմ՟րդ տե-րանց և զահագին դատաւորդ ահեղ ատենին տարան դատել յատեան քահանայապետին՝ և անմիտ դատա ւորաց . որով ազատեցեր զադամ ծննդովքն 'ի չար և յանիրաւ դատա ւորէն սատանայէ և 'ի դիւաց ն՟ր :

Ո՛ Տ՟ իմ՝ որ մարմնով վ՟ իմ կապ-եալ կացեր յատեան դատաստանի , զերծ՛ զանձն իմ 'ի չար դատարանէն բելիարայ և դիւաց ն՟ր , 'ի բաց արա յինէն և մաքրեալ սրբեա՛ զա՟մ դրոշմ՝ և զնշան ն՟ց յանձնէ իմմէ , և զայլսն անհետ արա :

Ո՛ նհասանելի մնաց ընդ ա՟ծ՝ որ մարմնով զայս ա՟մ կրեցեր վ՟ ադամայ և ծննդոց ն՟ր , քանզի չարախօսէին զանեղէդ , նախատելով հարկանէին և ապտակէին զանիմանալիդ սրովբէ-ից , որով բարձեր զչարն ադամայ՝ և զնախատանաց ապտակն և զհարուա-ծըս դիւացն 'ի բոլոր անձնէ ն՟ր .

սպառնամանս քեզ էակիցդ հօր, ըղձարախօսութեան դիւացն՝ և զդրօշմն մեղաց՝ զհարուածս և զապական նոյն՝ զոր յանձն իմ եդին անօրէնութիւնք, զամ՛ն սրբեա և քաւեա ողջացո, և քոյով նախատանօքն և ապականումն ջնջեա զնախատինս հոգւոյ իմոյ՝ մարդասէր. պսակ ՚ի փշոց դնէին ՚ի գըլուխ քո ա՛Ծ իմ յս՝ որ պսակեցեր զերկինս լուսաւորօք և զերկիր ծաղկօք, և կամիր զգեցուցանէին՝ և կատակելով ՚ի ծունր իջեալ թագաւոր կարդային զճշմարիտ թագաւորդ, և զկենաց պատճառդ ՚ի մահ խաչի դատապարտէին, որով հանէր զամ՛ն յիւր թագաւորութիւն և յանմահութիւն, փրկելով զնա ՚ի կատակելոյ պիղծ դիւացն՝ որ նախատելով խաղ առնէին զնա, և պսակեցեր զնա զարդարելով գեղապաճոյճ ՚ի զարդ անկողոպտելի։

Ա՛Ծ իմ յս քս՝ որ վասն իմ զայս ամ՛ն յանձն առեր, կիզեա զփուշ մեղաց իմոց՝ որով նախատեցին զգլուխ

իմ. 'ի կատակելոյ նոցա փրկեա զիս՝ որովք դարանէին զանձն իմ, խաղ ա-նելով զիս դառն մեղօք. և շնորհեա ինձ զիմ թագաւորութիւն՝ զոր կո-րուսի խաբանօք դիւաց, և փրկեա զիս յանմահ մահուանէն. և զամ չար սերմն նց խլեա և հան 'ի բոլոր անձ-նէ իմմէ, և քաւեա զանօրէնութիւն իմ՝ ա՛ծ իմ յս քս։

Յաղագս այսորիկ զի թողցես ըզ մեղս իմ՝ եկեալ յերուսաղէմ ու-րախութեամբ և ցնծութեամբ շրջիմ 'ի հրա-պարակս և 'ի փողոցս սորա. ընդ որ կապեալ տանէին և նախատէին ըզ վերաբերաձօղն տ՛ր էիցս՝ զորս բա-նիւ արարեր. նայիմ և զարմանամ և հոգւոյ ակամբ տեսանեմ զանտեսդ, և թուի թէ՝ այսօր կրես զայս ամ առաջի աչաց իմոց։

Վն որոյ և ցնծալով համբուրեմ զքարինս սորա՝ և զհող քաղաքիս՝ և զտաճարանաց սորա, և զկիրս քո բա-րեխօս ունիմ առ քեզ ա՛ծ իմ. զամ չար սերմանիս որոմնացն դիւացն՝

զոր սերմանեցին 'ի հոգիս 'ի մարմինս և 'ի միտս իմ, և դեղեցին զբոլոր անձըն իմ մահացու Թունօք խուրեանց, ջնջեա՛ 'ի բոլոր անձնէ իմմէ՝ և անհե՛տ արա ողորմութ՟ք քով և նախատանօքն՝ զորս կրեցեր 'ի չարչարանացն կամաւորապէս, և յառաջիկայ չարեն փրկեա՛ զիս. լե՛ր ընդ իս յա՟մ ժամ, և 'ի մեծ ամօթոյն զերծո՛ զողորմելիս, և յահագին վիշապէն փրկեա՛ զանձն իմ. և քեզ օրհնութ՟ի յա՟մ եղելոց անպակաս գոհաբանութ՟ի ընդ հօր քում և հոգւոյդ ս՟րբոյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

'Ի խաչին բարձումն՝ և 'ի գողգոթայն ահաւոր՝ առաջի ա՟ծ մերոյ և փրկչին յի՟ քի՟. 'ի խորոց սրտէ աղերս մաղթանաց ողորմելւոյս վարդանայ և ա՟մ մեղաւորաց։

## ԳԼ. ԺԳ.

Անկարօտ և անեղծն հօր փառակից և համագոյ ս՟բ հոգւոյն՝ անմախա

և անմիջոց ծնունդ սրտին այ՟ հօր յո՟
ք՟, որ սիրով խոնարհեցար՝ քո կամա-
ւրմն աւեր տկարութի, և զիս ձրխա
ցուցեր ՚ի փառս առաջինս · իսկ ես
եղկելիս մեղօք հաւանեցայ պատիր
խաբէութե թշնամւոյն, և զանձն իմ՝
տուն և դադար արարի կամաւ՝ դի-
ւաց և ախտից դիւականաց · որ թու-
նաւոր զեռնօք կարձօք և իժիւք ան-
միջոց խոցեն և մռմռքեն զհոգիս իմ,
և զայ ժամ՝ որ ջանան ՚ի հիմանց
խախտել զիս կախարդական նենգու-
թբ · և երբեմն ՚ի միտս իմ եկեալ՝ յի-
շեցի զոր ինչ հրաշագործեցեր ինձ ՚ի
առեղծմանն և ՚ի վերջին նորոգմանս ։

Ա՟որոյ ելի խնդրել զքեզ, և ոչ
գիտէի թէ՝ յորում վայրի ծածկե-
ցար, մինչև ողորմեցան հոգեկիր մար
գարէքն քո դաւիթ և ամբակում. և
յայտնապէս ցուցին ինձ զքեզ՝ թէ
ուր իցես · և ասաց դաւիթ թէ՝ զոր
խնդրես խանդաղակաթ հոգւով ՚ի
գողգոթայ ՚ի վր խաչին գտցես զնա ·
զի գրեցի ես ՚ի դիմաց նր թէ՝ բևե-

ս որն ծակեցին զձեռս իմ և զոտս իմ, բաժանեցին զհանդերձս իմ, և ետուն ինձ լեղի և քացախ. և ամբակումն ասաց թէ՝ ՚ի կառս խաչին գրացես զնա մէ̃ միջկութե̃ մարդկան. և ելի փութով ՚ի ձորոյս կեդրոնի, և եկեալ ժամանեցի առ քեզ էնդ ա̃ծ. և տեսի հոգւոյ ակամբ, և ահա բարձեալ զփայտ խաչին կանգնեցեր ՚ի գողգոթայ ա̃ծ իմ յ̃ս՝ որ բանիւ բարձեալ ունիս զա̃մ արարած, և սարսեալ դողան յահէ քումմէ ա̃մ վերնական նահապետութիւնք երկնայինք։

Ս̃որոյ և ես եղկելիս ծանրաբեռն անօրէնութե̃ եկեալ բոլոր անձամբ իմով՝ և անկեալ կամ առաջի քո ՚ի գողգոթայ ՚ի ծայր վիմին՝ ուր կանգնեցեր զխաչ քո ՚ի մէ̃ դրխոյն ադամայ հօրն մերում, և անձայն հառաչմամբ և հեծեծանօք սրտի՝ անմռունչ աղաղակեմ և գոչեմ առ քեզ ա̃ծ իմ յ̃ս՝ որ խաչիւ քո բարձեր զանէծսն ադամայ, և աղատեցեր զնա ծննդովք իւրովք ՚ի դը-

ժոխոց և 'ի կատարածութէ :

Բարեխօսութեամբ սր ածածնի մօր քո և ամ սրբց՝ շնորհեա ինձ կարողութիւն կամաւ բառնալ յուսս հոգւոյ իմոյ զխորհուրդ և զզօրութի խաչի քո՝ և գալ առ քեզ համբերութբ՝ ած իմ յս քս :

Եւ այս բարձումն խաչին՝ է ճանապարհ անձուկ և նեղ դուռն · զի երկայնամիտ համբերութբ եկից ըզ հետ քո խոնարհութբ և անոխակալութբ , աշխարհատեցութբ և ջերմ արտասուօք ապաշխարութե 'ի կամս քո :

Ած իմ յս քս՝ որ ածախառն զօրութբ բազկի քո կանգնեցեր զխաչ քո՝ որով նորոգեցաւ ադամ, և տկարացաւ իշխանութի սատնյի · և արդ՝ անկեալ ապաւինեմ զքեզ ած իմ յս՝ զօրութբ բազկի քո ցցեալ կանգնեա ըզ խաչն քո ամ զօրութբ իւրով 'ի հոգիս իմ և 'ի վր մտաց իմոց ամրագոյն և անխախտելի՝ ըստ կամաց քոց սրբց , ոպ 'ի վր գողգոթայի՝ ուր կայր գլուխն ադամայ :

Ա՛ծ իմ՝ որ զգեցեալ ես զլոյս անմատոյց՝ և մեր մարմնով բնակեցար ՚ի վ՛ր խաչի քո, որով ծածկեցեր ըզ մերկութիւն ադամայ՝ և զբևեռս դիւացն հաներ յանձն ն՛ր։

Եւ թքանէին յանհասանելի երես քո էնդ ա՛ծ, և փոխանակ ջրոյ՝ քացախ մատուցանէին արարչիդ, զի գիրըն լցցի. որով ջնջեցեր զթուք վիշապին յերեսացն ադամայ, և զդառն լեղին ճաշակմամբ քո բարձեր և ողջացուցեր զվէրսն քաղցր ճաշակման մեղաց ն՛ր. պատառեցան վէմք ՚ի զօրութ՛է ճշմարիտ վիմիդ՝ որ նշանակեաց զպատառումն բանսարկուին։

Եւ խաւարեցան զգալի լուսաւորք երկնից ՚ի նախատանաց հայրական իմանալի լուսոյդ, որք յայտնեցին զխաւարումն իշխանութ՛ե բանսարկուին. քանզի ՚ի կարծիս տեսողացն լոյս ձևացուցանէր զինքն խաբէութ՛բ։

Հարցն իմոց և ա՛մի ա՛ծ արարիչ յ՛ս ք՛ս՝ կամեցող փրկութ՛ե մերոյ. որ վ՛ս մեր յա՛մի համբերեցեր սիրով

Հօր և կամաւ քո. վ̃ն որոյ և ես եղ-
կելիս յանուն քո 'ի հեռաստանէ եկ-
եալ հասի 'ի գողգոթայս բարի ցան-
կութ̃բ, և երկրպագութ̃բ հող լիզեմ
'ի տեղիս՝ ուր կանգնեցեր զխաչ քո
ա̃՛ծ իմ յ̃ս ք̃ս. և այնպէս ցնծամ,
ո̃պ թէ այժմ տեսանեմ զքեզ զգա-
լի աչօք թևատարած 'ի վերայ խաչին
կառաց. քանզի աստ 'ի ծայր վիմիս
յոտն խաչի քո զմեղս աշխարհի և
զդևսն կոխեալ ճմլեցեր իբրև զող-
կոյզ, և աստ կապեցեր զսատանայ
բևեռելով զնա յոտս խաչի քո իբրև
զշուն կատաղի։

Ա̃՛ծ իմ յ̃ս ք̃ս՝ անկեալ կամ ա-
ռաջի քո 'ի գողգոթայս, երկիրպա-
գանեմ փառաց քոց՝ և աղաչեմ ըզ
քեզ. և արդ վ̃ն կամաւոր չարչարա-
նաց քոց և նեղութ̃ց՝ ներեա́ և լո́ւր
ինձ քա́ղցր և անոխակալ տէր, և
խլեա́ 'ի սրտէ իմմէ զա̃մ բևեռս չար-
դիւացն, և շնորհօք քո ծածկեա́
զմերկութ̃ի հոգւոյ իմոյ՝ որ եղև ինձ
'ի չար և յանօրէն գործոց իմոց. և

զծարաւեալ հոգիս իմ՝ որ կիզեալ տոչորի 'ի գառն տապոյ չար և տապականիչ խաւարասիրին, կենդանի ջրով քո զովացո՛ և ողջացո՛ ա̅ծ իմ. և դառըն ճաշակօքն քո քաւեալ սրբեա՛ զա̅մ մեղաց ճաշակն 'ի հոգւոյ 'ի մարմնոյ և 'ի մտաց իմոց. լուսաւորեա՛ ըզ խաւարեալ հոգիս իմ, և 'ի հովանի վերին հանգո՛ ա̅ծ իմ յ̅ս ք̅ս. և նախատանաց թքոյն՝ զոր ընկալար ա̅ծ իմ վ̅ն իմ, որ թքով քո բացեր զաչս կուրին՝ զթոյնս օձին սրբեա՛ 'ի հոգւոյ իմմէ, և զխայծուածս ողջացո՛. և որ պսակեցար փշովք, զփուշն մեղաց՝ որք հարան յանձն իմ 'ի պիղծ դիւացն, հրով քո կիզեալ այրեա՛:

Ա̅Ծ իմ յ̅ս՝ որ թողեր աւազակին զապաշխարութիւն մեղաց նր̅՝ վ̅ն միոյ բանին դաւանութե̅ նր̅, և բացեր նմա զփակեալ դուռն դրախտին՝ որ յեդեմ, զթեա՛ յեղկելի անձն իմ ա̅ծ իմ, և պարգևեա՛ ինձ զամբիծ հաւատս աւազակին. և ընկա՛լ զդարձս և զդաւանութիւնս իմ՝ որ առ քեզ,

որպ՟ զնորայն · և ջնջեալ ողորմութե՟ քով զչար աւազակութիւն՝ զոր ժողովեցի յանձն իմ անեզրական անօրէնութե՟ս , և անթիւ մեղայ առաջի քո ա՟ծ իմ · և գթով քո փրկեալ զանձըն իմ ՚ի չար և ՚ի դառն աւազակութե՟ ախտակեր և մեղսակեր դիւացն՝ որ յա՟մ ժամ յա՟ծային զանձուցդ կողոպտեն զիս ։

Նու ոչ բնակեցար դու մարմնով ՚ի վե՟րխաշին՝ բան ա՟յ յ՟ս ք՟ս , աղաչեմ զքեզ , մի՛ թողուր զիս ՚ի կամս իմ՝ և ոչ ՚ի կամս դիւաց · այլ ՚ի կամս քո բնակեալ զհոգիս իմ՝ և՚ի խորհուրդ խաչի քո անխզելի պնդութեամբ ։

Արդ և խորհուրդ և բան ա՟յ հօր յ՟ս ք՟ս՝ լոյս երեւաց նո՟ր՝ և բազուկ զօրութե՟ նո՟ր՝ անսկիզբն և անփոխձան և մշտնջենաւոր կենդանի նմին հօր քո , որ ՚ի կառս խաչին բարձրացար մարմնով , և ուրախութ՟ սրտի քոյ առ հայր աւանդեցեր զմարդկեղէն հոգի քո իբրև առ ստոյգ պարտական քո · առաջին այս՝ զի նա ա-

ուսքեաց զքեզ. և երկրորդ՝ զի դու-
ուրախութ̃բ կատարեցեր զհրամանս
նր̃. և երրորդ՝ զի մեռար մարմնով
վս̃ մարդկան. և չորրորդ՝ զի ծանու-
ցեր մարդկան զանուն քո։

Այսպէս և եղկելիս ՚ի քէն յու-
սայ՝ տ̃ծ իմ յս̃ քս̃. զի թէպէտ և
անթիւ մեղայ առաջի քո՝ տ̃ծ իմ,
բայց վստահացեալ ՚ի սէր քո՝ յուսամ
քան զմահն իմ և յօր մահուն իմոյ
ուրախութ̃բ առ քեզ և ՚ի ձեռս քո
աւանդեմ զհոգիս իմ՝ որ ՚ի քէն
ստեղծեալ. և զայս համարձակութ̃բ
առնեմ իբրև առ ըստոյգ պարտա-
կան իմ բազում իրօք։

Նու է առաջինն այս՝ զի դու ես
տ̃ծ իմ և ստեղծիչ, և վս̃ իմ աղքա-
տացար մարմնով և մեռար. և երկ-
րորդ՝ զի անթերի և հաւասար հօր
քոյ և հոգւոյն ս̃րյ տ̃ծ դաւանեմ
զքեզ հանդերձ միացեալ մարմնով
քով. և երրորդ՝ զի միացար անշփոթ
յիմ ազգակից մարմին, և ընտանեցար
ինձ արեամբ և բնութ̃բ. զիմս առեր

տկարութի՛ն ՚ի քեզ, և զքոյդ ետուր
մեծութի՛ն ինձ. և չորրորդ՝ զի եղէց
շնորհօք Հայր և գլուխ իմ։

Յաղագս այսորիկ հայցեմ ՚ի քէն՝
աղաչանօք կոյս մօրն քոյ մարիամու
ն՟րէյ՝ գթա՛ցիր, և ողորմեա՛ ինձ ա՟ծ
իմ յս՟ քս՟. ընկա՛լ սիրով զհոգիս իմ
՚ի ձեռս քո՝ զոր դու ստեղծեր, և
տա՛ր զսա ՚ի ձեռս հօր քոյ՝ որում ես
համագոյակից. և ջնջեա՛ զնեխեալ
շարաւս հոգւոյ իմոյ ողորմութ՟բ քո,
և խնայեա՛ յանձն իմ ա՟ծ իմ. զի ա-
ռեր սակաւ մի զփորձ մարմնոյս։

Աս՟ որոյ օգնեա՛ ինձ յս՟ յա՟մ նեղ-
ղութեան իմ, զի անզօր փոքր եմ. քանզի
որ՟պ և դու բնութ՟բ առ Հայր քո ա-
ւանդեցեր զմարդկեղէն հոգի քո՝
յորժա՟ ոչ մեկնեցար ա՟ծութ՟բ և բնու-
թ՟բ քո, նոյնպէս և ՚ի ձեռս քո ա-
ւանդեմ զհոգիս ա՟ծ իմ, զի դու ե-
ղեր Հայր իմ և եղբայր և կարեկից.
և ոչ ունիմ յոյս և ապաւէն փրկութ՟ե
բաց ՚ի քէն ա՟ծ իմ. գթա՛ցիր և ողոր
մութ՟բ քո քաւեա՛ զանօրէնութիւ

իմ. զի թէպէտ և անբաւ բարկացուցի զքեզ՝ յետոյ դիմեցի առ քեզ, և խնդրեմ թողութիւն մեղաց. և քաղցր և բարի հրեշտակ առաքեա՝ և աւանդեա զհոգիս իմ, և մատո զիս 'ի ձեռն հօր քոյ. և յօրն մեծ և յահեղ՝ ողորմութ՟ե և արդարութ՟ե արժանի արա զիս. և քեզ վայելէ փառք իշխանութ՟ի և պատիւ՝ եռանձնեայ միութ՟ի հայր և որդի և ս՟ր հոգի, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն:

'Ի դուռն տէրընկալ գերեզմանին, ուր եդաւ բանն հօր մարմնով, և առաջի նորա. աղերս մաղթանաց ողորմելւոյս վարդանայ երգս երգողի և ա՟մ մեղաւորիս:

## ԳԼ. ԺԳ.

ԱԾ իմ յ՟ս ք՟ս՝ որ եղեր 'ի կերպարանս ադամայ հօր իմոյ, և զիս նորոգեցեր 'ի փառս քո. վայ եղկելի անձին իմոյ, զի յետ անձնաւ սորդե-

ւայն քոյ՝ զոր ձրի շնորհեցեր ինձ, դարձեալ յարեան 'ի վ՟ր իմ օձակերպ դևքն, և զորոմն չար սերմանեցին 'ի վ՟ր իմ. և ահա մեղք իմ սկսան բղխել զաղբիւր արեան անդադար գետաբուղխս և յորդախաղաց վտակօք, և ըստ չափուն ովկիանոսի մայր ծովուն ետու զկաթն՝ և առի շարաւ փոխանակ ն՟ր. մատուցի զոսկին մաքուր՝ և առի պղինձ անարգ. վաճառեցի ակունս պատուականս՝ և մարգարիտս գեղեցիկս, և առի աղբ ժահահոտ. և եղէ ես կամաւ չար վաճառական՝ փոխչելով յանուշահոտ իւղոյն, և բնակեցայ 'ի մէջ զաղբալի աղբոյ ուրախութեամբ։

Առ որոյ եղկելի անձամբ իմով անկեալ կամ առաջի խաչի քո 'ի գողգոթայ՝ 'ի հովանի տարածման բազկաց քոց. և ոչ կամիմ հեռանալ, մինչև տեսից զկատարումն սոսկալի հանդիսի քո ա՟ծ իմ. քանզի խորհուրդ մարդեղուե՟ քո իբրև զջուր խօսուն աղաղակէ 'ի ներքին մարդս

իմ. և տագնապեալ նեղէ զհոգի և զմիտս իմ, քննել և որոճալ զանօրէնութի̄ քո. և նորոգ հայցել 'ի քէն թողութի̄ և ներումն մեղաց իմոց, և ասել այսպէս.

Ա՛ն յս̄ ք̄ս՝ որ 'ի վ̄ր խաչին հեղեր զարիւն քո ս̄բ վ̄ն ազատման նախաստեղծին, որով ցնծացաւ հայր՝ զի նորոգեցաւ եղծեալ պատկերն ադամայ:

Ա՛ծ իմ յս̄ ք̄ս՝ լուա՛ զանբաւ թարախս անձին իմոյ մ̄ծախտոն որ արեամբդ քով, և գրեա՛ զիս անջնջելի յորդեգրութի̄ քո. և որ թողեր զմեղս խաչահանուացն քոց՝ աղաչելով զհայր, շնորհեա՛ ինձ հոգի անոխակալութե̄՝ խոնարհութե̄ և պարկեշտութե̄ օրինօք յի̄մ գնացս իմ.

Ա՛ծ իմ յս̄ ք̄ս՝ որ յոչնչէ գոյացուցեր զի̄մ եղեալքս, և այսօր խնդրեցար աչարդև 'ի պիղատոսէ իբրև զմի ոք 'ի մեռելոց աղքատաց, շնորհեա՛ զպարգևս ս̄մցուն ս̄ւ արժանեաց իւրեանց.

Շունչ և հոգի կենդանութ̄ե մեռելոց ա̄ծ իմ՝ որ մարմնով անչնչացար

'ի վ՟ր խաչին, և զշունչն ադամայ 'ի նա կրկին դարձուցեր՝ որով կենդանացաւ նա։

Ո՛ Տ՟ իմ յ՟ս՝ դարձո՛ յիս զշունչ կենդանու՟ե և շնորհաց քոց՝ զոր կամակորուսի, և եղէ ողորմելի. և խնդրեմ զիս 'ի խոչօղ դիւաց՝ և պահեմ ընդհովանեաւ քով. և որ պատեցար 'ի յովնէփայ՝ որ զլոյս անմատոյց զգեցեալ ես, և որ ծածկեցեր զմերկութի՟ ադամայ և ծննդոց ն՟ր, եդար 'ի գերեզմանի՝ և զադամ իւրովքն համդերձ արձակեցեր 'ի դժոխոցն։

Եւ յարուցեալ քակեցեր զդժոխս, և զընդու՟նիս ազատեցեր 'ի գերեզմանէ մեղաց. և դու յ՟ս ք՟ս ծածկեցար սակաւ մի յաչաց իմոց. և ո՛չ գիտեմ թէ՝ ո՞ւր եդին զանստանելիդ։

Վ՟ն որոյ և տրտմեցայ սգով՝ մինչև եկն դաւիթ արքայն ը՟ն մորմնոյ հայր քո, և ասաց առ իս թէ՝ մի՛ մորմոքիր, զի յոյսն քո՝ զոր խնդրես բաղձանօք հոգւոյ, վ՟ն քոյ եղաւ 'ի գրի ներքնումն՝ 'ի խաւարի և 'ի ստուերս մա-

հու․ տքնեցաւ ՚ի տապանի, և քաղց- րացան նմա խիծք հեղեղատի․ նըն- ջեաց՝ և սիրտ նր̄ արթուն է։

Յաղագս որոյ և ես ողորմելիս ան- ձամբ շաղախեալ բազմաթարախ անօ- րէնութ̄՝ իջեալ ՚ի գողգոթայէս, և եկ- եալ հասի ա̄մ զօրութ̄ ՚ի դուռն ահա- ւոր և սոսկալի գերեզմանին քո՝ ա̄ծ իմ յ̄ս ք̄ս․ հոգւոյ աչամբ աստ տե- սանել զէնդ ա̄ծ բաղձեալ։

Ա̄ որոյ երկրպագութ̄ խայտամ ցնծալով առաջի քո ա̄ծ իմ, և հառա- չանօք աղաչեմ զքեզ, և զա̄մ կիրս քո բարեխօս ունիմ առ քեզ․ ո̄վ յովսէփ՝ որ սիրով և գթով խնդրեաց զքեզ, նոյնպէս և դու զիս գթով խնդրեա՛ և պատեա՛ զմերկս հոգւոյ իմոյ․ և տա՛ր զիս ՚ի չար դիւացն՝ որ անօրէն գոր- ծովք կապեալ պատեցին զանձն իմ ՚ի կամս իւրեանց՝ որ են ախտք աշ- խարհի, և պատեա՛ զանձն իմ ա̄ծային շնորհօք քո․ և որ եդար ՚ի նոր գերեզ- մանին, և կնքեցար վիմով լուծիչ կա- պանաց դժոխոցն և եղծիչ կնքոյ վի-

շտպին, և յարեար ա՟ծաբեար և թողեր ասա զպատասխանի քո ա՟ծ իմ յի՟ս ք՟ս, ընկալցես յիս՝ որ թաղեալ կամ ՚ի դըժոխս դառն մեղօք, և կափարիչ անյուսութե՟ եդաւ ՚ի վե՟ր սրտի իմոյ, և կնքեալ դրոշմեցաւ կնքով անմարմին և իմանալի իժ օձին. և յարո՛ զիս ՚ի մեռելութե՟ մեղաց, ՚ի նեղ և ՚ի խաւարային դրոյն, ուր իջեալ թաղեցայ ՚ի ծառայութե՟ մեղաց մահու. և զպատասխանի մեղաց պատառեա՛ և հա՛ն յանձնէ իմմէ՝ զոր պատեաց զինև չար վիշապն ասեղնակործան անօրէնութե՟ իւրով:

Ա՟ծ իմ՝ որ իջեր ՚ի ստորին վայրս մահու, և կապեցեր զբելիար և զչարահնար անդատաստանս դժոխոցն, և լըցեր անուշահոտ իւղով ա՟ծութե՟ քո ա՟ծ իմ յի՟ս ք՟ս. էջ ՚ի խաւարեալ հոգիս իմ, և շնորհօք ողորմութե՟ քո լուսաւորեա՛ զանձն իմ, և սրբեա՛ ՚ի բոլոր անձնէ իմմէ զչարահնար ախտ նը՟ց. մաքրեա՛ ողորմութե՟ քով զա՟մ ձանձախարիթ մեղս հոգւոյ իմոյ.

Աշանջենաւոր կենդանին և տուող

կենդանուե՟ ա՟ծ իմ, որ մեռար մարմ-
նով՝ և յարեար երեքօրեայ, և խուղա-
բերից երևեցար, և մետատանից ա-
շակերտացն քոց . յարո՛ զիս ՚ի չար սա-
պանէս մեղաց, և երևեցո՛ զշնորհս քո,
և հաստատեա զիս ամրագոյն ՚ի հաւատ
և՚ի յոյս քո նման խուղաբերիցն, և զա՟մ
զմեղս իմ թո՛ղ:

Ի՟Ծ իմ յա՟՝ որ յետ ութն աւուր
երևեցար առաքելոցն, և հաստատեցեր
զխախտեալ հաւատն Թովմայի, յօրինակ
հաստատութե՟ ամ հաւատացելոց . վ՟յ
կրկին նոր զատիկ կոչեցաւ օրն այն:

Ի՟Ծ իմ մի՛ թողուր զիս, զի տկար
եմ երկու մարդովս, հոգւով և մարմ-
նով. լցո՛ զթերութի բոլոր անձին իմոյ՝
որ ինչ է ՚ի գործս, և որ ինչ ՚ի հաւա-
տըս, որպէ՟ լցեր զթովմային, վ՟ մերոյ
երանութե՝ որ անտես հաւատացաք ՚ի
քեզ սերտ յուսով. և արդ՝ քաւեա՛
զիս յարուե՟ քո յայնցանէ՝ ընդ որս
դու ո՛չ հաճիս, հաստատեա զիս ու-
ղիղ հաւատով՝ զոր դու սիրես, ՚ի
հայր քո և ՚ի քեզ և ՚ի սուրբ հոգին:

Ո՛վ զարմանալի և մեծ խորհուրդ՝ զոր տեսանեմ, որ էր առ հօր ծածկեալ և յայտնեցաւ ՚ի վերջին ժամանակիս երևմամբք մարմնով. վ՟ն որոյ և ՚ի տեսանել մեր զանեղն անօրէնութե՟ մարդեղութե՟ քոյ և սքանչելեաց, համարիմք թէ՝ զքեզ տեսանեմք ընդ ա՟ծ. և ես առաւել այժմ՝ յորժամ եկի և կամ ՚ի մէջ գողգոթայիս և ա՟ծընկալ գերեզմանիս. և զարմացմամբք և հոգւոյ ականբս հայելով յանձառ խոնարհութի քո՝ զոր աստ կատարեցեր ա՛ծ իմ յ՟ս. քանզի և երկնային զօրքն հիացեալ զարմացան յանպատում խոնարհութի քո. վ՟ն որոյ և ես եղկելի անձամբք և հառաչանօք սրտի իմոյ գոչեմ առ քեզ. ողորմեա ինձ, և ջնջեա զանօրէնութիս իմ. որ թողեր զխաչահանուացն և զաւազակին և զադամայն, և համարեա զիս իբրև զմի ՚ի նոցանէ. թող ինձ ա՛ծ իմ, զի դու վ՟ն քոյ ոչ վշտացար և տագնապեցար՝ այլ վ՟ն իմ. և լեր անոխակալ ՚ի վ՟ն իմ՝ զոր դու մեզ հրամայեցեր առնել. և ես հոգւովս անկեալ

կամ առաջին քոյ անհաստատաբար , զի ոչ կարես զերծանիլ 'ի ձեռաց իմոց , մինչև օրհնեսցես զիս՝ և թողցես զա̃մ մեղս իմ՝ զոր մեղայ քեզ։

Ո՜ Տ̃ իմ՝ որ վ̃ն սիրոյ քո հրաշագոր ծեցեր սուխս ․ և ես երկինք երկնից համարիմ ոչ միայն զայն՝ ուր ծնար մարմնով , այլ և զմսուրն՝ ուր եդար ա̃ծդ իմ․ և զգողգոթայն՝ յոր բարձրացար կամաւ 'ի կառս խաչին , համարիմ թէ՝ ահեղակերպ աթոռ է հայրական՝ և անարատեան․ իսկ զս̃բ և զա̃ծընկալ գերեզմանն՝ յոր եդար մարմնով յ̃ ք̃ս ծնունդ սրտի հօր , համարիմ թէ՝ լուսեղէն և անուշահոտ առագաստն է հայրական։

Ս̃ այսորիկ ցնծալով հաւատացեալքս և խայտալով 'ի միջոցի սաստ հոգւով՝ առաւել ցնծութ̃ ցնծամք , քան թէ 'ի դրախտն՝ որ է յեդեմ , համարիմք թէ՝ հոգւոյ ակամբ սաստեսանեմք զհայրն երկնաւոր և զորդին միածին և զս̃բ հոգին․ և ցանկալի են սոքա որդւոց նոր սիոնի , քան

զվերին լեառն սիօն՝ որ է նորին եդէմ, և քաղաքն անդրանկաց՝ որ է մայրն պետրոսի և պօղոսի և նմանեաց նց՟։

Վ՟ն որոյ և ես եղկելի բազմամեղս և անթիւ քանքարաց պարտականս ցըն ծալով հայցեմ ՚ի քէն ա՟ծ իմ, և զա՟մ կիրս քո բարեխօս ունիմ առ քեզ, փրկեա զանձն իմ ՚ի նենգաւոր որսողէն․ քանզի ոչ ունիմ երես հայցել ՚ի քէն վ՟ն փառաց և հանդստէն․ զի յաւուր ծերուէ՟ իմոյ՝ որ է ժամ լուսաւորութեան, լցայ դառն և թանձր խաւարաւ, և զազրալի մեղօք․ առ մարդիկ լոյս երևեալ խաբանօք, և առ քեզ խաւար և դժոխապէս դրաեալ․ վ՟ն որոյ և զայս բաւական և շատ համարիմ ինձ՝ որ ցնծամ ՚ի միջոցի սուտ, և ծանօթութի՟ առնեմ անուան քոյ տ՟ր և սքանչելեաց․ Նաև դասք հոգեղէն անմարմնականացն բակ առեալ են շուրջ զգերեզմանաւդ, և ես դողութե՟ համբուրեմ զսա, և ցնծութե՟ օրհնաբանեմ զքէնդ տ՟ծ՝ որ եդար ՚ի սմա մարմնով, և ոչ մեկնիս աստի մին-

չև յօրն վերջինն՝ յորում հատուցումն առնես ամենեցուն ըստ գործոց։

Ա՜ծ իմ՝ որ կամաւ բարձրացար վ՜ն մեր ՚ի գողգոթայս ՚ի վ՜ր խաչին, և աղօթեցեր վ՜ն մարդկան, գոչեցեր վ՜ն ադամայ թէ՝ ա՜ծ իմ՝ ա՜ծ իմ ընդէ՞ր թողեր զիս, և զծնունդս սորա ազատեցեր ՚ի ձեռաց սատանայի՝ որ վ՜ն յանցանացն, և հայրն լուաւ աղօթից քոց ՚ի դէպ ժամու՝ և ազատեաց զադամ ՚ի տանջանացն և զորս ընդ նմա. նոյնպէս և վասն իմ աղօթեա, և հան զանձն իմ ՚ի դժոխական մեղաց, և շնորհեա ինձ մասն և բաժին յա՜մ աղօթից քոց. շնորհեա ինձ ջերմ արտասուք և սէր հոգևոր, և ա՜մի՝ որք լսեն զգրոցս զբան. և պարգևեա մեղ զբարի ցանկութի և զփափաքումն և ըղ ճը բաղձանս և զյստակ յօժարութի առ բարերար և ազատիչ ճը հոգին քո. և քեզ ընդ հօր և ընդ հոգւոյդ սրբոյ վայելէ փառք իշխանութի և պատիւ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

՚ի լեառն Ձիթենեաց՝ ուստի համբարձաւ
քն̃, և առաջի նր̃ ՚ի խորոց սրտէ աղերս մատ-
թանայց վարդանայ երգողի և ա̃մ մեղաւորաց։

## ԳԼ. ԺԵ.

Ո՜նունդ բարձրելոյն անճառե-
լոյ՝ փառակից և համագոյ ը̃դ հոգ-
ւոյն յս̃ քս̃՝ ձրի բժիշկ ցաւագնոտ
և շարաւեալ ոգւոց մարդկան, որ նա-
խատանօք և յարութե̃բ քո նորոգեալ
կեցուցեր զնա . իսկ ես խաւար մոլո-
րամիտ, և ոգէկորոյս մոլորութե̃բ եղէ
պարսաւելի քան զանասունս և զղե-
ունս՝ որք զեռան ՚ի մէջ աղբոյ . զի
կամաւ խմով փորեցի զաչս իմ՝ և խցի
զականջս իմ, և դառնագոյն սրով խո-
ցեցի զսիրտ իմ . բուծեցի զա̃մ ախտս՝
և ժողովեցի յանձն իմ, և եղէ ողոր-
մելի քան զա̃մ մեղաւորս . և արդ յի-
շեցի զողորմութիւն քո՝ զի անսպառ է .
դիմեցի ՚ի քեզ՝ զի գտից զձրի բժիշ-
կդ, որ բժշկես զահագին բազմաժո
ղով ծովացեալ մեղս իմ՝ որ լեռնաց-

եալ է 'ի վր՟ հոգւոյ իմոյ· վս՟ որոյ հոգ-
ւով ապաւինեցայ 'ի քեզ, և 'ի սէր
մարդեղութե՟ քո· որ վս՟ այսորիկ եղեր
մարդ՝ զի լիցիս կարեկից վշտակցա-
բար· և գիտես մարդկօրէն աղէխար-
շիլ, զի սակաւ մի առեր զփորձ մարմ-
նոյ· և ես վստահացայ յայս ազդակ-
ցութե՟՝ և եկի գտանել զքեզ· և ոչ գի-
տէի յոր կողմն էիր, զի յարեար 'ի մե-
ռելոց՝ և հետք քո ոչ երևին, և ես
վիրաւորեցայ· և եկն առ իս դաւիթ
հոգէկիր, և ասէր թէ՝ զլոյսն քո՝ զոր
հայցես գտանել փափաքանօք հոգ-
ւոյ, 'ի լեառն ձիթենեաց գտցես զնա,
զի անտի համբարձաւ տր՟ օրհնութե՟·
և զայս իմ լուեալ՝ փութով նստայ 'ի
թևս լուսածին ամպոց, և եկեալ հա-
սի 'ի լեառն ձիթենեաց կանխագոյն·
իսկ դու սիրով և ողորմութե՟ կատարե-
ցեր զհայրական տնօրէնութի՟՝ զոր սահ-
մանեալ էր 'ի վր՟ քո նախքան զլինիլ
աշխարհի· յարեար 'ի մեռելոց, և քա-
ռասուն օր շրջեցար յօդս՝ սրբելով
զնա 'ի չար հոտոյն ձենձերաց զոհիցն·

և ապա կամեցայր եղանել առ հայր քո՝ յորմէ ոչ հեռացայր երբէք · բայց ոչ կամիս հեռանալ ՚ի հոգւոյ իմմէ · Թէպէտ դու ես նուրբ և անօսրագոյն , բայց իմ ազգակից մարմնովդ ՚ի քեզ կապեցեր զիս անխզելի · իսկ դու լցեր զա̃մ գրեալսն վն̃ քոյ՝ խայտալով քո և վազելով ՚ի վր̃ լերանց և բլրոց զմա-սալից մարմնովդ , զոր և սողոմօն կանխաճառեաց վն̃ քոյ Թէ՝ փախիր եղբօր որդի իմ , և ե՛լ առ հայր՝ յորմէ իջեր առ մեզ ։

Յորժամ եկիր աշակերտօքն քո , և սկսար համբառնալ , և ես փառահացոյ յա̃ծացեալ մարմին քո՝ Թէ իմ ազգակից ես , և հայր և արարիչ գոլով · վն̃ որոյ յառաջ մատեայ՝ և համբուրեցի զոտս քո ա̃ծ իմ · և հառաչանօք և հեկեկանօք սրտի իմոյ գոչեցի ՚ի հեզդ և յողորմածդ , Թէ բնաւ ոչ զերծանիս ՚ի ձեռաց հոգւոյ իմոյ , մինչև օրհնեսցես զիս՝ ոպ̃ օրհնեցեր զաշակերտսն քո , և աշխարհի քարոզ կենաց առաքեցեր զն̃ս · ոպ̃ և ոչ զերծար ՚ի ձե-

ուաց նահապետին յակոբայ՝ մինչև օրհնեցեր զնա և ա՟ծատես կոչեցեր։

Օրհնեա՛ և զիս ա՟ծ իմ, և շնորհեա՛ ինձ իմաստութի՟՝ զի ես ինձ քարոզեցից, և ես զիս խրատեցից 'ի կամս քո իբրև զօտարս, որ՟պ զյակոբայն. նորոգեա՛ յիս զնոր գործս և զհաւատրս. քանզի կորուսի զայն՝ զոր շնորհեցեր ինձ ձրի. և որ 'ի բաւելոն հովանացեալ պահեցեր զերիս մանկունս, հովանացո՛ զաջ քո 'ի վ՟ր իմ ա՟ծ իմ, և պահեա՛ զիս 'ի դառն հնարից դիւական ախտից և ցանկութ՟ց. և զօրութ՟ քով շիջո՛ զհուր ն՟յ յանձնէ իմմէ, և յամօթ արա զն՟ն՝ որ՟պ զքաղդէացի բորբոքօղս հնոցին բաբիլոնի. և իմացան մանկունքն զքեզ հովանացեալ 'ի վ՟ր իւրեանց. վ՟ս որոյ 'ի քեզ դարձուցին զբան օրհնութ՟, և ասեն. օրհնեալ ես դու տ՟ր ա՟ծ հարցն մերոց՝ որ իջեր, և այց արարեր, և փրկեցեր ըզ մեզ 'ի հրոյս. իսկ ես ո՛չ եթէ օրինակաւ, այլ ճշմարտութ՟ իմացայ զէնդա՟ծ՝ որ վ՟ս իմ՝ եկեալ կատարեցեր ըզ

գրեալսն՝ որ վ̃ն քոյ . և տաս ի համբար-
ձար առ հայր քո տ̃Տ իմ, վ̃ն այսորիկ
ես եղկելի անձամբ երես 'ի գետին
երկրպագութի̃ւ անկեալ կամ առաջի
քոյ 'ի տեղիս՝ ուստի համբարձար յեր
կինս . և հառաչանօք հայցեմ 'ի քէն՝
բարեխօսութի̃ւ ն̃ր առաքելոցն և տ̃մ
արդարոց՝ խնայեա՛ յիս յեղկելիս և 'ի
թանձր և 'ի բազմաբարդեալ չար գոր
ծըս իմ, և ներեա՛ վշտացեալ բազմա-
խոց անձին իմոյ . քանզի գիտես՝ զի
իմաստուն բժիշկն ո՛չ սպանանէ և ո՛չ
խոցէ, այլ սպեղանէ քաղցր դեղովք,
և ապաքինէ զցաւն՝ և զթարախն սըր-
բէ . նոյնպէս և դու տ̃Տ իմ սիրով և
գթով խոնարհեա՛, և շնորհօք քո սըր
բեա՛ զմթերեալ զոգւոյս իմոյ զթա-
րախն, և ջնջեա՛ 'ի ժամանակս կատար
ման խորհրդոյ և գործոյ, և բարձրա-
ցո՛ զընկղմեալս 'ի վ̃ր լուսատու լերին
ձիթենեաց՝ օրինաց քոց՝ և յուսոյ, և
հաւատոյ՝ և բարի գործոց . հա՛ն և
տա՛ր առ հայրն քո, և զանթերի հա-
ւատս իմ գրաւական ինձ՝ որ է 'ի

հայրն քո, և'ի քեզ, և'ի հոգւոյդ սր՟բ.
և զքոյն՝ որ ետուր ցիս, ա՟ծ իմ՝ ա-
նարատ պահեա՛ յանձն իմ. զի քաջ
գիտես թէ՝ ես դիւրաւ կործանիմ
'ի հողմոյ. և զիմն՝ զոր ետու քեզ,
մաքուր առաջի հօր քոյ, և վկայեա՛ վ՟ն
իմ՝ ո՟չ խոստացայ. և պահեա՛ 'ի ս՟բ
գանձատան ն՟ր, և օրհնեա՛ զիս հայ-
րական օրհնութ՟բ քով՝ որ ոչ անցանէ,
և ոչ պակասի. և լե՛ր ընդ իս այժմ և
յաւուր մահուան իմոյ ա՟ծ իմ, և յօրն
ահագին առաջի անսկիզբն հօր քոյ 'ի
մէջ տիեզերական աշխարհագումար
քում հրապարակին. զի ես եղկելի
ակար ուղիղ և անթերի համագոյ
դաւանիմ զանբաժանելի ս՟բ երրոր-
դութիւն միով բնութ՟բ և կամօք և միա-
թագ ա՟ծութ՟բ, և զքեզ բան ա՟յ և ճշ՟
մարմին մարդ առանց մեղաց և հաւա-
տամ հօր քոյ և հոգւոյն սրբոյ:

Ա՟Ծ իմ յ՟ս ք՟ս՝ խաղաղաւ ջնջեալ
մաքրեա՛ զա՟մ մեղս և զյանցանս 'ի բո-
լոր անձնէ իմմէ, և մի բարկանար ինձ.
թէպէտ և ես չարեօք իմովք վիրաւո-

ըեցի զքեզ՝ ո՜վ և արար բեկեղջերուղ անօրէնն . և ես քաջ գիտեմ 'ի գործոց իմոց՝ զի արժանի եմ սատակման . ապա գիտեմ զգութ և զմարդասիրութի̄ քո՝ որ յետոյ սաստիկ վիրաւորեալ տրտմիս, եթէ 'ի հուրն ընկենուս զիս . քանզի դու ստեղծեր զիս 'ի պատկեր բարերարութե̄դ, և յետոյ տուեր զպատկերս իմ՝ և վ̄ն իմ զցաւս և ըղ վէրս 'ի մարմին քո ընկալար :

Նա լե՛ր առիս անոխակալ ա̃ծ իմ իբրև սիրող զիս, զի մեղօք եղէ քեզ ատելի . ո՜վ և դու մեզ պատուիրեցեր՝ ասելով, թէ բարի արարէք ատելեաց ձերոց . և դու տ̃ր և հովիւ բարի՝ 'ի յօրն սոսկալի երևման քո առ զդրոշմեալ ոչխարս քո 'ի քեզ նշանաւքով . և յամօթոյն փրկեա զիս, և 'ի տանջանաց ազատեա . և գիտեմ, զի այս երևեցուցանէ փառաւոր և մեծ զա̃ծութի̄դ քո՝ որ զիս և զիմ նման չարաբեր անօրէնս և զանարժանս փըրկես, և քաւես և պատուես . զի զոր արդարոցն առնես՝ այն ո՛չ է զարմա

ցումն • քանզի այն վարձ է և հաստա-
ցումն քրտանց և աշխատանաց նց̄ • զի
իմացեալ գիտացին յա̄ծեղէն գրոց
Թէ՝ ոչ է այս միայն առ մեզ երախ-
տիքն քո՝ զոր 'ի վերջին ժամանակիս
արարեր մարդեղութե̄ քով, այլ բա-
զում և անպատում են խնամքն քո՝
զոր 'ի սկզբանէ աշխարհիս հրաշագոր-
ծեցեր առ ազգս մարդկան բազում
սքանչելեօք • վն̄ զի անսկիզբն և անեղ
հայրն քո միայն զայս խօսեցաւ առ
քեզ և առ քո փառակից սբ̄ հոգին՝
ասելով, Թէ Եկայք արասցուք մարդ-
ըստ պատկերի մերում և ըստ նմանու-
Թե̄ • և զայն Թէ՝ ո՞ւր ես ադամ, 'ի
դեղջ կոչելով զնա • և զայն՝ որ 'ի վեր-
ջին աւուրս վկայեաց 'ի վր̄ քո 'ի յոր-
դանան և 'ի Թաբօր, ասելով Թէ՝ դա
է որդի և կամակատար սիրելի • և զայս
ա̄մ հրաշալի գործ 'ի քեզ յանձն ա-
րար յառաջ քան զլինելն ա̄մ աշխար-
հի • քանզի քաջ գիտէր հայր՝ զի կա-
րօղ էիր առնել զա̄մ ինչ անթերի ըստ
նմա • վն̄ զի էիր ամենայնիւ հաւա-

սար նմա և սուրբ հոգւոյ նորա ։

Ապա պարզ և յայտնի երևեցաւ անճառելի խոնարհութիւն քո ա̃ծ իմ. յաղագս այսորիկ ես ողորմելիս մեծ- բաղձանօք և անճառ փափաքանօք կըր- կին անկանիմ առաջի քո` ք̃ս ։ և բե- կեալ սրտիւ գոչեմ առ քեզ հառա- չանօք և բազմակնկիծ հեծեծանօք հոգւոյ, և տամ ո̃րց մաղթանօք խընդ- րեմ 'ի քէն` ա̃ծ իմ, փրկեա և ապրե- ցո զիս յա̃մ փորձու̃է հոգւոյ և մարմ- նոյ` որ առաւել քան զկարողու̃ն իմ գան 'ի վ̃ր իմ. և որպ̃ եղեր ընդ առա- ջին արդարսն` որք յառաջ քան զերև- ումն քո մարմնով` մինչև 'ի մովսէս, փրկեցեր և զօրացուցեր զն̃ս 'ի կամս քո, և առեր զն̃ս խաղաղութ̃բ առ քեզ` փրկեա զիս` և զերծո անբիծ և ուղիղ հաւատով 'ի խաբեօղ աշխարհէս ։

Ա̃Ծ իմ` որ երևեցար մարմնով, և 'ի քո խորհուրդ և յօրինակ` առաքե- ցեր զնա յեգիպտոս, փրկելով զժողո- վուրդն քո անբաւ զօրութ̃բ, և 'ի յե- րինն սինայ խօսեցար ընդ նմա մեծ

հանդիսիւ, և ուխտ հաստատուն և օրէնք յաւիտենական ետուր նմա, զօրացուցեր և զյեսու յետ մովսէսի յօրինակ քո՝ որ մե՛ծ հանդիսիւ էած զժողովուրդն քո յերկիրս աւետեաց՝ զոր խոստացար նց̃, և դու տ՛ծ իմ ՚ի վերջին ժամանակի լցեր և կատարեցեր զստուերն և զօրինակն քո, և իջեալ մարմնացար ՚ի սբ̃ և յանարատ կուսէն մարիամայ, հաներ զժողովուրդն քո ՚ի թանձր խաւարէ կռապաշտութե̃ և անյուսութե̃, և հրաւիրեցեր յարքայութե̃ հօրն քո ՚ի դասուն սերովբէից և հոգեղէն զուարթնոյն:

Տ՛ծ իմ՝ որ ես կեանք ՚ի կենացյ̃ քն̃, հոգւով և մտօք երկրպագութե̃ անկեալ կամ՝ առաջի քո յեգիպտոս և ՚ի լերինն սինայ. և ուր պատահիմ մարմնոյս՝ առ քեզ աղաղակեմ, բարեխօսութե̃ մովսէսի և յեսուայ և ա̃մ արդարոցն՝ որք նախ քան զնս̃, աղաչեմ զքեզ հան զանձն իմ զօրութե̃ քո ՚ի դառն եգիպտոսէ՝ որ է խաւար մեղաց, և յախտէ կենցաղոյս՝ որ Տած-

կեցոյց զանձն իմ. և մնամ 'ի լուսեղէն գաւառն երանելեաց քոց։

Դու որ խօսեցար ընդ մովսեսի, և մանանայիւ և ջրով 'ի վիմէ ուրախ արարեր զն͞ա՝ ա͞ծ իմ յ͞ս, խօսեա ընդ եղկելիս շնորհօք և ողորմու͞թ 'ի նորա սիօն, և կերակրեա զիս շնորհօք և բարեգործու͞թ և ս͞բ մարմնով և արեամբ քո ա͞ծ իմ, 'ի կամս քո խոստովանու͞թ. և կորզեա զանձն իմ յորովայնէ մահաբեր իշխանին. և ջնջեա յինէն զա͞մ դրոշմս նորա և զնշան, զի վասն իմ խոնարհեցար։

Դու որ եկիր յա͞մ մարգարէս՝ և ե͞ն երկրատասանին, և զօրացուցեր զն͞ն 'ի գալս և 'ի ժամանակս իւրեանց, և յետոյ կատարեցեր զոր գրեցին վասն քոյ հոգւովն ս͞բվ ա͞ծ իմ, որ անկեալ կամ առաջի քո յերկիր՝ և բարեխօս ունիմ առ քեզ զա͞մ մարգարէսն, ողորմեա ինձ՝ և մի բարկանար իսպառ, զի դու ստեղծեր զիս, և զհոգի ս͞բ քո մի՛ հաներ յինէն. Թէպէտ ես մեղայ առաջի քոյ, զի ողորմած ես և

մարդասէր. և քաղցր սիրով քով ըն-
կա՛լ զդարձս իմ՝ և ջնջեա զանօրէ-
նութիւն իմ, և սրբեա զիս ՚ի չար
գործոց իմոց, և ս̃բ պահեա ՚ի չա-
րէն՝ որ գալոցն է. և քեզ վայելէ
օրհնութիւն ո՛վ ամենակալ ս̃բ երրորդութիւն
հայր և որդի և ս̃բ հոգի այժմ և միշտ
և յաւիտեանս յաւիտենից. ամէն:

---

՚Ի ս̃բ վերնատունն առ ամենաս̃բ հոգին Ա̃յ՝
՚ի խորոց սրտէ աղերս մաղթանաց վարդանաց
երգողի և ա̃մ մեղաւորաց:

## ԳԼ. ԺՕ.

Տէր Ա̃ծ օրհնաբանեալ և փառա-
ւորեալ, անսպառելի բղխումն հայրա-
կան, ս̃բ և բարի և առաջնորդ հոգ-
ւոց ամենից հաւատացելոց, հոգի Ա̃յ
և Ա̃ծ ճշմարիտ. որ գոյացուցեր զա-
րարածս, և յաւուրս վերջինս հաներ
զիս ՚ի փառս առաջին՝ զոր կորոյս
հայրն իմ Ադամ. և վիշապն մարդա-
սպան՝ որսացաւ զիս նենգութ̃ և խա-

բէութ̃ե, կորյս զիս խելև զադամ. և ես անձնայօրդոր կամօք հաւանեցայ պատիր խորհրդոց նր̃, և յանձն առի կատարել զնո̃մ չար գործս նր̃՝ զոր սիրէ, և ոչ մնաց 'ի չարեացն պիղծ մի-շտպին՝ զոր ծնաւ և զոր արար, զոր ոչ գործեցի արդեամբք. նաև մեծ-ջանիւք փութացայ, և զնոր չարեաց շաւիղ գտի և արարի. զարմացաւ սա-տանայ՝ և հիացան դևք նր̃, քանզի յաղթեցի նց̃ 'ի գործս չարեաց. վն̃ որոյ և գովեցին զիս, և շնորհեցին ինձ զբանակին դժոխոցն, և ետուն 'ի ձե-ռս իմ. և ես ուրախացեալ բացի զան դունդս՝ և իջեալ նստայ 'ի նմա. և յիմարեալ կարծեցի թէ՝ այս է ար-քայութի̃, և բաղում շատաւիղք և ուռք և բարունակք նմա ջրհեղեղին՝ և նինուէացւոցն՝ և փարաւոնին՝ և գոմորացւոցն բուսան և ելին և աճե-ցին յանձնէ իմմէ. և անչափ ողկոյզ մեղաց ընկալաւ յինէն բանսարկուն, և պակասեցաւ բարի ողկոյզն յինէն՝ և սպառեցաւ գինին կենաց. դօսա-

ցուծառս կանաչաստաղարթ, և ցամա-
քեցաւ որթս յարմատոյ. անպտղացաւ
ձիթենիս և բեկաւ ոստ արմաւենւոյս,
թափեցաւ ծաղիկ դրախտիս՝ և կոխան
եղև դիւաց նր̃ տունկ այգւոյս, և լցայ
ամ̃ ազգ. մեղօք և չար գործովք:

Եւ յաղագս այսորիկ ընդ ամ̃ տե-
ղիս շրջեցայ, զի գտից իմաստուն բը-
ժիշկ՝ որ լիցի կարօղ արտաքսնել և
ողջ առնել զբաղում և զհնացեալ
վէրս անձին իմոյ՝ որ նեխեցաւ և ծո-
րեցաւ 'ի ժամանակս չար և դառնաց-
եալ ծերունես իմոյ. և իմացեալ գիտա-
ցի 'ի շնորհաց քոց՝ զի ոչ գոյ այլ հը-
նար կամ դեղ փրկութե իմոյ բայց 'ի
քէն ա̃ծ իմ և տ̃ր ո̃ք հոգի բղխումն
հայրական. քանզի և աննախանձ և
առատ են պարգևք քո, և ձիր̃ բաշ-
խին շնորհք քո և նջ̃՝ որք յուսով և
հաւատով խնդրեն 'ի քէն:

Ա̃ո որոյ և յուսով քո ելի կանգ-
նեցայ 'ի խորագոյն վիհէ անյուսութե.
որոնեցի և քննեցի և իմացայ յա̃ծա-
շունչ գրոց, զի կարի զարմանալի են

հոգի հայրական՝ և արժանի գովես-
տից և օրհնաբանութեց. վն զի ընդ տմ
անցանես, զի արադատպես դատս՝ և ծած-
կայես երկիւ, և փութայես 'ի բաց
փախչիս, քանզի բնաւ ոչ ըմբռնիս ։

Իսկ առ ոմանս դաս ուրախութբ՝ և
հանդչիս ցնծութբ 'ի հոգիս նց, զի հա
ճիս սիրով 'ի նա. և յոմանց փախչիս և
ծածկիս արամութբ, զի չար են սիրոք
նց կամակորութբ. և սաստուդայես բըղ
խիս յանձնէ և 'ի բնութէ հօր անմի-
ջոց և անհատաբար ։

Իսկ հայր միայն գիտէ զորպիսութի
քո, և ծագածին որդին հօր միայն
ճանաչէ զմեծութի քո. նաև դու միայն
կարես իմանալ և ճանաչել և քննել
զխորհուրդ հօր և որդւոյ. բայց բնաւ
ոչ կարես զերծանիլ 'ի ձեռաց հոգւոյ
իմոյ, քանզի դու անխզելի 'ի քեզ կա-
պեցեր զիս՝ յորժամ 'ի նբ աւազանին
եկեալ դաեր զիս, և վերստին ստեղ-
ծեր, և շնորհօք քո ածացուցեր զիս.
որդի հօրն լուսոյ և եղբայր. քի արա-
րեր զիս, թագով և մատանեաւ շքե-

զաղարդեցեր զիս. և ես վստահացայ՝ և
ելի գտանել զքեզ, և ոչ գիտէի թէ՝
յո՞ր վայր իցես, ա՛ծ իմ հոգի հայրա
կան, մինչև մարգարէն յովէլ կալաւ
զձեռանէ իմմէ՝ և եցոյց զինջումն.քո,
ասելով ՚ի դիմաց հօր թէ՝ յաւուրս
յետինս հեղից յոգւոյ իմմէ ՚ի վե՛ր ուս
տերաց և դստերաց ձերոց, և մարգա-
րէացին. և զայս իմացայ շնորհօք.քո,
և նստայ հոգւով ՚ի թևս հողմոց, և
եկեալ հասի առ.քեզ անհասանելւոյ, և
ոչ կամիմ և ոչ ախորժեմ թողուլ ըզ
.քեզ. վ՞ն որոյ բաղկօք մտացս գրկեալ
կալայ զ.քեզ՝ մինչև օրհնեսցես զիս ՚ի բ-
աւաղանին շնորհօք. զի մերկացայ զա-
ւաջինն, և ծանեայ ստուգապես՝ զի
դու կենդանախարույկ ես, և պնդեալ
ես ՚ի վեր կոյս զա՛մ զվերնական զօրու-
թին. և դու լուսաւորեցեր զմարգա-
րէսն՝ անմոլար պատմել զոր յապագայ
սըն յետ ժամանակաց լինելոց էր. նոյն
պէս և զգալուստն .քո փառակցին.քո:
Դու հնչեցեր ՚ի նոյն վերնատունն
՚ի դասս առաքելոցն .քո, և հրաշլինել

ամրացուցեր զնոսա՝ և անբաժանելի մնացեր 'ի նոցանէ, և զոր 'ի բազում լեզուս բաժանեցեր յաշտարակն վն անմտութե՟ նց, որով քակեցեր զանի-մաստ միաբանութի՟ նոցա։

Իսկ 'ի վերջին աւուրս 'ի սբ վեր-նատունս 'ի մի լեզուս միաբանեցեր զբաժանեալսն՝ հնչելով քո 'ի սիրտ և'ի շրթունս առաքելոցն հրեղէն լեզ-ուօք. ոպ զի զցրուեալ ազգս մարդ-կան 'ի մի եկեղեցի միաբան ժողովես-ցես բերանօք սբ առաքելոցն. հալա-ծեցեր զխաւարն անգիտութե՟ և կռա-պաշտութե՟, և նորոգեցեր զադամ։

Յաղագս այսորիկ և յայս ամ վրս տօնացեալ կամ 'ի սբ վերնատունս, հոգի հայրական ա՟ծ իմ. և երես 'ի գետին երկրպագութե՟ հող լինեմ ա-ռաջի քո 'ի տեղիս հրաշալի երևման քո. և պաղատիմ առ քեզ դառն հա-ռաչմամբ և հեծեծանօք սրտի իմոյ՝ մարդասէր հոգի տր և աղաչեմ զքեզ՝ վն անճառ խոնարհութե՟ և չարչարա-նաց փառակցին քո յի քի, ջնջեա՛ և

մաքրեա՛ զիմ շաղախումն և զաղտե-
ղութիս և զչար գործս իմ՝ որք կան 'ի
հոգիս 'ի մարմինս և 'ի միտս իմ մթեր
եալ, զոր դու միայն կարես քաւել,
զի քան զերկինս ծանրագո՛յնք են։

ԱԾ իմ հոգի հայրական՝ որ շնոր-
հօք ձրի ա̃ծացուցեր զիս որդ̃ աւազա
նաւն. մեղայ յերկինս և առաջի քո,
մի՛ յաւիտեան բարկանար ինձ իս-
պառ՝ անոխակալ, և մի՛ առներ ըստ
անօրէնութե̃ իմոց. այլ շնորհեա՛ ինձ
զպատիւն՝ զոր կորուսի անօրէն գոր-
ծովք իմովք. զի քեզ ա̃մ ինչ դիւրին
է, և թէ կամիս՝ կարօղ ես սրբել. և
գիտես՝ զի քն̃ փառակիցն քո և հա-
մագոյակից հայրն լուսոյ կամին զայս՝
և ուրա՛խ լինին ցնծալով։

ԱԾ իմ՝ որ եղեր բնութ̃ ընդ ա-
ռաքելոյն երկոտասան, և ընդ եօթա
նասուն և երկուսն, և ո՛չ բաժանե-
ցար 'ի նոցանէ յիւրաքանչիւր վիճակս
նց̃. և որ քարոզեցին զբանն կենաց՝
հրազինեցեր զն̃ս, և սնդեալ պահե-
ցեր զն̃ս անարատ, և յա̃մ հանդէս

նց՟՝ տայիր բան 'ի բերանս նց՟. և պա-
հեցեր զնս՟ անսասանելի 'ի վր՟ հիման
հաւատոյ առաքելոց սրբոց:

Եւ արդ՝ աղաչեմ զքեզ, բարե-
խօսութե՟ նց՟՝ և կուսին մարիամու
ած՟ածնին՝ համարեա՛ թէ՝ 'ի տեղիս
չարչարանաց և մահու նց՟՝ ուր և կա-
տարեցան, անկեալ կամ առաջի քո,
և նոքօք հայցեմ 'ի քէն՝ ած՟ իմ հո-
գի հայրական, արեամբ և չարչարա-
նօք նց՟ խնայեա՛ յանձն իմն անարատ
պահեա զիս՝ ոպ՟ և դու կամիս:

Ած՟ իմ հոգի հայրական՝ որ զհայ-
րապետսն հաստատեցեր, և զքահա-
նայսն արիացուցեր, և զմիանձունս
ամրացուցեր, և զմարտիրոսն քաջա-
ցուցեալ ջերմացուցեր, և զամ՟ սբ՟սն
զօրացուցեր՝ 'ի կամս քո և 'ի բարի
գործս յորդորեցեր, և 'ի մահն ցն-
ծալով դիմեցուցեր, 'ի պատասխա-
նիս՝ իմաստունս արարեր, չարաչար
մահուամբ նց՟ և մաղթանօք՝ կեցո՛ և
պահեա՛ զիս 'ի կամս քո, և յամ՟ պա-
տերազմէ նենգաւոր դիւացն զօրացո՛

զիս. քաւեա՛ զանեզրական չար գործս իմ, և շնորհեա՛ ատել զերևելիս՝ և սիրել զաներևոյթ բարիսն, 'ի կեղծաւորութե՛ փրկեա՛ զիս, և հոգի զղջման պարգևեա՛ ինձ, և անարատ պահեա զծերութիւն իմ. և զելս յաշխարհէս բարի արա գործովք և հաւատովք՝ ըստ կամս քո և 'ի հաճոյս. ընկա՛լ զբանս աղաչանաց, և ուր ընթեռնուն զսա և լսեն՝ շնորհեա՛ հոգի ո՜ր զղջումն և զզղջումն. և շնորհեա՛ լսողացն՝ զփառս քո, և վ՜ն մեղաց իմոց մի՛ խափանել զպարգևս քո. զի դու անյիշաչա՛ր ես և անոխակալ տէր և հոգի ո՜յ հօր. բարեխօսութ՜բ միքայէլի և գաբրիէլի և ա՜մ երկնաւոր զօրացն հոգեղինաց աղաչեմ զքեզ՝ ա՜ծ իմ ո՜ր հոգի, վ՜ն ն՜ց պաղատանաց և աղօթիցն՝ խնայեա՛ յեղկելի անձն իմ, և դարձո՛ զիս 'ի մեղաց իմոց. ջնջեա՛ զանօրէնութիւնս իմ՝ և մաքրեա՛ զշաղաւն 'ի հոգւոյս. լուսաւորեա՛ զխաւարեալ միտս իմ, և 'ի յառաջակայ չարէն փրկեա՛ զիս. և արա՛ զբոլոր անձն իմ տա-

ճար և հանգիստ կամաց քոց՝ հոգի
հայրական, ա͞ծ ճշմարիտ, համագոյ
հօր և գործակից որդւոյ. որ ՚ի լինե-
լութե͞ էակացս շրջէիր ՚ի վ͞ր ջրոց ծո-
վուն, և զօրութ͞բ հրոյ քոյ ջերմացու-
ցանէիր զծն͞ս համատարած, և զա-
մուլ և զանծնունդ բնութ͞ն նր ՚ի ծը-
նընդականութ͞ն փոխեցեր. և զսերմն
օրհնութե͞ ՚ի նմա արկեր զօրութ͞բ քո։

Եւ ահա ՚ի հրամանէ քումմէ ըս-
տեղծան կէտք մեծամեծք և անբաւ-
կենդանիք ազգի ազգիք ՚ի խորս ծո-
վուն, և յերեւս երկրի և ընդ օդս ա͞մ
ազգք թռչնոց մեծամեծք և փոքունք
նմանն մարախոյ երամ երամ վերանան
՚ի բարձունս, և ճռուողական ձայնիւ
օրհնեն զհամագոյ ա͞ծուե͞ հօր և որդ-
ւոյ և հոգւոյդ ս͞բյ. և զարդարեցան
օդք և անտառք լերինք և դաշտք
թռչնովք զոր արարեր։

Ա͞Ծ և հոգի հօր և որդւոյ՝ զար-
դարիչ արարածոց և նախախնամող
բարի, բարեխօսութ͞բ ս͞բ ա͞ծածնի
կուսին մարիամու և ա͞մ ընտրելոց քոց՝

մեղայ գոչեմ առաջի քո, և 'ի խորոց սրտէ անմռունչ հառաչանօք աղաչեմ զքեզ․ շնորհօք քո գթա՛ յեղկելի անձին իմ, և զարգարեա՛ զանկեալս և վատապականեալս 'ի չար և յանկարգ մեղաց իմոց․ ջերմացո՛ զսառուցեալ ապառաժ սիրտս իմ՝ որ ամուլ է 'ի բարիս, և բազմածին է 'ի չարիս․ սպան զծնունդս չարս՝ և արա՛ զհոգիս իմ բազմածին յամ բարիս՝ զոր դու սիրես․ և յամէ թո՛ղ զհոգիս իմ և զմիտս, բարի ծննդովք 'ի քէն յղացեալ և սաղմն առեալ՝ 'ի սորնայնոցս 'ի վեր բարձրաթռիչ լինիլ՝ և զվերինն խորհիլ, և միշտ զերս 'ի մտի դնել․ և իսպառ ջնջեա՛ զամ եղեռնական չար գործս իմ՝ զոր դու ատես․ և բռնութե՛ խլեա՛ զիս 'ի կապէս մեղաց, և թո՛ղ 'ի լուսաւոր գաւառն երանելեաց․ ըղհետս մեղաց սրբեա՛ 'ի բոլոր անձնէ իմմէ, և ողջացո՛ զվէրսն՝ որ անթիւ եղև 'ի խայծմանէ վիշապին․ 'ի մեծ ամօթոյն փրկեա՛ զիս, և յահագին վիշապացն պահեա՛․ զի դու ես արժանի

փառաւորուե̃ հոգի սր̃բ. ա̃ծ ճշմարիտ՝ ընդ Հօր և ընդ Որդւոյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Առ ամենահայրն բարի 'ի սր̃ բ. սիօնն խորհրդականն՝ որ է յեղ̃էմ. նաև յա̃մ եկեղեցիս՝ ուր և պատահի, և յա̃մ տեղիս, զի ընդ ա̃մ տեղիս է աթոռն նր̃. 'ի խորոց սրտէ աղերս մաղթանաց ողորմելւոյս վարդանայ և ա̃մ մեղաւորաց:

## ԳԻ. ԺԻ.

Ամենահայր բարի, ամենախնամ ստեղծօղ, ամենօրհնեալ ճառագայթ, ամենիմաստ բազմազեղ, ամենագութ մարդասէր, ինքնակալ օրհնեալ, որ 'ի պատկեր քո արարեր զմեզ, և դարձեալ մահուամբ որդւոյ քո 'ի նոյն փառս դարձուցեր զեղծեալ պատկերս՝ որ ինքնակամ անձնիշխան ոգւով զլոյսն ընդ խաւար փոխեցի, և զճշմարտութ̃ի ընդ ստութե̃. և այս 'ի

շնորհաց հոգւոյ. քո ծագեցաւ 'ի միտս
իմ և'ի հոգիս ճառագայթ գերապայ
ծառ, և բռնութ̃ կապեաց և մղեաց
զանձն իմ, և ընկէց 'ի կառս լուսե-
ղէնս. և ծածկեցայ անուշահոտ վար-
դովք և թաղեցայ յիւղս ազնիւս և մե-
ծագինս, և բարեհամ խնծորովք մտի
'ի տունս գինւոյ, և ընկեցայ յայգիս
ծաղկեալս և պտղալիցս. նստայ 'ի դը-
րախտս ա̃ծատունկս և մրգաբերս.
լցայ քրքմով, և հոտով նարդոսի
պարարտացայ, 'ի հովանի վիմին հանգ-
եայ՝ և զա̃ծ յայտնապէս տեսի. ծա-
ռոյն կենաց պատահեցայ յանկարծա-
կի, և յանմահ աղբիւրն դիմեալ՝
լցի զպապակումն ծարաւոյս անապատ
և սառնորակ զովացուցիչ ջրովք:

Եւ արդ՝ այս ա̃մ յաղագս այսո-
րիկ եղև ինձ՝ զի հոգիս իմ և միտքս
'ի զղջումն դարձան, որ յայտնապէս
պատմեցի, և դարձեալ պատմեմ զա-
նօրէն գործս իմ. և արձան չարեաց
իմոց կանգնեմ 'ի մէջ աշխարհի, խայ-
տառակելով զանձն իմ նախքան զա-

տեանն ահաւոր . և սաստ տանում ընդ վրէժն յոյժ յանձն իմ , և զանազան բանիւ չար անուանս անձին իմոյ կարդամ, իբր յանօրէն գողիաթ սպառնաքարելով 'ի սա . և զայս ոչ ո̃ք զոմանս տանեմ, և ոչ կեղծաւորիմ վ̃ն գովեալի , այլ ո̃ք և ա̃ծ վկայէ սրտագէտն և ծածկագէտն՝ Ճշմարիտ և անսուտ գրեմ զչարիսն իմ . և սուտ խոստովանիմ 'ի լսելիս մարդկան :

Եւ այս մեծ շահ է ինձ և օգուտ-գև . զի որ լսէ՝ թուք յալիս և յերեսս իմ արձակէ , և դսրովեալ նախատէ զիս . վ̃ն որոյ մտի 'ի խորհուրդս իմ, և քննեցի զչար և զանօրէն գործս իմ, և ահա անթիւք են և անբաւք՝ որ եղկելի անձն իմ . ոչ կամիմ խնայել 'ի քեզ, այլ զչար անուանս կարդամ առ քեզ , փոխանակ զի սպաներ և գրլորեցեր դու զիս . և ելի շրջեցայ ընդ ա̃մ տիեզերս , և քեզ նման չար ոչ գտանեմ . ոչ 'ի դևսն , և ոչ 'ի սատանայս , և ոչ յորդիս ադամայ . զի ելեր 'ի գրոց կարգաց , և օտարացար յօրինաց . բայց

ես ոչ կամիմ լռել, այլ զոր կարեմ՝ խօսիմ, և զսիրտս իմ 'ի քեզ հանգուցանեմ, և անդադար ասեմ այսպէս։

Աւա՜յ քեզ ով անձն իմ, զի ահա տեղի եղեր բազում եղկելեաց. և դու միայն ես մանկահեղձ՝ և հայր որդեկոտոր. դու զարու մանուկն գաղտաբար սատակես՝ և զէգն պատուով յառաջ բերես և սնուցանես. դու զսերմն դիւականն՝ որ է քաղդէական, սաղմն առնես՝ և յառաջ բերես. և զնոր սիօնի մանկունս ծորեալ վիժես՝ և անյայտ առնես. դու հարսն անդնդոց եղեր՝ և դժխոյ դժոխոց, և դևքն եղեն քեզ հարսանաւորք, և օրիորդք՝ անքուն որդունքն. քեզ քօղ լծանձր խաւար բերեն, և պատմուճան զհուրն գեհենական. առագաստ՝ սանդարամետաքըն, և սենեակք հանգստեան՝ տարտարոսքն և սառնամանիքն։

Քանզի կամաւ թողեր զողորմած և զբարի փեսայն՝ և եղեր ծառայ չար. որդի 'ի հայրենւոյ զրկեալ, ժառանգ անմխիթ, մշակ նենգաւոր, ծառ. ան-

պտուղ, դրախտ անջրդի, ուղղի խո-պանացեալ, փշաբեր երկիր, կորդա-ցեալ եւ պայթուցեալ ակն, քացախեալ գինի, հնացեալ պատմուճան, ժան-գոտեալ եւ ցեցոտեալ սուր, մրճոտեալ կրիճ խոզից եւ շանց, եւ ջուր 'ի շանց լակեալ, խոզ աղբակեր, եւ շուն 'ի փըս-խածն դարձեալ. եւ յայսքան չարեաց վեր բարձրացաւ մինչեւ յերկինս ամբա-րշտութիւն իմ՝ եւ լեռնացեալ ծանրութիւն եւ անբաւ թանձրութիւն ժողովեցաւ 'ի վերայ իմ, որ կշռէ եւ յաղթէ ծանրութիւն մեղաց, առաւել քան զայն ամ՝ որ դար-ձեցաւ 'ի սատանայէ 'ի դիւաց եւ 'ի մարդ-կանէ յառաջնոցն մինչեւ 'ի վերջինս։

Եւ յորժամ զայս խոկացայ՝ զի ան-բժշկելիք են, եւ սպեղանեաց ոչ գոյ սահման, ես կրկին սրտաբեկեալ վի-րաւորեցայ. եւ նուաղեցաւ հոգի իմ, մինչեւ եհաս մարգարէն ասել՝ եւ ա-սէ. մի երկնչիր՝ զի ած ողորմած է, եւ անոխակալ, եւ ընդունի զդարձն քո՝ ըստ զանառակ որդւոյն եւ զմանասէին, զդաւթայն եւ զայլոց բազմաց՝ որք դի-

մեցին առ տ̃ր. և զայս իբրև լուայ՝ սա կաւ մի հոգեդարձ եղէ՝ և կենդանա ցայ, և ապա յիշեցի զանեզրական բա- րիսն՝ զոր արարեր առ ազգս մարդ- կան. և շնորհն քո կործեալ եհան զիս 'ի ժանեաց վիշապին, և ամօթալի երե սօք ելի խնդրել զքեզ՝ և ոչ կարացի գտանել թէ ուր իցես, քանզի ա̃ծա- շունչ գիրք անհաս և անճառ քարոզե ցին զքեզ, և ես սկսայ երկմտիլ. և աս մարգարէն թէ, մի՛ յուսահատիր. զի յայսն՝ զոր խնդրես, յո̃մ տեղիս է տե րունի ն̃ր, և յո̃մ ուրեք գացես զնա. և հանգչի նա 'ի հեզն և 'ի խոնարհն, և յայնոսիկ՝ որք դողան 'ի բանից ն̃ր։

Եւ այս մխիթարեաց զիս. և յա- րուցեալ եկի 'ի ս̃ր սիօն՝ որ յեղ̃մ, և կոչի մայր եկեղեցի. և աստ գտայ ըզ քեզ՝ և կալայ մօքս անսասանաբար զան հասանելիդ ը̃ս կարողութ̃ես իմում. զի թէպէտ և փութայես ծածկել 'ի մը տաց՝ և անյայտ լինիս, բայց ո̃չ կա- րես զերծանիլ 'ի ձեռաց հոգւոյ իմոյ. քանզի դու ստեղծեր զիս 'ի պատկեր

բարերարութ՟ե քո, նաեւ ընտանեցու-ցեր զիս քեզ մօտակայ. քանզի քո էա-կից որդւյ՟ իմ եւ ա՟ծ էառ զինմ ըն-տանի եւ ազգակից մարմին կամաւ, եւ միացոյց յինքն անբաժանելի. եւ կայ քո ընդ աջմէ ինձ գրաւական գլուխ իմ եւ մարմնակից. յայս պատճառս համար-ձակիմ առ քեզ իբրեւ առ պարտա-կան իմ բազում իրօք:

Նաեւ վ՟ն այնորիկ թէպէտ եւ չա-րագործ լինին որդիքն՝ եւ բարկացուցանէ զՀայրն, քանզի գիտէ թէ՝ Հայրն ոչ տանջէ, եւ ոչ սպանանէ զորդին, եկ-եալ առ ինքն՝ զիջանի բարկութ՟ի ն՟ր, զի գալարին աղէք ն՟ր. Նոյնպէս արա-րի եւ ես՝ ով տ՟ր իմ եւ ա՟ծ. քանզի բազ-մապատիկ քան զաւազ վիրաւորեցի եւ տրտմեցուցի զքեզ անուղղայ եւ մոլո-րամիտ չար եւ ամբարիշտ գործովք ի-մովք. բայց 'ի դարձն իմ՝ անահ գամ առ քեզ. քանզի գիտեմ՝ զի անոխա-կալ ես, եւ ուրախանաս որ՟պ Հայրն 'ի վերայ որդւոյ:

Վ՟ն այսորիկ անկեալ կամ առաջի

-քոյ 'ի սբ. սիօնի՝ ա՛ծ իմ. և յամենեկե-
ղեցիս ուր և պատահիմ՝ դառն հա-
ռաչանօք սրտի իմոյ գոչեմ առ քեզ ան-
մռունչ և անձայն հեծուբ, և ասեմ.
հա՛յր մեղայ յերկինս և առաջի քո, ոչ
եմ արժանի կոչիլ որդի քո, կամ խոս
տովանօղողի անպատում զազրալի գար
շուբ ժահահոտեալ և թարախոտեալ
է անձն իմ բազում անօրէնուբ՝ մա՛ր-
դասէր ա՛ծ իմ գթա՛ յիս՝ և ջնջեա՛
զանթիւ յանցանս իմ, և ընկա՛լ սիրով
զդարձս իմ առ քեզ իբրև զանառակ
որդւոյն , և զայլոց յանցաւորացն՝
որք դիմեցին առ քեզ. ո՛չ և ուրախա
ցար 'ի դարձն նինուէացւոց՝ և դար-
ձուցեր զցասումն քո 'ի նոցանէ ։

Նոյնպէս գթով խնայեա՛ յիս ա՛ծ
իմ ամենահայր բարի, և կորզեա՛ զան
ձըն իմ 'ի միջոյ ժանեացն բելիարայ.
ջնջեա՛ զմեղս իմ՝ և ողջացո՛ զցասումն
նը, և սպեղանեա՛ զամ խոցեալ վէրս
հոգւոյս իմոյ. մի՛ բարկանար ինձ ի-
սպառ, և մի՛ ոխս պահեր 'ի սրտի քո.
թէպէտ և ես կրկին բարկացուցի ըզ

քեզ, քանզի հրամայեցեր թէ՝ միտք մարդկան խնամով երթան զհետ չարին. միոյ աւուր տղայն չէ՛ անմեղ, և ոչ կարէ արդարանալ առաջի քո տ՟ր մարդ, և զյանցուածս իւր ո՞վ կարէ առնուլ ՚ի միտ. և միածինն քո հրամայեաց թէ աշխարհ ՚ի չարի կայ, և ոչ կարէ կալ առաջի քո՝ թէ ՚ի քըննութ՟ մտանես, և ո՞վ է մարդ՝ որ ոչ մեղաւ. բայց միայն մարմինն այն՝ որ միացաւ ընդ քո ծոցածին որդին, նա մնաց անմեղ և անարատ. զի ոչ կարաց սատանայ ցցել զհրդեղեալ նետս իւր ՚ի միս նորա:

Հայր երկնաւոր՝ որ վ՟ս իմ ոչ խընայեցեր ՚ի քո միածին որդին, այլ ՚ի մահ նախատանաց մատնեցեր զնա. և արդ երկրպագութ՟ հող լինելով առաջի քո՝ տ՟ծ իմ, և աղաչեմ զքեզ. վ՟ս կրից որդւոյն քո խնայեա՛ յեղկելի անձն իմ, և ողորմեա՛ ինձ. և արդ՝ մեծ ամօթով ծածկեցի զանձն իմ, վ՟ս որոյ ոչ ունիմ խօսիլ առաջի քո, և ոչ ունիմ երես ՚ի վեր հայիլ առ քեզ. այլ զվէրս

և զմահ էակից որդւոյն քո՝ և զհեծու-
մըն ս͞րբյ հոգւոյն քո՝ առ քեզ բա-
րեխօս ունիմ։

Ո͞ այսորինկ ա͞ծ իմ քաւեա՛ զան-
չափ չարիս բոլոր անձին իմոյ. յամօ-
թոյն փրկեա՛ և ՚ի տանջանաց ազատ-
եա՛. և այն ինձ բաւական չա՛հ է և օ-
գուտ, զի ներես եղկելւոյս՝ և ՚ի մշտն-
ջենաւոր կիզմանէ հրոյն փրկես զան-
ձըն իմ. իսկ վ͞ս հանգստեան և պսա-
կաց փառաց ՚ի միտս անգամ ինչ ո՛չ
անկանի, և ո՛չ կարեմ հարկել զքեզ՝ զի
ո՛չ ունիմ պատասխանի բան մի, այլ
պապանձեալ լռեմ. զի հանգիստն փա-
ռաւոր պսակօքն նշ͞է՝ որք սպանին
զցանկութիւն աշխարհի, և խաչեցին
զմարմինս իւ͞ր կարեօք։

Հա՛յր ս͞բ վ͞ս անճառ խորհրդոյ նոր
սիօնի՝ որ է բոլոր ա͞ծութի քո, և զբո-
վանդակ ա͞մ ս͞բյ քոյ զչարչարանս՝ և
զմահ խոնարհութե՝ և զաստուածայինս
որդւոյն քոյ՝ և զմահն կենագործ յա-
րութե͞ն իւրով, զհեծումն և զգործակ-
ցութի͞ն ս͞բյ հոգւոյն քո, զայս ա͞մ բա-

րեխօս ունիմ առ քեզ՝ Ա՛ծ իմ հա՛յր երկնաւոր, գթա՛ յիս՝ և ողորմեա՛ ինձ, և մի՛ մերժեր զիս յերեսաց քոց․ զի թէ բարկանաս, ես կորնչիմ․ և թէ ո՛չ ընդունիս, ես ընկղմիմ։ և թէ վարես, ես յանդունդս իջանեմ․ այլ թո՛ղ զոր գործեցի չար, զի այս է գովութի քո 'ի ներելն, 'ի համբերելն, 'ի խնամով խըրատելն, 'ի դարձ կոչելն, յընդունելն, և 'ի ջնջելն զմեղսն, և յառաջիկայ որոգայթէն փրկելն․ կապեա՛ զմեքենայս չարին, և յամօթ արա՛ զչարասէր իշխանին նորա։

Եւ ո՛վ դու կամիս և սիրես՝ այնպէս հաստատեա՛ զիս 'ի հաւատս քո և ուղղոյ և սբյ հոգւոյդ և 'ի գործս բարիս․ և յօր մահուն իմաստնացո՛ զիս 'ի կամս քո, և այժմ զծերութիս իմ պահեա՛ անարատ 'ի հաճոյս քո․ և լե՛ր ինձ օգնական 'ի մարտս դիւաց․ զի ես հո՛ղ եմ և աճիւն առաջի քո Ա՛ծ, և քեզ փառք յաւիտեանս․ ամէն։

Ո՛վ մանկունք նոր սիոնի, մի է Ածութին երրորդութեն հօր և որդւոյ և

սրբոյ հոգւոյն. երեք անձինք կատարեալք, և անբաժանելիք միով բնութեամբ և կամօք և միով թագաւորութեամբ և արարչագործ զօրութեամբ։

Մ՚ինն է՝ անեղ և անծին՝ անսկիզբն և անվախճան՝ որ է հայր. և մինն ծնունդ՝ որ ՚ի սրտէն և ՚ի բնութենէն հօր՝ անմիջոց և անհատուած, անժամանակ և անախտ ծնունդ. և մինն բղխումն ՚ի բնութենէ հօր՝ անհատ և անմիջոց և անժամանակ. իսկ որդի և հոգի ընդմիւ համագոյ և հաւասարք են հօր աննախադրաբար բայց ՚ի հայրութենէն. զի հայր՝ միայն է հայր և կոչի, և որդի՝ միայն է որդի և կոչի, և հոգի՝ միայն է հոգի և կոչի. և հօր աստուածութիւն այս է միայն՝ զի պատճառ է որդւոյ և հոգւոյն սրբոյ. ապա մի քննել ական՝ ոչ աւագ է, և ոչ զօրաւոր քան զորդի և զհոգի. զի յաստուածութիւն ոչ մտանէ մեծութիւն և նուաստութիւն, կրտսերութիւն, կամ աւագութիւն. այլ և հոգի և որդի՝ ոչ են և ոչ ասին եղբարք, այլ են էակից և փառակից միմեանց,

և համագոյակից հօր աննախադաբար ։
Նա մինն յերից անձանց՝ 'ի վեր-
ջին աւուրս խոնարհեցաւ կամաւ 'ի
հայրական ծոցն, և առաքմամբ հօր
և գործակցութբ սրբ հոգւոյն էառ մար-
մին 'ի լուսաթաղանթ արգանդէ կու-
սին մարմնաւ, և եղև մարդ ճշմարիտ
առանց մեղաց, և միացաւ բնութբ 'ի
մարմնի անշփոթ և անբաժանելի ․ և
եբարձ 'ի մարմնոյն զամ կիրս՝ որ լինին
առ մեզ, զխարբելիս 'ի կերակրոց և յըմ-
պելեաց, բնութբ և ակամայ զախտա-
բար հոմունս, և զկամս մարմնոյն
բարձրացոյց՝ և ընդ կամաց բանին մի-
աւորեաց ․ զի յաղթեսցէ զօրաւորն
տկարագունին ։
Զի ոչ 'ի միանալ հրոյն ընդ եր-
կաթն՝ բառնի 'ի նմանէ սևութի և ցըր-
տութի երկաթոյն, և թոյլ տալով բա-
նին՝ կրեր մարմինն զկիրս մարդկայ-
նոյ, զքաղցն, և զծարաւն, զերկնչիլն
և զարտասուելն, և զայլն՝ ոչ գրեալ
են 'ի սբ աւետարանին ․ և զայս առ-
նէր վա այնորիկ՝ զի մի ձանձանչիցեն,

Թէ ճշմարիտ մարդ եղև առանց կար-
ծեաց, քանզի 'ի միանալ բանին 'ի մար
մինն, առի մի բնութ անշփոթ, մի կամք,
մի ներգործութի. զի նուաղ գործքն և
մեծամեծքն` բանին էին և մարմնոյն:

Քանզի բանն ած իւր միացեալ
մարմնովն գործէր զամ և իւրն հա-
մարէր, զի մարմինն իւր էր. ապա 'ի
նախատանացն և 'ի խոցմանէն` ոչ հա-
մանէր 'ի բանն ած. ոչ 'ի խոցելն և 'ի
կտրելն զմեր մարմինս` ոչ կարէ հասա
նիլ վէրքն 'ի մեր բանական հոգին` այլ
'ի մեր միացեալ մարմինն. և հուրն թէ-
պէտ միացեալ է յերկաթն` բայց զհա
րուածն կռանին երկաթն առնու` և ոչ
հուրն. և այսպէս անճառ էր մար-
դեղութիւնն քի:

Ոչ էր 'ի վր խաչին մեռեալ մար
մնով, և կենդանի ածութբն. և 'ի գե-
րեզմանին եդաւ մարմնով ստուգապս`
և կենդանի էր ածութբն. զի բանն ոչ
բաժանեցաւ 'ի մարմնոյն, և յայս հայե
ցան որքն` և զբանն մարմին ասացին
եղեալ, և զմարմինն` բանին մարմին.

և զորդին ա՟յ՝ որդի կուսին դաւանեցին. և զորդի կուսին՝ որդի ա՟յ. ոչ և հայրն վկայեաց թէ՝ դա՛ զոր տեսանէք մարմնով՝ է որդի իմ սիրելի, և կամարար և համագոյ. և նոյն մարմնովըն կայ բազմեալ ընդ աջմէ հօր, և գալոց է դատել զորդիս մարդկան ըստ իւրաքանչիւր գործոց. և նմա ընդ հօր և ընդ ս՟բ հոգւոյն վայելէ փառք իշխանութի և պատիւ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն ։

Առ ամենօրհնեալ ածածին կոյսն մարիամ, ՚ի տեղի ննջման ն՟ր, և ՚ի գերեզման ն՟ր. և ՚ի ձորն կեդրոնի. ՚ի խորոց սրտէ աղերս մաղթանաց վարդանոյ երգողի և ա՟մ մեղաւորաց ։

## Գ. Լ. ԺԲ.

Ո՛վ համագոյ ծ՟նութի հօր և որդւոյ և հոգւոյն ս՟բյ. փառաւորեմք զքեզ անոխակալդ՝ որ շնորհեցեր եղկելւոյս պատմել առաջի քո զանեզրական

տռփանախառն թարախ անձին իմոյ , զոր դու քաջ գիտես · բայց ուրախանամ 'ի դարձս և յապաշխարանս իմ, զի մարդասէր ես և ողորմած տէր :

Յաղագս այսորիկ ես եղկելիս յաջէ քումմէ դարձեալ կշտամբեալ խայտառակեմ զանձն իմ · և յետ այսքանեացս բազմաթախանձ մեղթանացս և յետ սրտի հառաչմանս՝ որ է վ̄ա իմ կատարե̄լ ամբարշտութ̄ս , զոր ոչ կեղծաւոր բանիւ վ̄ա գովեստի գրեմ · այլ զճշմարիտն ասեմ, ո՛վ և դու տ̄ծ վեկայես · նաև այս քո խնամք է , և զայս կամիս և սիրես · զի որ լսէ՝ նախատէ զիս , և դարձեալ թողու̄թ խնդրէ 'ի քէն · և դու ողորմած ես և ներես և ջնջես զմեղս իմ, զի սովոր ես՝ որ 'ի ձեռն այլոց աղաչանաց զայլս փրկես և կեցուցանես :

Ա̄ն որոց իջին 'ի խորս մտաց իմոց՝ և քննեցի և յիշեցի զչար զգործս իմ · և կամեցայ թուել զնոսա , և ահա բազում են քան զաւազ ծովու , և քան զշիթս անձրևաց · վ̄ա որոյ և լքայ՝ և յուսոյս

լոր կորեցաւ. զի թէ զերկինս մագա
ղաթ ձևեմ, և զա̃մ հովիտս 'ի նմա խառ-
նեմ, և զծովն համատարած թանաք
շինեմ, և զանթիւ անտառս գրիչ հա-
տանեմ, զմիտս անմարմնոցն առնում,
և ճշտիւ քննեմ զանօրէնութ̃իս իմ, և 'ի
հարիւրաւոր ամ նստեալ գրեմ, 'ի
կատարումն ոչ ժամանել կարեմ. զի
գրելոյն նիւթքն սպառին, և զիմ չա-
րիսն ոչ ժամանեն հաւաքել. այլ գան
և կուտին իբրև զաւազ՝ և լեռնացե̃լ
ծանրանան 'ի չափ ցամաք աշխարհիս.
քանզի բազմօրեայք և յոգնապատուղք
են գիւտական սերմանքն՝ որք ամրացան
յանձն իմ 'ի մանկութ̃է մինչև 'ի ծերու-
թ̃իս իմ, ուր մահն մերձեցաւ՝ և ա-
պաշխարութ̃ին հեռացաւ յինէն:

Ու դարձեալ յ՛ո տարակուսե̃լ
լինելոյս՝ և 'ի տրտմութ̃է, զմտաւ ածի
թէ՝ ոչ է պարտ անյոյս կորնչիլ, զի
ա̃ծ ողորմած է. և ապա խորհեցայ
թէ՝ ահա տեսանեմ, զի մարք և թա-
գուհիք թագաւորաց բազում մահա-
պարտս փրկէն. յաղագս այսորիկ ես

եղկելի անձամբ՝ և անկշռելի մեղօք եկեալ հասի ՚ի տեղիս ննջման քոյ ՚ի նը-սիօնա, և ՚ի գերեզմանի քո ՚ի ձորին կեդրոնի՝ ով ամենաօրհնեալ կոյս մարիամ և մայր բանին ա̄յ. հանգիստ հոգւոյն ս̄բյ՝ և տաճար հօրն լուսոյ. ՚ի վեր ելեր դուքան զա̄մ եղականս. զի ոչ ոք ընկալաւ զպատիւ քո ՚ի ստեղծուածոցս յ̄ոյ:

Ա̄ն որոց բարեխօսուն քո բարձր է և ընդունելի առ ա̄ծուր̄ին՝ քան զա̄մ եղելոցս, զի անճառելի պատուոյ արժանացար. քանզի էութ̄ և բնութ̄ ա̄ծ բնակեցաւ յորովայնի քում, և զգեցաւ մարմին ՚ի քէն՝ զոր ոչ կարեն տանել ա̄մ արարածք:

Ա̄ն որոց երեւս ՚ի գետին երկրպագութ̄ հող լիզեմ առաջի քոյ մայր ա̄յ իմոյ, և ցնծութ̄ համբուրեմ զտեղի ննջման քոյ և զգերեզմանն՝ ուր եդաւ ս̄բ և պատուական մարմին քո. և դառնակսկիծ հառաչանօք պաղատիմ առ քեզ մայր ա̄յ և կոյս, և ՚ի խորոց սրտէ անձայն գոչմամբ լծախանձեմ զքեզ. և դու բարեխօսեա՛ վ̄ս իմ առ որդին

քո յս՟ քս՟, զի ներեսցէ ինձ ողորմութբ՟՝ և մի՛ խսպառ բարկասցի ՚ի վր՟ իմ իրաւամբք. զի թէ իրաւամբք և արդարութբ՟ դատեսցէ զիս, վա՛յ է անձին իմոյ. զի ոչ կարեմ ապրել ՚ի մշտնջենաւոր տանջանացն, զի անբաւ և անթիւ մեղայ առաջի նորա:

Ապա՝ դու ունիս համարձակութի՟ բարեխօսել առ հայր և առ որդի և առ սբ՟ հոգին. և անյապաղ լսէ քեզ ածութին՟, և փութով կատարէ զոր հայցես ՚ի նմանէ:

Քանզի տեսանեմք, զի մարք և թագուհիք թագաւորաց՝ բռնութբ՟ յափշտակեն զմահապարտն. և ոչ ոք կարէ ասել ինչ, զի թագուհին և մայրն ընդ թագաւորին պատուին. ևս որչափ կողկողելով աղաչեմ զքեզ մայր այ՟, լեառն լուսոյ, և քաղաք ապաստանի, բարեխօսեա առ քս՟ վս՟ եղկելի անձին իմոյ, և աղաչեա զնա՝ զի մի՛ խսպառ բարկասցի ինձ. զի թէպէտ և բարկանայ, բայց յետոյ մեծարէ ըզծնօղդ իւր. զի հեզ է և ողորմած, և

սիրէ և կամի՝ զի հարկեսցես զնա . և դու ոչ մայր համարձակեալ ցոյց նմա զստինս քո սբ, և քո սբ կաթամբն հարկեալ զնա՝ ոչ և առնեն ծնօղք առ որդիս իւրեանց . մատո զմաղթանս առ հայր և առ միածին որդի և առ սբ հոգւոյն շնորհօք և ողորմութ՟ ջնջեսցեն զչարաչար մեղս անօրէնութ՟ իմոյ . և յահագին ամօթոյն և ՚ի դատն դժոխոցն փրկեսցեն զիս, քանզի ոչ ունիմ երես այլ ինչ խնդրել ՚ի քէն ։

Ո՛վ ածամայր և կոյս՝ զի անձառելի չարեօք խմովք դառնացուցի իմն՟ զածութին առաւել քան զդևսն՝ և քան զորդիս ադամայ . այլ դու ես իմ յոյս և ակնկալութի, և տեղի ապաւինի սատ և յօրն ահագին . նոյնպէս և ամ հաւատացելոց ։

Եւ արդ անկեալ աղաչեմ զքեզ մայր և կոյս, վն ամենօրհնեալ և ամենակեցոյց ծննդեան քոյ՝ ողորմեա եղկելի անձին իմոյ . վն որոյ օրհնեմ ըզ քեզ, և զանազան փառօք և պատուով մեծացուցանեմ՝ ասելով այսպէս ։

Պտուղն արքայութե՛, հանդիստ ար-
դարոց՝ և քաւարան մեղաւորաց, լոյս
լքելոց՝ և տապաւէն վհատելոց, դեղ
հիւանդաց՝ և կեանք մեռելոց, զօրու-
թի՛ տկարաց՝ և հաց քաղցելոց, վէմ
ապաւինի՝ և ջուր ծարաւելոց, հայր
որբոց՝ և մայր այրեաց, քաղաք ապաս
տանի՝ և եղբայր թիկնապահ, սափոր
ոսկի մանանային՝ և բուրվառ անուշա-
հոտ խնկին, տապանակ ա̃յ՝ և տախտակ
կտակարանաց ն̃ր, գաւազան ծաղկեալ՝
և ջրհոր կենդանի, դուռն փակեալ՝ և
պարտէզ կնքեալ, հարսն երկնաւոր՝
և լեառն վիմածին, ամպ լուսաւոր՝ և
կոյս փեսայածին, սիւն լուսոյ՝ և ծա-
ղիկ ծիրանի, վարդ բուրաստանի՝ և
քերթուած երկնային, և խնծոր 'ի դեղ
հիւանդի, կինամոն՝ և անուշահոտ
նարդոս, տաշտ խնկոց՝ և աղբիւր կնք-
եալ, հիմն և պարիսպ՝ պսակ և փառք
ո̃ք եկեղեցւոյ ա̃յ, մայր հաւատոյ՝ և
պարծանք կուսանաց, աթոռ քերով-
բէական՝ և առագաստ ա̃ծային, այ-
գի ցանկալի՝ և դրախտ ա̃ծատունկ,

ծով ծիրանածաւալ՝ և արևելք նի։

Ա՛ռ ածամայր՝ ամէն գերապատուե-
ցար ՚ի վեր քան զբնութիւն ․ զի զած ծը-
նար , սնուցեր և գգուեցեր զանսա-
նելին արարածոց ․ վն որոյ և բազմա-
չեայ քառակերպեան քերովբէքն ա-
հիւ քեզ երկրպագանեն , և սերով-
բէքն սարսին ՚ի քէն՝ դողալով։

Ա՛ռ ամենօրհնեալ մայր այ՝ այս է
իմ կարողութիւն, որ զորդին քո անարատ
սրտիւ հաւատար հօր և սբ հոգւոյն
դաւանեմ, և զքեզ մայր այ ճանաչեմ
ոչ պատշաճէ՝ և վայել ․ ով մայր այ՝
սրա և դու՝ զոր քեզ վայելէ , և օգ-
նեա ինձ յառաջ քան զատեանն ․ բա-
րեխօսեա վն իմ առ որդին քո՝ զի լը-
ւասցէ արեամբ իւրով զիմ ախտս և
պշտրաւս հոգւոյ իմոյ, և առ զանթերի
հաւատս իմ՝ որ է ՚ի քեզ՝ և յորդին
քո , ՚ի հայր նր՝ և ՚ի հոգին սբ ․ և մա-
սն ընծայ այ ծնուն , և բարեխօսեա վն
իմ ․ իսկ ածունի լսէ և կամի զայս ու-
րախութ , և զանձն իմ ազատեսցէ ՚ի
սպառնալեաց դժոխոցն ։

Ով մայր ա̄յ՝ գիտեմ զի օտարացայ ՚ի բարեաց, այլ վս̄ հաւատոյս խնայեա՛ յիս՝ և համարձակ աղաչեմ զնա, զի պարտական է քեզ. Թէպէտ և ա̄ծ քո է, և մեծ պատիւ պարգևեաց քեզ զի ծնար զնա՝ և սնուցեր և կաթամբ քո կերակրեցեր. Նոյնպէս և ես համարձակիմ առ քեզ իբրև առ պարտական իմ, թէպէտ և եղէր մայր ա̄յ իմոյ, ո̄չ և դաւանիմ զքեզ՝ և քարոզեմ, և գըրեմ, և յետ անձառ ծննդեան քոյ անարատ կոյս խոստովանիմ զքեզ՝ և օրհնաբանեմ. և հող լիզեմ առաջի քոյ՝ ո̄ր ա̄ծածին և կոյս, և աղաչեմ զքեզ ՚ի խորոց սրտէ անմռունչ հեծութ̄բ, զղջմամբ եղկելւոյս՝ և բարեխօսեա առ համագոյ և միաթագ ա̄ծութ̄ն հ̄ր և որդւոյ և հոգւոյն ս̄բյ. զի փրկեսցէ զիս ՚ի յանվախճան տանջանաց՝ և ՚ի սոսկալի ամօթոյն կեցուսցէ զիս բարեխօսութ̄բ քով:

Ո ի ո՛չ ունիմ երես՝ հարկել ըզքեզ՝ մա՛յր ա̄յ, կամ զա̄ծութ̄ն. զի կամաւ և գիտութ̄բ զա̄ծ բարկացուցի՝ իմ

դադրալն գործովքս, այլ այսու ուրա-
խացայց 'ի փառս ա̄ծուե̄ ն̄ր՝ եւ ծափս
հարից մեծ գոհաբանութե̄, զի ապրե-
ցայց յանվախճան տանջանացն․ ամէն։

Որդի ա̄յ եւ բան յո̄ քո̄՝ մեղայ յեր
կինս եւ առաջի քո՝ բարեխօսութե̄ ա̄մ
ս̄բց խնայեա՛ յանձն իմ սիրով, եւ սրբե-
եա՛ զա̄մ մեղս բանական հոգւոյ իմոյ՝
զոր դու գիտես՝ զի չար է, եւ տես․
եւ քեզ օրհնութի̄ եւ փառք յաւիտ-
եանս․ ամէն։

Հոգի ա̄յ ճշմարիտ ա̄ծ՝ մեղայ յեր-
կինս եւ առաջի քո, բարեխօսութե̄ ս̄բ
ա̄ծածնին քաւեա՛ զա̄մ մեղս մտաց ի-
մոց՝ զոր դու գիտես, եւ քեզ չար թուի․
եւ քեզ փառք եւ գոհութի̄ յաւիտեանս։

Համագոյ ս̄բ երրորդութի̄ անբա-
ժանելի ա̄ծ կատարեալ՝ մեղայ յեր-
կինս եւ առաջի քո, բարեխօսութե̄ ա̄մ
անմարմին զօրաց քոց՝ որք մնացին 'ի
կամս քո, գթա՛ մարդասէր յողորմել
անձն իմ, եւ մաքրեա՛ բոլոր ա̄ծութե̄ քո
զա̄մ մեղս՝ եւ զյանցանս բոլոր անձին
իմոյ, զոր 'ի բանական՝ եւ զոր յանբանա-

կանս · զոր յածայինս՝ և զոր 'ի մարդկայինս · զկամայն և զակամայն, զգիտութ և զանգիտութե, զընածինս և զեկամուտս, զոր յինէն՝ և զոր 'ի դիւաց · զոր դու գիտես՝ զի չար է, և ատես՝ որք ոչ են 'ի կամս քո · և քեզ վայելէ փառք իշխանութի և պատիւ, այժմ և միշտ և յաւիտեանս · ամէն ։

---

'Ի տեղի հաղորդման պետարանի առաջի յի քի, 'ի խորոց սրտէ մաղթանք աղերսանաց վարդանայ երգողի և իմ մեղաւորիս ։

## Գ. Լ. · ԺԹ.

Ածիմ յս քս՝ ձայն ընտանի, բան հայրենի, կոչումն կենաց, աւետիք փրկութե, հալածօղ տրտմութե, փարատօղ խաւարի, լուսաւորիչ հոգւոց · որ լուսաւորեցեր զեղկելիս ածայինս քո խնամատուք, և բարձրացուցեր 'ի կատարեալ բարիսն քո ։

Իսկ ես կամաւ խնուլ անկեալ խա-

ւարեցայ , և ահա պատեցան շուրջ
զինև դիւական որոգայթք՝ ընկղմիչք
և մահաբերք , խաւարադէմք և կա-
րիճք , մոլմոքօղք և սպանօղք հոգ-
ւոց , և ծնունդք վիշապին · որք ան-
դադար հարկանէին՝ և դեղէին զհոգիս
իմ , և յոյժ տառապեցուցանէին · ընդ որ
հիացայ և զարմացայ թէ՝ յորպիսի
խաւար թաղեցայ , և ոչ իմացայ ։

Վ̃ որոյ և սկսայ երկնչիլ դիւա-
շունչ յուսահատութ̃ , և տարակու-
սեալ ափշութ̃ թէ՝ չիք հնար զերծա-
նիլ ՚ի մեղաց · զի մինչև յօրս մահու-
հին աւուրց ծերութ̃ս դանդաչեցայ՝
և ՚ի մեղաց կապէ ոչ արձակեցայ ։

Եւ ապա ողորմութե̃ շնորհք քո
զարթոյց զիս · և խորհեցայ թէ՝ ոչ
վայելէ ադխտաբար կորնչիլ , զի ա̃ծ
քաղցր է · և յիշեցի ուրեմն թէ՝ ո̃պ
զպետրոս վերաբերե̃լ ՚ի խորոց՝ կանգ-
նեցեր զնա , ա̃ծ իմ յս̃ քս̃ , կեանք ՚ի
կենաց՝ լոյս ՚ի լուսոյ · վ̃յ և յարուցել
հաստատեցայ յուսով քով , և եկեալ
հասի ՚ի տեղիս և ՚ի խոր վիհս այսուր դա-

նախկին հառաչանօք ելաց պետրոս զկորուստ իւր՝ մեծ ապաշաւանօք։

Եւ երես ՚ի գետին անկեալ կամ առաջի քո՝ ա՟ծ իմ, և երկրպագութ՟ հող լինել ՚ի վ՟ր երկրի, և ՚ի խորոց սրտէ դառնակսկիծ և անմռունչ հառաչանօք գոչեմ առ քեզ՝ ա՟ծ իմ, և աղաչեմ զքեզ, բարեխօսութ՟ ամ՟ ս՟բց քոց՝ նա առաւել ս՟բյ պետրոսի վիմին աղաչանօք, ընկալ զդարձս իմ իբրև զպետրոսին, և ջերմացո՛ զսիրտս իմ ՚ի զղջումն իբրև զնորին, և տնկեա՛ ՚ի հոգիս իմ զկսկիծ և զապաշաւումն նր՟. որ՟պ զի արժանի եղէց իմանալ և ճանաչել զկորուստ իմ և զօտարանալն ՚ի քէն. և շնորհեա՛ ինձ անմռունչ հեծութ՟ գոչել առ քեզ վ՟ս չարեաց իմոց, և հայցել ներումն և թողութ՟ յառաջ քան զմահն. որ՟պ շնորհեցեր պետրոսի և աւազակին, պոռնկին և մաքսաւորին և այլոց բազմաց։

Ա՟ծ իմ յ՟ս ք՟ս՝ որ սակաւ մի թոյլ ետուր, և ՚ի քեզ առեր զխնամքն և զօգնութ՟ քո ՚ի պետրոսէ. և յայս պատ

ճառս՝ զի պերճաբանեաց հպարտութե՟ յանձն ապաստան եղեալ թէ՝ ես ոչ ուրացայց զքեզ. նաև վ՟ մերոյ օրինակի արարեր, զի մեք մի՛ յուսահատիցուք 'ի մեղանչելն մեր. ոպ՟ և հայրըն քո ընկալաւ զդաւիթ և զմանասէ և զանառակ որդին 'ի մեր օրինակ և 'ի յուսոյ հաստատութիւն:

Ա՟ծ իմ խնայեա՛ յիս՝ և մի՛ թողուր զիս 'ի խնամոց հայրական գթութե՟ց քոց, և հալածեա՛ յինէն զշունչ հըպարտութե՟ և կամապաշտութե՟. պահեա՛ զիս 'ի հնարից դիւացն՝ և փրկեա՛ 'ի չարեաց նց՟. և արեամբ քո քաւեա՛ զա՟մ չար գործս իմ, և թեթևացո՛ ըզ ծանրութ՟ի նր՟ 'ի հոգւոյ իմմէ՝ ա՟ծ իմ յ՟ս քս՟, կամք և սիրտ հօրն լուսոյ. որ 'ի գթիլ և 'ի կործանիլ քոյդ վիմն նո՟յն պետրոսի, աղաչեցեր զհայր՝ զի մի՛ իսպառ մղեսցէ զնա սատանայ:

Պաղատանօք մօր քոյ և կուսի՝ ա՟ծ իմ, խնայեա՛ յիս՝ և ողորմեա՛ ինձ. և թէպէտ ոչ ունիս կարիք՝ բայց աղաչեմ վ՟ իմ՝ և վ՟ ա՟մ մեղաւորաց զա-

Նըսկիզբըն հայր քո · զի քո բաղկաւ և զօրութբ և շնորհօք հոգւոյն սրբոյ զերծուցեր զմեզ 'ի ձեռաց և յորովայնէ և 'ի ժանեաց չար վիշապին · զի մի մղեսցէ զմեզ անյուսութբ՝ և կորուսցէ իբրև զյուդա և զփարաւօն և զայլս բազումս · այլ շնորհեսցէ մեզ յոյս զղջման, և ջնջեսցէ զթարախեալ և զշարաւեալ անձն իմ։

Վայ ինձ տէր իմ, զի տկարացաւ և անկաւ 'ի սակաւ մի հողմոյ՝ վէմն քո, և կործանեցաւ · աշտարակն ամուր խախտեցաւ, պարիսպն անդամանդեայ շրջեցաւ, ծառն բարձրահասակ յանկարծակի անկաւ՝ և ոչ իմացաւ · 'ի տկար բանէ խախտեցաւ՝ և ոչ գիտաց · ափշեցաւ իմաստութն, յիմարեցաւ հանճարեղն · որպ և առ մեզ լինի, յորժամ ծածկէ խաւարն և կործանիմք, ապա իմանամք թէ՝ 'ի խորս իջաք · Նոյնպէս և վիմին կատարեցաւ պատահումն և չարին՝ և ապա իմացաւ զկորուստն · և յարուցեալ փախեաւ 'ի տեղւոջէն, և ունէր ըղ-

նետն 'ի սիրտն հարեալ՝ որ դեղեաց և խոցեաց զնա. և իջեալ սաստ 'ի խոր մինչ նստաւ՝ ձեռն 'ի ծնօտն եդեալ. և հիանայր 'ի միտս իւր, և 'ի զարմանալոյն բեկաւ սիրտն՝ և ցամաքեցաւ արտասուքն. և ոչ կարէր հասանիլ 'ի միտ թէ՝ ստոյգ ուրացաւ զՏէրն, քանզի փութով եղև բանն. տագնապէր և նեղասրտէր՝ և խօսիլ ոչ կարէր 'ի չար պատահմանէն։

Եւ դարձեալ ինքն զինքն ասէր՝ և ոչ հաւատայր, թէ կատարեցաւ չարն գլխաւոր. և սակաւ մի 'ի խելս եկն, և թմբրութիւն դիւախառն փարատեցաւ 'ի սրտէն, և իմացաւ թէ՝ ստոյգ գերեցաւ 'ի չարէն. և ապա հայեցաւ 'ի նա Յիսուս, այսինքն՝ ողորմեցաւ նմա, և ետ զղջումն. և նա 'ի ծունկս իջեալ լայր դառնապէս, և 'ի դառն կսկծալի սրտի խոցոյն խածանէր ըղբազուկս իւր, ապաշաւէր և զբարձն ծնգացն ծեծէր՝ և հոսէր արիւն. և ափ ափի հարեալ վայ գոչելով անձին իւրոյ՝ հարկանէր զծնօտսն, և ձգէր

զմորուսն. հասեր արիւն՝ և ոչ խմա-
նայր 'ի սրտի կսկծոյն. և 'ի ջերմութե
սիրոյն յիշէր զվարդապետն իւր յս,
զի կարի քաջ սիրեր. և ոչ գիտէր
զինչ առնէր, զի մեծ էր վիշտն. վայ
ինձ՝ զի այնքան գնաց արտասուքն՝ որ
պակասեցաւ ջուր 'ի սրտէն, և արիւ-
նախառն գայր՝ և հասեր յաչացն. զի
յոլով էր ժամն՝ և մեծ էր վիշտն. և
այնպէս հառաչեաց՝ մինչև անկաւ 'ի
զօրութե, զի սաստիկ եհար՝ և տանջ-
եաց զանձն իւր. մինչև յարեաւ տրն՝
և կոչեաց զնա հրամանաւ, զի հա-
ստատեսցի սիրտ նորա։

Ո՛վ իմ յս քս՝ որ առեր զփորձ
տկարութե մարմնոյս, և ողորմեցար վե-
մին քո պետրոսի՝ ընդունելով զդարձ
նր, մեղայ յերկիցս և առաջի քո՝ ած
իմ, քո ողորմութեդ և հառաչանօք
պետրոսի՝ հայեաց յիս, և յիշեա զիս
իբրև զպետրոսն, և շնորհեա ինձ ջերմ
արտասուք և հառաչումն իբրև զնո-
րայն, և հաշտեա ընդ եղկելիս իբրև
ընդ նմա. և չարչարանօք և յարութե

քո՛ լուաւ զաղաղակն մեղս անձին իմոյ՝ որ բազմապատիկ չար և դառնագոյն է քան զպետրոսին, և հաստատեա՛ զիս 'ի կամս քո հաւատով և գործով և բարի մահուամբ, որով զվեհն քո զերանելին զպետրոս. և քեզ օրհնութի և փառք յաւիտեանս յաւիտենից. ամէն:

'Ի տեղի քարկոծման սրբյն ստեփաննոսի նախավկային. առաջի յի՛ քի՛ 'ի խորոց սրտէ աղերս մաղթանաց վարդանայ երգողի և իմ՛ մեղաւորայ:

## Գ. Ճ. Ի

Աբբայ ինքնակալ՝ և իշխան զօրեղ և մշտնջենաւոր ա՛ծ իմ՛ յի՛ քս՛, համագոյ հօր և հոգւոյն ս՛րբ. որ վ՛ն իմ՛ խոնարհեցար, և զիս 'ի դասս հրեշտակաց խառնեցեր՝ անուանակից և եղբայր քեզ արարեր զիս:

Իսկ առաջին մարդասպան վիշապն դարանակալ եղև մեղսաւէր դիւօքն նենգաւորօք, 'ի ձախն կատարեալ ե-

դեռնական չարեօք ընկղմէ զիս. և երբեմն յաջ կործանէ՝ որ հաւասար լինի ձախոյն. և երբեմն չար մտածութ՟ հեռացուցանէ 'ի քէն՝ և տանելի առնէ քեզ. վ՟յ ծանիր զոր քաջ գիտես՝ տ՟ծ իմ. զի անպատում տառապիմ 'ի մէջ երկուց կորստական վտանգիցս:

Նաև այս կարի ևս դառնագոյն է. զի անուն և պատկեր մարդոյ և գառին ունիմ, և գործք գայլանի և օձի՝ չար և դառն, զոր սիրէ և գովէ և համբուրէ վիշապն անիծեալ. և զոր ատէ հայրն բարի՝ նզովէ և 'ի բաց վարէ:

Վ՟ն որոյ և սարսեալ երկեայ 'ի դատաստանէ քո՝ տ՟ծ իմ, և լքայ յուսահատութ՟. զի հասի 'ի ծերութ՟՝ և 'ի ժանեաց վիշապին ոչ զերծայ, և մասին ապաշխարութ՟ ոչ հասի. այլ որքան և մահն գայ և գաղտաբար մերձենայ ինձ, ես 'ի չար գործս հակեալ քեզ ջանամ՝ և շաղախեմ զբոլոր անձն իմ 'ի կամս դիւացն. և ժամանակս ոչ է մարտիրոսութ՟՝ որ շնորհէ մկրտութ՟ արեամբ յանուն քո, որ

կարէ հաւատար՝ սբ̃ աւազանին սըր-
բել զթարախ մեղացն՝ և զայլին ան-
հետ առնել։

Եւ շնորհք քո ա̃ծ իմ՛ կալաւ ըզ
ձեռանէ իմմէ՝ կանգնեաց զիս, և ա-
սաց թէ՝ մի՛ վհատիր թերի մտօք. այլ
աներկմտութ̃բ արիաբար գնա՛ 'ի տեղի
քարկոծման առաջին վկային իմոյ, և
նա՛ ունի համարձակութ̃ի առ իս ար-
եամբ իւրով։

Յաղագս այսորիկ և ես սակաւ մի
մխիթարեցայ յուսով քո՝ ա̃ծ իմ՛, և
յարուցեալ 'ի խորոց կանգնեցայ, և
նման հողմոյ փութով եկեալ հասի 'ի
տեղի քարկոծման սբ̃յն ստեփաննոսի,
որ է սպասաւոր առաջին՝ և զինուոր
քաջ առ դրան մտիցն առ քեզ. որ
մեծ խորհրդով եթող սպանողացն՝ 'ի
քեն խրատեալ. և է մեզ ուսումն, զի
և մեք մեր թշնամեացն թողցուք. և 'ի
հանդէս նր̃ բացեր զերկինս՝ որ ետես
զփառս քո և վկայեաց. և զի նոր էր
գործն՝ ոչ̃ զի հաստատուն լիցի նց̃՝
որք կամիցին գալ առ քեզ։

Ա՟Ծ իմ յո̄ քո̄՝ անկեալ կամ ՚ի տեղիս ս̄ր̄բյն ստեփաննոսի, և երկրպագութ̄ հող լինեմ առաջի քոյ, և դառնակսկիծ անմռունչ հեծութ̄ հառաչելով պաղատիմ առ քեզ. վ̄ քոյ անպատում փառացն՝ զոր ցուցեր ծառային քում, խնայեա՛ յիս՝ և ողորմեա՛ եղկելւոյս, և արա՛ առ իս նշան բարութե̄ . ո̄վ և առ վկային քո ստեփաննոս. երևեցո՛ առ իս զշնորհս քո՝ և ամրացո՛ զիս ՚ի հաւատս քո և ՚ի բարի գործս իբրև զծառայն քո ստեփաննոս. և պարգևեա՛ ինձ համարձակ և աներկիւղ քարոզել զմեծութիւն քո:

Ա՟Ծ իմ՝ ո̄վ զնա լուսաւորեա՛ զերեսս հոգւոյ իմոյ. և բա՛ց զմիտս իմ տեսանել ծածկաբար զփառս քո և կքել ընդ աջմէ հօր քո. և զօրացո՛ զեղկելիս և զտարտամս և զհեղգս՝ համ բերել քարաձգութ̄ե̄ և նեղահարութ̄ե̄ դիւացն, որ անդադար խոցեն և դեղեն զբոլոր անձն իմ՝ ո̄վ և զօրացուցեր զծառայն քո. և տո՛ւր ինձ զըղջումն և հոգի անոխակալութ̄ե̄ և սիրոյ

տու քեզ, որով լինիմ կարող աղօթել տու քեզ՝ և թողուլ ատելեաց և թշնամեաց իմոց. որպէս և տայր նահատակն քո՝ ՚ի քէն ուսեալ։

Տ՜Ր իմ Յ՜Ս Ք՜Ս՝ ժամանակս ոչ է վկայութե, զի մահուամբ և արեամբ վկայեսցուք ա՜ծութե քո՝ որպէս և սուրբ նահատակն քո, և այլք անթիւք յետ նր. այլ և դու զօրացո զմեզ ՚ի կամս քո, որպէս զի կարասցուք համբերել քաջութբ և անոխակալութբ ամ՜ զրպարտութեց՝ քարկոծանաց՝ և անարգանաց՝ և գանից՝ որք գան ՚ի վր մեր ՚ի սիրելեաց և ՚ի թշնամեաց մերոց, յազգաց և յօտարաց, և ՚ի դառնութե դիւաց. որպէս զի այսու քաւեսցուք զմեղս և զնեղութիս յանուն քո անոխակալ սըրտիւ, որ է քերանք մարտիրոսական և սուրբ լուծման կապից մեղաց, և ազատման փրկանաց նահատակաց։

Տ՜Ր իմ Յ՜Ս Ք՜Ս՝ կողկողելով աղաչեմ զքեզ, և հայցեմ ՚ի քէն ամօթալի երեսօք, աղօթիւք և բարեխօսութբ առաջին վկային քո սրբոյն ստեփաննո

ակ և զո՛ հեղման արեան նո՛ր, ջնջեա զթարախեալ և զթանձրախիթ և խր-րև զձանձրախարիթ սևացեալ հոգւոյ իմոյ զմեղս, և զվէրսն քաղցրութե՛ քով ըսպեղանեաւ և թափեա զդառն թոյնս օձին. մի՛ բարկութե՛ խրատեր զիս ա՛ծ իմ, այլ ողորմութե՛ քով քաւ-եա յառաջ քան զատեանն. և մի՛ տար 'ի փորձութի՛ առաւել քան զկարն իմ. զի տկար հող եմ. հեղմամբ արեան ստեփաննոսիք քո որ վկայեն՝ և ո՛ւմ որոց քոց՝ խնայեա յիս, և յիշեա ողորմու-թե՛դ. զի դու ստեղծեր զիս 'ի պատ-կեր քո, և յետոյ գթացեալ առեր զիմ տկար և զհողեղէն պատկերս. մեղայ առաւել քան զաւազ ծովու բո՛լոր անձամբս.

Նազու՛մ գթութե՛ գթա յիս՝ և զօ-րացո զիս 'ի բարիս և 'ի կամս քո. զծէ բուժիս իմ ապաշխարութեան խուղու՛ն որ հա-ւատոյ և ջերմ արտասուաց խոնար-հութե՛ և անոխակալութե՛. ննջեալ խա-ղաղութե՛ 'ի կամս քո, և յառնել 'ի հը՛-չման փողոյ քո՝ անահ և աներկիւղ

'ի տանջանաց դժոխոցն, որով ուրա-
խացեալ գոհացայց զՔեն տ՟ր. և փա-
ռաւորութ՟ե օրհնեցից զՔեզ ընդ հօրն
լուսոյ և ընդ հոգւոյն ս՟բյ, այժմ և
միշտ և յաւիտ՟ենս յաւիտենից. ամէն։

*'ի պրօպատիկէ աւազանին՝ որ կոչի հինգ սրահ. առաջի յ՟ի ք՟ի 'ի խորոց սրտէ մաղթանք աղերսանօք վարդանոյ երգողի և ա՟մ մեղաւորաց։*

## ԳԼ. ԻՄ.

Արթուն ակն հօր և բնութ՟ե էա-
կից նմա և փառակից ս՟ր հոգւոյն՝ յ՟ս
ք՟ս, տ՟ծ անծանօթ, որ 'ի վերջին ա-
ւուրս երևեցար մարմնով՝ և ծանու-
ցար մարդկան ազգի։

Մերով հօրն քո և շնորհօք և զօ-
րութ՟ե քո յաշխարհի բժշկեցեր զցա-
ւս մարմնոց՝ որ նշանակեաց զողջութ՟ի
հոգւոց. և 'ի նոյն խորհուրդս եղեր
յեղէմ; և եկիր 'ի պրօպատիկէ աւա-
զանն՝ որ կոչի հինգ սրահ, ուր ջոկք

հիւանդաց կային անկեալ։

Եւ արդ՝ այս հինգ սրահս օրինակ էր մարդաշխարհի, և հիւանդքն՝ որդւոց ադամայ, ուր ամենքին անկեալ կային հիւանդացեալ հոգւով ՚ի մեղս հինգ զգայութեամբ։

Իսկ երեսուն և ութ ամեան օրինակ էր ադամայ. զի յոլովք բժշկէին՝ և նմա ոչ պատահէր. որպէս և այն՝ զի բազում արդարք երևեցան, և զադամ ոչ կարացին փրկել. մինչև եկն յս̃ քս̃, և ողջացոյց զհիւանդն զադամ։

Բայց և մեծ խորհրդով հիւանդն այն՝ քի̃ պահիւր, ՚ի խորհուրդ ադամայ և ՚ի վկայութե̃ փառացն քի̃. որպէս և ծերին սիմէոն, և յովհաննէս մկրտչին, և նախավկային ստեփաննոս։

Եւ յամ̃ ուրբաթու իջանէր հրեշտակն և շարժէր զջուրս աւազանին յաղբիւրս սելովմայ. և եռայր ջուրն ՚ի խորութե̃ ՚ի վեր գալով, և միայն մի ոք բժշկիւր՝ ոչ ունելով նշան ինչ հիւանդութե̃, որ ցուցանէր յառաջագոյն օրինակաւ զքի̃ փրկութիւն՝ որ յաւուր

ուրբաթու բարձրացաւ 'ի կառս խաչ-
չին՝ և հոսեցաւ ջուրն և արիւնն ե-
ռացմանէ 'ի կողամիջէն նր̃, և փրկեաց
զամ̃ ազգս մարդկան փոխանակ մեր
հիւանդին․ նաև 'ի խորհուրդ նր̃ ա-
ւազանին՝ որ լուաց և բժշկեաց ըզ
հոգիս հաւատացելոց ։

Եւ հրեշտակն՝ որ յուզէր և շրջէր
զջուրն, օրինակ էր հոգւոյն սր̃յ՝ որ
սրբէր զջուր նր̃ աւազանին․ գալն
քի̃՝ ազդեցոյց զգնալն նր̃ 'ի դժոխս,
և բժշկիլ հիւանդին՝ եցոյց զազատու-
մըն ադամայ, և բառնալ մահճացն օ-
րինակ էր՝ զի յայտնի լիցին փառքն
քի̃․ նաև 'ի խորհուրդն ադամայ, զի
առցէ զմահիճս իւր՝ և ելցէ 'ի դժո-
խոցն, և կայ մայրն մեր ազատեսցի՝
որով հիւանդացաւ նա ։

Բարկացան հրեայքն՝ զի շաբաթն
անգործ էր․ և բարկացաւ սատանայ
զի արձակումն ադամայ, զի դատարկ
ունէր զնա ծննդովքն կապեալ ։

Ո՛վ զարմանագործ անակնկալն և
անվախճան կենդանի նման հօրն քո

և ո՜րդյ հոգւոյն ա՜ծ իմ յ՜ս ք՜ս, որ ելեր ՚ի հօրէ՝ և ողջացուցեր զիս ՚ի դառըն հիւանդութ՜եց հոգւոյ և մահճի մարմնոյ․ իսկ չարին խաբէանօք և իմ յօժարութ՜բ դարձեալ հիւանդացայ բոլոր անձամբ իմով ՚ի պէս պէս և յանտանելի հիւանդութիւն մեղաց բազմաց և գլխաւորաց չարեաց՝ բազմապատիկ քան զա՜մ որդիս մարդկան, և դառնագոյն քան զդևսն՝ որք են ծնօղք և ծնուցիչք և յորդորօղք ա՜մ մեղաց ։

Արդ տեսի յանձն իմ, զի ահա օր քան զօր աճեցան և ծանրացան ՚ի մ՜ջ հոգւոյս նման լերանց զազրալի ախտք գէշք և հրայրք, սատանայեալք և արիւնալերալք, պղնձաժանգք և շարաւագործք, ձանձրախառնիթք և կապարտասեսակք, դարշատեսիլք և չարաչհոտք, օձակերպք և արիւնարբուք, պատառօղք և հիմնաշրջքղծընկէցք և դաշտակորոյսք, մարմաջօղք և փափաշօտք, ախտալեցիք և այլ անբաչարիք դիւականք՝ որք ամրացան յանձըն իմ անզերծանելի ։

Իսկ ես եղկելիս ո՛չ գտի այլ ինչ հնար փրկութե՛ իմոյ. բայց միայն զայս, զի տուեալ զմեղս իմ, և եկեալ հասի 'ի տեղի բազմամեայ հիւանդին, զի գըտից զձրի բժիշկդ՝ որ ողջացուցանես զեղկելի հիւանդս 'ի չարաչար ախտից։

Առ որոյ անկեալ կամ առաջի քո տ՛ծ իմ, և երես 'ի գետին երկրպագութե՛ հող լինեմ 'ի վ՛ր երկրի, և 'ի խորոց սրտէ իմմէ հեծեծանօք աղաչեմ, և հայցեմ 'ի քէն բարեխօսութե՛ տ՛մ ընտրելոց քոց՝ և՛ս առաւել մօր քո և կուսի՝ ողորմեա՛ ինձ տ՛ծ, և է՛ջ խոնարհութե՛ առ եղկելիս՝ որ ո՛չ յերեսուն և ութից ամաց միայն եմ հիւանդացեալ, և ո՛չ ութն և տասնամեայ եմ կործանեալ. այլ 'ի վաթսուն և մի ամաց եմ գերեալ և կապեալ 'ի չարէն, և եղեալ կամ հիւանդ և կործանեալ և լուծեալ անթուելի մեղօք և անօրէն ամբարշտութե՛ 'ի կամս չարին. և կապեալ յերկուց ոտից կթոտ ծնգովք և լքեալ ձեռօք հոգւոյ իմոյ. և հրամայեա՛ իշխանաբար 'ի բա՛ց գնալ յինէն տ՛մ

ցաւոցս, և ջնջեա՛ զձանձախարիթ և զարիւնախառն շարաւ բոլոր անձին իմոյ. և ողջացո՛ զիս ա͞ծ իմ յա͞մ չարեաց իմոց, և զօրացո՛ զհոգիս իմ. զի առցէ զմայր իմ՝ որ է մարմինս, և 'ի բաց յարիցէ և փախիցէ յա͞մ ախտից դիւականաց, ողջացեալ և ապաքինեալ. և համարձակ շրջեսցի ուրախ և պայծառ սրտիւ և դիմօք 'ի մէջ խաբօղ կենցաղոյս. ո͞պ զի պատառեսցին դեւքն 'ի մախանացն՝ և ասիցեն, թէ դու 'ի շաբաթ կայիր՝ որ է անգործ 'ի բարեաց, և դատարկ 'ի զղջմանէ:

Արդ՝ ասա՛ մեզ, թէ ո՞վ է նա՝ որ ողջացոյց զքեզ, և սրբեաց ձրի և անաշխատ. իսկ ես ո՛չ անդիտանամ ըզ քեն՝ ո͞պ հիւանդն այն, զի նա ո՛չ էր ծանօթ քեզ. այլ՝ համարձակ գոչեմ և ասեմ առ նոսա, թէ պա՛րտ է ձեզ հերձնուլ 'ի նախանձուէ, ո͞պ եղեն հրէայքն. քանզի ստեղծիչն իմ խոնարհեալ վ͞ն իմ՝ ձրի բժշկեաց զիս. զի դուք ընդ վայր և ձրի մեղուցեալ կորուսիք զադամ՝ զհայրն իմ:

Յաղագս քո մարդասէր խնամոցդ յայս խորհուրդ` ա՟ծ իմ յ՟ս ք՟ս, գթա ցիս և փրկեա զիս 'ի հնարից դիւացն, և ապրեցո յորոգայթից նոցա` զի նենգաւորք են. շնորհեա ինձ կարողութիւն առնել զկամս քո` և յաղթել ծածուկ մեքենայից նոցա. անկեալ 'ի սիրտ իմ զսէր քո և զերկիւղ, որով ատեցից զբոլոր աշխարհս ցանկութբ իւրով, և'ի ժամանակս ծերութեան յայս չարեօք կամակոր մեշայլին. և ոչ գտցի առ իս ոյժ ապաշխարութե.

Աղաչեմ զքեզ ա՟ծ իմ, շնորհեա ինձ զզղջումն և զջերմ արտասուս խոնարհութեան և անոխակալութեան և ուղիղ հաւատոյ, և այսու օծեա և սնո զծերութիւն իմ` զի գին ս՟բ արեան քոյ եմ. և յօր մահուն` որ՟ դու սիրես և կամիս` այնպէս պատրաստեա զիս, քաղցրութբ աւանդեա զիս. 'ի ձեռս քո պահեա, յամօթոյն փրկեա, և 'ի տանջանաց ազատեա. զվիշապն հալածեա, և ըղդեան կապեա, զորդիս ադամայ 'ի հրոյն փրկեա, և մեղաւորացս զզղջումն շնորհեա. զարդարս պահեա, և

զտուն թորգոմայ հոգւով և մարմնով
զարդարեա՛ ’ի կամս քո · զատելեացն
իմոց զմեղսն ջնջեա՛, և բարեկամացն
ողորմութի̃ պարգևեա՛ ա̃ծ իմ յս̃ քս̃ ·
միանձանց քաջութի̃, քահանայից ամ-
բութի̃, վանորէից հաստատութի̃, ժողո-
վրդոց ’ի բանին ունդրութի̃, դատաւո-
րաց ուղղութի̃ յիրաւունս, զօրավարաց
քրիստոնէից յաղթութի̃, իշխանաց մեծա-
մտութի̃, թագաւորաց կարողութի̃, ա-
ռաջնորդաց անբասիր քարոզութի̃՝ և
ճշմարիտ վարուք խնամածութի̃, գիտ-
նականաց գործակալութի̃՝ և ’ի բարին
առաջնորդութի̃ · և զամենն մեօք հան-
դերձ ’ի հրոյն փրկեա՛, և զբան գրոցս
լուսաւորեա՛ ’ի միտս լսողաց ա̃մենուն։
Եւ ուր ընթեռնուն զսա, զխնդ-
դիրսն կատարեա՛՝ և զմեղսն ջնջեա՛,
և հոգի զղջման ’ի բանն գրոյս տպա-
ւորեա՛, ’ի շահ լսողացն և ’ի փառս ան-
ուան քոյ՝ ա̃ծ իմ յս̃ քս̃ · որ ես օրհ-
նեալ և փառաւորեալ ընդ հօր և ընդ
հոգւոյն ս̃բյ յա̃մ առաքածոյն, այժմ և
միշտ և յաւիտեանս յաւիտենից · ամէն։

Վարդանայ վարդապետի ասացեալ աղօթք՝ վ̅ն կենդանեաց և հանգուցելոց։

## ԳԼ. ԽԲ.

Ո՛ւնկնդրեա ա̅ծ՝ որ վ̅ն մոլորեալ բնութեան մարդկան խոնարհեցար ՚ի հայրական ծոցոյ, և առեր մարմին յանարատ կուսէն մարիամայ. զի զմե-ղօք մեռեալսն կենդանացուսցես, և զօտարացեալսն ՚ի քէն դարձուսցես, և զմոլորեալսն գտանիցես։

Արդ՝ ես տառապեալ ծառայս քո անկանիմ առաջի ս̅բ խորանի քո՝ յորում կենաց և փրկութե̅ մերում բաշխի կերակուր. և հայցեմ արտասուաթոր պաղատանօք, մի՛ թողուր զիս ՚ի պատուիրանաց քոց հեռանալ. այլ յորդորեա՛ առաւելուլ յա̅մ գործս բարիս առանց մեղաց։

Մի՛ մատներ զիս Տէ՛ր ՚ի ցանկութի̅ մեղաց՝ և ՚ի հեշտութի̅ կենաց. ՚ի քուն աչաց՝ և յաղտեղութի̅ մտածութե̅ց. այլ պարսպեա՛ երկիւղիւ՝ և ամրացո՛ յա̅մ

չար դիւաց և յաշխարհ՟կին զբօսանաց։

Մի՛ յապաղեր տ՟ր խնամ տալ ինձ ըզ փրկութ՟ հոգւոյ՝ և զջերմութ՟ սիրոյ, զպարկեշտութ՟ մարմնոյ՝ և զըղխումն արտասուաց, և անդադար աղօթելով՝ զխոնարհութ՟ և զհեզութ՟։

Յաղթեա՛ տ՟ր հակառակորդին իմոյ, և զօրացո՛ զիս ընդդիմակաց լինել պատերազմողին ՚ի վերայ իմ ՚ի տուէ և ՚ի գիշերի։

Զգեցո՛ ինձ տ՟ր զբան հաւատոյ՝ պահօք և աղօթիւք սրբել զախտս ցանկական, առնուլ զշնորհս բժշկական. տո՛ւր ինձ տ՟ր տեղի ապաշխարութ՟՝ և հանդիստ աշխատութ՟, հոգի խաղաղութ՟՝ և ճանապարհ արդարութ՟, զէն ամրութ՟՝ և պահապան փրկութ՟, հաստատութ՟ և երկիւղ պնդութեան։

Անցո՛ զիս տ՟ր ընդ հոսանս մեղաց խորաթափիչ ծովահեղձ ցանկական կենցաղոյս. ՚ի լոյս աչաց, ՚ի հանդիպումն շնորհաց, ՚ի շաւիղս արդարութեան ճանապարհի։

Շնորհեա՛ ինձ լոյս աչաց՝ և հո-

սուգն արտասուաց, սուգ մեղաց՝ և
ապաշխարութեան ողբերգաց, դողութեան տան-
ջանաց՝ և ճանապարհ կենաց, և ան-
դադար հաճոյական պաղատանաց:

Մնացո՛յ զիս Տ՛ր ՚ի պահպանութեան
պատուիրանաց, ՚ի ժուժկալութեան որո-
վայնի խմում, ՚ի մարտս պատերազմի՝
և ՚ի յաղթութեան սատանայի, մեռանել
՚ի մարմնի՝ և պայծառանալ հոգւով:

Յորժամ զերկինս գալարես՝ և ըզ-
լուսաւորս նսեմացուցանես, փող հար-
կանես՝ և զմեռեալսն զարթուցանես,
զերկիր դողացուցանես՝ և զտիեզերս
՚ի մի ժողովես, զդատողական աթոռս
դնես՝ և զերկոտասան առաքեալսն
նստուցանես, անաչառ դատաստա-
նաւ դատես՝ և զարդարութեան պահան-
ջես, զկամարարն պատուես՝ և զպա-
տրաստմէքն պատուհասես, զարդարսն
փառաւորես՝ և ընդ աջմէ քումմէ նըս-
տուցանես, զձախոյն պատկես՝ և զի-
մաստուն կուսանն զարդարես, յի-
մար կուսանացն զդուռն փակես՝ և ՚ի
ձայնէ փեսայիդ հալածես, զօձ խան ՚ի

քեզ ընտրես՝ և զայծիսն 'ի քէն 'ի բաց մերժես և 'ի հուր գեհենին առաքես։

Ա՛յ ինձ հազար բերան · յայն-ժամ բա՛րերար և մարդասէր փրկիչ՝ գթա՛ 'ի հոգիս ննջեցելոց՝ որք ընդ-ամ ակնկալեալ հաւատով 'ի քեզ ննջեցին , զորս գնեցեր արեամբ քով սր-բով · և ջնջեա՛ զձեռագիր յանցանաց ամ մկրտելոցս 'ի քեզ , և թո՛ղ զամ պարտիս յանցանաց նց՝ զկամաց և զա-կամաց , և ընդ-աջմէ քում դասեա՛ , և զերանաւէտ ձայնդ լսել՝ տուր , թէ եկա՛յք օրհնեալք հօր իմոյ, ժառանգե-ցէք զպատրաստեալ ձեզ զարքայութի։

Արդ՝ ընկա՛լ զաղօթս և զխնդրը-ուածս իմ՝ որ պաղատիմ և հայցեմ 'ի քէն վս իմ և վս բազմաց · մի՛ դարձու-ցաներ զերեսս քո 'ի խնդրողէս , այլ խոնարհեցո՛ զունկն քո յաղաչանս իմ. լո՛ւր ինձ մարդասէր տր , ցո՛յց ինձ ըզ-սովորական քո մարդասիրութիդ , և խնայեա՛ 'ի մեղաւորս · զի դու ես ած ապաշխարողաց՝ և հանգիստ աշխա-տելոց · և քեզ ընդ հօր և հոգւոյդ-

սրբոյ վայելէ փառք իշխանութիւն
և պատիւ , այժմ և միշտ և յաւի-
տեանս յաւիտենից • ամէն ։

## Վ Ե Ր Ջ

С.С.Р.А. Публичная библиотека
7/II–1922

# ՑԱՆԿ

Յառաջաբանութիւն Նորոգ տպագրութեանս ։ երես ա̃
Յառաջաբանութի̃ Նախկին տպագրութե̃ն ։ զ̃

ԳԼ. Ա

'Ի տեղիս աւետման և յղութե̃ ս̃ր կուսին ։ 2

Բ

'Ի մտանելն 'ի տուն զաքարիայ և 'ի տալն ողջոյն եղիսաբեթի ։ 7

Գ

'Ի բեթլեհեմ 'ի յայրին առ մսրովն ։ 11

Դ

'Ի տաճարին քառասնօրեայ՝ առաջի յի̃ ։ 19

Ե

'Ի գնալն յեգիպտոս, 'ի դառնալն 'ի նազարեթ, և 'ի տաճարին գալն ժ̃բամեայ ։ 26

Զ

'Ի յորդանան գետն՝ առաջի յի̃ ք̃ի ։ 36

Է

'Ի լեառն փորձութե̃՝ առաջի յի̃ ք̃ի ։ 47

Ը

'Ի լեառն Թաբօրական, 'ի ծա̃ն այլե-ւակյան, և 'ի Ջրհորն յակոբայ ։ 58

Թ

’Ի բեթանիա, ’ի լերան ձիթենեաց, յա-ւանակն և ’ի տաճարն ։ 69

Ժ

’Ի ս̅ր վերնատունն՝ առաջի յ̅ի ք̅ի ։ 81

ԺԱ

’Ի ձորն կեդրոնի և ’ի տեղիս ծնրադ-րութեան յ̅ի ։ 87

ԺԲ

’Ի տեղիս ըմբռնման, և ’ի ձաղանանս յ̅ի ։ 93

ԺԳ

’Ի խաչին բարձումն և ’ի գողգոթայն սարսափելի ։ 100

ԺԴ

’Ի դուռն ա̅ծընկալ ս̅ր գերեզմանին ։ 110

ԺԵ

’Ի լերան ձիթենեաց՝ ուստի համբար-ձաւ քրիստոս ։ 121

ԺԶ

’Ի ս̅ր սիօն վերնատունն առ ամենաս̅ր հոգւին ս̅յ ։ 132

ԺԷ

’Ի սուրբ սիօնն ահաւոր առ ամենա-հայրն ա̅ծ ։ 143

ԺԸ

'Ի տեղի ննջման որ կուսին, և 'ի գե-
րեզման նորա: 157

ԺԹ

'Ի տեղի հառաչման պետրոսի: 167

Ի

'Ի տեղի քարկոծման սրբոյն ստեփաննոսի: 174

ԻԱ

'Ի պրօպատիկէ աւազանին: 180

ԻԲ

'Ի յիշատակ կենդանեաց և ննջեցելոց: 188

# ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Փառք պատիւ և գոհութիւն ամենասրբ երրորդութեան և մի ածութեն հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ, որոյ շնորհիւ և մաքուր բարեխօսութեբ սբ ածածնի միշտ կուսին և կենաղօր սբյ խաչին և ածմ սբց՝ ՚ի տիպ արձանացաւ գրքոյկս աղօթից՝ որ առ տնօրինական սբ տեղիս յի քի այ մերոյ։

Արդ՝ որք հանդիպիք սմա կամ ստանայք, յիշեսջիք ՚ի մաքուր աղօթրս ձեր զտպել տուող սորին ըղմահտեսի տէր առաքել մեղապարտ քահանայս մայր եկեղեցւոյ, և զորդին իմ զտէր յակոբ քահանայն՝ և զորդին, զմիւս որդին իմ զտիրացու վարդանն և զորդին, զդուստրն իմ զերանուհին և զորդին, զեղբայրն իմ զնիկողայոսն և զորդին և զթոռունսն և զայլ ամ կենդանիսն իմ։

Յիշեսջիք և զննջեցեալս, զհոգևոր ծնօղս իմ զտէր Յօհաննէս ածաբան Պատրիարքն կոստանդնուպօլ-

սոյ ։ զմեծ հայրն իմ յակնայ կամր-
կալ գիւղէն Թեվէքելեանց գրիգո-
րըն , զհայրն իմ զմահտեսի ա̃ծա-
տուրն , զմայրն իմ զաննայ բար-
պաշտուհին , զերիցակինն իմ զա̃ծսի-
րուհի թագուհին և զհայր Նորին
յօհաննէսն և զմայրն գայիանէն ,
զդուստրն իմ զսողօմէն ; և զայլ որ-
դին իմ և զթոռունս և զա̃մ ննջե-
ցեալս՝ որք ՚ի տ̃ր ննջեցին ։

Ո՜վ և դուք յիշեալք լինիջիք ա-
ռաջի յի̃ քի̃ անմահ Թագաւորին յա-
հեղ և յանաչառ ատենին , և անթա-
ռամ պսակացն արժանասջիք ։ ամէն ։

ל״ל